Օ Ր Ա Գ Ի Ր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Այսուհետև ոչինչ Եգիպտոսեան խորամանկ քուրմեր, որ կամէին լինել գիտութեան միայնակ պահապանքը. այսուհետև ոչինչ Չինէական պարիսպ, որ պիտոյ է փակէր լուսաւոր գաղափարների մուտքը ազգերի մէջ։ Այսուհետև լոյս և ճշմարտութիւն և ազատութիւն խաւարի բարեկամնեան գերութենից։

Ս. Նազարեանց։

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԳՆԱՑՔ.

ՆՈՅԵՄԲԵՐ 1858 ԹՈՒԱԿԱՆԻ.

ԱՄՍԱՏԵՏՐԱԿ 11.

ՄՈՍԿՎԱ

Imprimerie d'Ernest Barfknecht.

1858.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ.

ԿՈՄՍ ՄՕՆԳՕՄՄԵՐԻ.

(Թարգմանութիւն Ֆրանսիական բնագրից Լուէն դը Լավալէ.)

Ա.

ՊԱՏԵՐԱԶՄԸ ՍԷՆ-ԴԵՆԻ ՔԱՂԱՔԻ ՄՕՏ։

1567 Թուականի մի մութ, գորշագոյն Նոյեմբերեան երեկոյի պահուն լսելի էր երկար տեւողական աղմուկ Սէն-Դենի քաղաքի մեծ դաշտավայրումը. իսկոյն դորանից յետոյ տեսանվեցան որպէս թէ վառած ջահեր, որ վազվզէին այս կողմ ու այն կողմ, ապա մեծ մեծ կրակներ, որ դուրս փայլեցան ամրոցների տափարակ տանիքների, փառաւոր մայր եկեղեցիների ճեմելիքի և թոյլ բերդապարիսպների վերայ, և այս տեսարանին լրութեան պսակ տալու համար, օրհասական զանգակը իւր տրտում հնչիւնով լցուց օդը։

Ֆրանսիայի վերայ եկաւ այն միջոցին մի զարհուրելի անցք։ Հագիւ թէ օտարականների ոտքը դուրս էր դրած Ֆրանսիական հողից, և ահա քաղաքական պատերազմը միւսանգամ հեղեղեց բոլոր աշխարհը արիւնով։ Կրօնը, այս գեղեցիկ, երկնաքաղաքացի դուստրը, որ պիտոյ է եղբայրսիրութեան կապովը զուգաւորէր մարդկութիւնը, գործ դրըվեցաւ որպէս մի ահաւոր ատելութեան պատճառանք. կրօնական խղճի

ազատութիւնը յետ պահվեցաւ այլադաւաններից, սկսեցին աքսորել Պրոտեստանտեանքը, և Բարթողոմեան գիշերը, այս անջնջելի ամօթի կեղտը, Կաթարինա Մեդիչիսի ձեռքով պատրաստվումէր նորա գաղտնախորհուրդ աղօթարանի մէջ։

Պրոտեստանտեանքը և կաթոլիկքը, Բուրբօնեանքը և Վալօայքը, որ մի մօտ դէպ ի շիջումն արքայական տուն էր, այլև Գիզեանքը և Շատիլիօնեանքը· սոքա բոլորը կլանումէին անբաղդ Ֆրանսիան, մինչ միւս ազնուականքը ժողովումէին, ինչ որ մեծամեծքը իւրեանց արիւնոտ ճանապարհի վերայ յետ էին թողել։

Այս խառնակութեան մէջ, դեռ ևս մի քանի ականաւոր մարդիկ չափի ու սահմանի տակ էին պահում միտքերը և առարկայքը, բայց և այս ազնուամիտ մարդիկը չունէին այնքան հաւատ կամ մեծահոգութիւն, որ այս ողբալի կռիւը վերջացնէին, ցած դնելով զէնքը։ Ինքնասիրութիւնը և սուտ պարծանքը թոյլ չէին տալիս նոցա ընթանալ այդպէս. նոցա բնաւորութիւնը չէր այնպէս մաքուր, այնպէս ազնիւ, որ նոքա կարողանային իւրեանց պատուասիրութիւնը զոհ բերել Հայրենիքի բաղդաւորութեան համար։ Եթէ Աւետարանը միայն բորբոքած լինէր այդ վէճը որ մերկացուցել էր այնքան սուրեր, ապա այս աստուածեղէն գիրքը ունեցած կը լինէր և կարողութիւն խաղաղացնելու կռուողների սիրտը։ Բայց ծածկաբար մի բաժինը հրապուրված էր թշնամիների անչափելի հարստութեամբքը, իսկ միւս բաժինը սնուցանումէր իւր մէջ մի չափազանց քաղաքական պատուասիրութիւն.

Այս տղամարդերի մէջ որ թեթևապէս յառաջացուցինք վերևում, նախակարգ տեղ ունին Բուրբօնեան ազգատոհմի քաջ մարդ, իշխանազն Կոնդէ Լուդովիկոս առաջինը, ծովապետ Կօլինյին, Գիզեան դուքսը, հին կոննետաբլ Մօնմօրանսի, լա Նու և Գաբրիէլ Լօրժէս կոմս Մօնգօմմէրի։

Կոնդէ իշխանազնը հրամանակալ էր Կալվինեան զօրագնդին. նա էր այս անբաղդ բաժնի յոյսը. գործակից էր նորան Կօլինյնի զօրապետը, որ կրթել էր Կոնդէին, իւր խորամիտ քաղաքագիտութեան համար։

Որովհետև Կալվինեանքը Մեդիչեան Կաթարինայի դարանագործութենից անճարացած դրութեան մէջ էին, այս պատճառով Կոնդէն հաստատեց մտքումը, ձեռք ձգել Կարոլոս իններորդին, որ գտանվումէր Մօ քաղաքի մէջ, այն խորհրդով, որ նորա բռնաւորական կարգադրութենների ճանապարհը խափանէ։ Բայց այդ խորհուրդը անյաջող գտանվեցաւ, ըստ որում մի Շվէյցական զօրագունդ վերայ հասանելով, առաւ թագաւորին իւր մէջ և յաջողապէս հասաւ Փարիզին։

Իշխանազն Լուդովիկոսը տհաճ լինելով այս անյաջողութեան վերայ, կամենում էր սովամահ անել Փարիզը։ Թագաւորի մայր Կաթարինան կամելով առ ժամանակ մի զբաղեցնել Լուդովիկոսին, պատգամաւորք ուղարկեց նորան դիւանապետ Լ՛ Օպիտալը և մարշալ Վիէյլվիլը. բայց իշխանազը յետ ուղարկեց նորանց, և երրորդ անգամը միայն մօտ թողեց Կաթարինայի դեսպանքը և առաջարկեց այնպիսի խնդիրներ, որոնց կատարումը պահանջում էր բոլոր միւս բաներից յառաջ։

Բայց, որովհետև Կաթարինան այդ պահանջողութիւնքը չափազանց գտաւ, սկսեց ծածուկ պատրաստվիլ դէպ ի պատերազմ։ Ֆրանսիայի դրութիւնը չփոխվեցաւ ոչինչ բանով։ Գիզեան դուքսը Օրլէանի առաջև սպանվեցաւ Պօլտրօյի ձեռքով. Ներհակ բաժինները օրէ օր աւելի դառնացան միմեանց հետ։ և ծեր Մօնմօրանսին, որ դուցէ թէ ցանկանում էր խաղաղութեան բոլոր միւսերից առաւել, մտածում էր, թէ մի հաշտողական խորհրդակցութիւն իշխանազն Կոնդէի հետ աւելի բարւոք էր, քան թէ մի յաղթութիւն։ Տէրութեան խորհրդականքը և թագուհին հաւանեցան այսպէս վճարել գործը, և փոքրիկ գիւղը լա Շապելլ անունով, որոշվեցաւ որպէս տեղի հաւաքվելու։ Բայց բոլոր հաշտախօսութիւնը զուր և անպտուղ գտանվեցաւ, որովհետև Հուգենօթքը չկամեցան, առանց կրօնական ազատութիւն շնորհելու նոցա, հաշտութեան դաշն կապել, և ծեր կոննետաբլ Աննէ դը Մօնմօրանսին չկամէր ամենևին խոստանալ մի այդպիսի ազատութիւն։

Իշխանազն Կոնդէն ժողովեց բոլոր Կալվինեանքը իւր դրօշակի տակ, և պատրաստութիւն տեսաւ պաշարելու Փարիզը։

Մի արքայական զօրագունդ, որին առաջնորդում էր կոննետաբլը, բանակ հաստատեց Սէն-Դենի քաղաքի դաշտումը, և այսպէս էր իրողութենների դրութիւնը, երբ որ օրհասական զանգակը հնչեցաւ այս դաշտավայրի մէջ և քաղաքը մի կախարդական արագութեամբ լուսաւորվեցաւ։

Երկու պատերազմողք մեղմ ձայնով խօսումէին միմեանց հետ քաղաքապարսպի վերայ, ոչ հեռի Փարիզի դարպասից. լուսաւորութեան փայլողութիւնը պայծառացրեց նոցա երեսը, որի վերայ նկատելի էր մեծ անհանգստութիւն. սոցանից մինը էր փոքրիկ աննշան կերպարանքով, բայց նորա մեծամարմին գլուխը, նորա բարձր ճակատը, նորա հպարտ հայեացքը, նորա բացորոշ ձևաւորված քիթը ցուցանում էին մի շատ գործական, զօրաւոր և ազնուատոհմ տղամարդ։ Արդարև նա շառաւիղում էր մի հռչակաւոր ազգատոհմից, և նորա մեծ քաջութիւնը պիտոյ է ևս առաւել բազմապատկէր իւր հօր պարծանքը։

Այս տղամարդը էր Բուրբոնեան Լուդովիկոս առաջինը իշխանայն Կոնդէն·

Միւսը ունէր վսեմական, ծանրատեսիլ կերպարանք· նա պատասխանումէր իշխանայնին բաւական կարճ, և երբեմն դարձուցանումէր մի խաղաղ և այնու ամենայնիւ ցաւալից հայեացք Սէն-Դենիու դաշտավայրի վերայ, ուր շարժվումէին Մօնմօրանսիու զօրագունդքը: Այս մարդը էր Գասպար Շատիլիոնեան, ծովապետը Կօլինի:

« Երդվումեմ Յովհաննէս Հուսի գերեզմանով, — ձայն տուեց յանկարծ ծովապետը, — կարծեմ, որ այս Մօնմօրանսի, ծեր առիւծը կամենումէ անակնկալ րոպէում յարձակվել իմ բանակի վերայ, բայց նորա դիտաւորութեան վաստակը լինելու է նորա համար մի անքուն գիշեր:»

— Մեր օրհասական զանգակը ախորժ չէ նորան, — պատասխանեց իշխանայնը ժպտելով, — բայց յոյս ունիմ ես դեռ ևս երկու գիշեր արթուն պահել նորան: Նա անտարակոյս մտածումէ, թէ մեք եկեղեցումն էինք — այդ պատուարժան ծերը: Ո՜վ, ինչպէս ատելի է ինձ այդ մարդը, որին տուած է այդքան կարողութիւն:

Կօլինին ոչինչ չպատասխանեց· այնքան խոր զբաղած էր նա թշնամիների շարժողութեամբքը, և իշխանայնը մի քանի րոպէից յետոյ խոշոր ձայնով յառաջ տարաւ խօսքը·

« Ո՛հ, եթէ Մօնգօմէրին իւր քաջ գունդերով լինէր իմ մօտ, ինչ յանդիմանական խրատ տալու էի ես այդ պառաւ բուին. ո՛վ Մօնգօմէրի, իմ քաջ զօրապետ:»

— Արդարև, նա դիտաւորութիւն ունի յարձակվել քաղաքի վերայ, — ձայն տուեց Կօլինին յանկարծ. — Աստուած օգնէ՛ մեզ, մեք կարող չենք մինչև լուսաբացը պահպանել մեր կացութիւնը: Յառա՛ջ գնացէք, զաւակներ, դէպ ի քաղաքի պարիսպները:

— Իշխանա՛յն, շուտով հագեցէ՛ք ձեր զրահը· վտանգը մեծ է։ Եւ այն հռչակաւոր պատերազմողը դարձեալ ձգեց մի արծուական հայեացք դաշտավայրի վերայ, և ապա գանչեց մեծաբարբառ ձայնով·

« Դէպ ի պարիսպքը, զաւակներ, դէպ ի պարիսպքը:»

Բ.

ԱՐՇԱՒԱՆՔԸ (ՑԱՐՁԱԿՈՒՄԸ)·

—

Նիզակակիր զինուորքը կրելով իւրեանց հետ ամենայն բան, որ հարկաւոր էր արշաւանքի համար, յառաջ խաղացին մինչև հարիւր քայլափոխ քաղաքի խանդակներից։ Մի փոքր հեռի սոցանից թաքնըված էին ընկերութիւնք ձիաւորների և ֆրանսիական ժանդարմներ և սպասումէին միայն մի լոկ նշանատուութեան, որ դուրս գան։ Բայց Կօլինյին ուշադիր էր ամենայն բանի իւր սովորական արթնութեամբ. շատ կարասներ, վառուն նիւթերով լցրած, բերվեցան քաղաքապարըսպի վերայ և դուրս թափվեցան հեռաւոր տարածութեամբ. ծեր կոննետաբլը մի քանի մարդ ուղարկեց այդ կրակը շիջուցանելու, և այսպէս իւր շարժողութիւնքը ծածկելու կալվինականների աչքից. բայց հրացաններից կրակ թափվելով հալածական արեց նորանց, և կոննետաբլը ստիպվեցաւ դէպ ի յետ շարժվիլ։

Ապա յառաջացաւ ընդհանուր ուրախութիւն քաղաքապարսպի վերայ հաւաքված կալվինականների մէջ. երկիւղից և հանդարտութենից յետոյ բարձրացաւ մի վայրենի խռովութիւն. պատերազմողքը սկսեցին երգել այն ժամանակի հռչակաւոր երգը իշխանայն Լուդովիկոսի։

Ու փոքր փոքր լռեցին ձայները, և արքայական բանակը վերստին խորասոյզ եղաւ լռութեան մէջ. Սէն-Դենիու քաղաքացիքը հանգըստացան, ահ ու երկիւղ միայն կրելուց յետոյ. և լուսաբացի հետ միասին շտապեց Կօլինյին դէպ ի Սէն-Քուէն, ուր գտանվումէր այն երրորդ մասը կալվինական զօրագունդի, որին հրամանակալ էր նա։

Այս օրի միջոցին կոննետաբլը չարաչար դրդուեց կալվինականների սիրտը, նորանց վաստակեցնելու համար։ Իշխանայնը շատ մեծ անհանգստութեան մէջ էր, որովհետև քաջ Մօնգօմմերին չկարողացաւ օգնութիւն հասուցանել իւր տիրոջը իւր հին ընկերակիցներով, ըստ որում նաւակամուրջները կամ թէ գետանցքը Սէն-Քուէնի մօտ աւերած էին իշխանայնի հրամանով։

Աննէ դէ Մօնմօրանսին ունէր իւր մօտ ինն հազար պատերազմողք. անբաղդ Կօնդէն, հեռանալով լա Նուէ, դ՚ Անդըլօ և Մօնգօմմերի զօրապետներից, ունէր միայն հինգ հազար զինուորք. այս պատճառով անհամբերութեամբ սպասումէր նա իւր քաջ գլխաւորի գալստեանը։

Կոննետաբլը, տեղեկանալով այս բոլորին, որոշել էր օգուտ քաղել այս հանգամանքից, որ անտարակոյս բնաջինջ առնէ Գալվինական զօրքը։ Նա կարգի դրեց իւր զօրքը և դուրս բերեց դէպ ի պատերազմ, հազար անգամ կրկնելով այս խօսքերս. «Ապրի՛ Մօնմօրանսին. Ապրի՛ թագաւորը։»

Իշխանազն Կոնդէն, որ իւր զօրքի երրորդամասնովը բանակված էր Սէն-Դենիսումը, կէս մի պաշտպանվումէր Կօլինյի ծովապետից և կէս մի ձախակողմումը Ժանլիս զօրապետից։ Նա չունէր ոչինչ թնդանօթներ, այլ միայն մի փոքր պաշար, և երկիւղ կրելով մի՛ գուցէ կոննետաբլը խլէր նորա զօրքի իջևանքը, որոշեց յարձակվիլ մի այդպիսի աւելի զօրաւոր թշնամու վերայ։

Իշխանազնը առաջնորդումէր կենտրոնական գունդին, Կօլինյին աջակողմեան թևին։

Կոննետաբլը յուսալով իւր աւելի բազմաթիւ զօրագունդի վերայ, անհոգ մնաց. Նորա ճակատամարտը անկարգ էր և չէր ցուցանում ոչինչ պատերազմական քանքար։ Կոննետաբլը չգիտէր Կալվինականների տառապեալ դրութիւնը, նա չգիտէր թէ ի՛նչ քաջութիւն ազդումէր նոցա մէջ յուսահատութիւնը, և երբէք մտածում չէր թէ կարող էր կոտորած պատահել. բայց մի յաջողակ զօրապետ չունի համարձակութիւն մտածել միայն յաղթութեան վերայ, կոտորածը պատերազմի մէջ միշտ շատ մօտ է յաղթութեանը։ Երկու կողմից նշան տուեցին և կռիւը սկսվեցաւ ահաւոր կատաղութեամբ։

Դա մի ճշմարիտ մարդասպանութեան հանդէս էր, մի զարհուրելի հանդիպումն միմեանց. սուրերը փշրվումէին սուրերի վերայ որպէս ապակի։ Յաղթութիւնը, իշխանազնի յանդուգն անխոհեմութեամբ մի րոպէ խոտորվելով ճանապարհից, չմնաց Կալվինականների կողմումը, որոնց համար այդ յաղթութիւնը մի մեծակշիռ կենսական խնդիր էր, որ և անխնայ հարուածումէին փախստական թշնամին։ Մօնմօրանսին դուրս փչեց իւր երկարատև կեանքը, քաջութեամբ կռուելով պատերազմական դաշտի վերայ։ Նորա պատուաւոր ուղեկիցքը, հազար հոգի ազնուականք, չկամելով մեռանել քաջազնական մահով, շրջեցին քամակները և փախան։

Թէպէտև մեծ օգուտ էր ստացվել Կալվինականների համար, բայց իշխանազնի անխոհեմութիւնը շատ վնասակար եղաւ նոցա։

Կօլինյին մի խստապարանոց ընդդիմութիւն գտանելով թշնամու ձիաւորների կողմից, և ահա փախստականքը սիրտ ստացան դորանով, ոտք հաստատեցին նորից, և սկսվեցաւ մի կռիւ, ինչպէս եղած է քաջազ-

նական դարերումը. ամենամեծ քաջաղունքը, ամենաքաջ ասպետքը Ֆրանսիայի կռւումներին միասին։

Այս միջոցին, ձիու վերայից յափշտակվելով անհետացաւ իսկոյն ծովապետ Կօլինիին պատերազմական դաշտից. մի խորհրդաւոր անցք, որի պատճառը ոչ ոք իմացած չէ, բայց դա վնասակար ու կործանական եղաւ կալվինականների համար։ Սորա ամենայն կողմից շրջապատվեցան, պահեստազօրքը յետ քարշվեցաւ, և Կոնդէն յանձն առաւ դարձեալ մի և վերջին անգամը յարձակվիլ թշնամու վերայ ամենայն կատաղութեամբ, բայց սորանով աւելի վատթարացաւ գործը։ Երկու անգամ ձգվեցաւ նա ձիու վերայից, և փոքր էր մնացել որ գերի տարվէր։ Վերջապէս կալվինականքը, որոնց քաջաղնական արիասրտութիւնը անօգուտ էր եղած, թողեցին պատերազմական դաշտը և հեռացան։

Կալվինական հաւատի մատենագիրքը, այս յաղթութեան պարծանքը ընծայել են իւրեանց կողմին. և կաթոլիկեանքը երգումներին յաղթութեան երգեր մեծահնչիւն ձայնով։ «Մեք, — ասում է Լօտէն դը Լավալը, — որ այս մեծ քաղաքական և կրօնական կռուի մէջ ամենեին անկողմնապահ ենք, երկբայում չենք յաղթութեան պարծանքը ընծայել կաթոլիկներին։

Բայց ինքը, գործի վախճանը ապացուցանում է ամենայն բան. եթէ կալվինականքը յիրաւի յաղթող էին եղած, այնուհետև Կոնդէն առանց սուր քարշելու տիրապետած կը լինէր Փարիզին, և Կաթարինայի կարողութիւնը վերջացած կը լինէր։ Մի փառաւոր յաղթութիւն կալվինականների կողմից, կարող էր կերպարանափոխ անել Ֆրանսիան, կրօնական խղճի ազատութիւնը շնորհած կը լինէր, Կաթարինան աքսորված, և Կոնդէն այնպիսի մարդ չէր, որ դողալով յետ փախչէր իւր պատուասիրութեան նպատակից։

Արդարև կալվինականքը անբաղդ գտանվեցան Սան-Դենիու մօտ տուած կռւումը, և այդ բանի մէջ մեղաւոր էր իշխանաւնը։ Եթէ Կօլինին ստացած լինէր աւելի զօրաւոր օգնութիւն, ապա գրաւած կը լինէր յաղթութիւնը։ Կոննետաբլի անընդունակութիւնը լուսափայլ երևեցաւ այս գործի մէջ. նա ունէր ձեռքումը բոլոր օգտակար հնարները, մի յաջողակ կացութիւն և առաւել բազմաթիւ զօրք. այնու ամենայնիւ յաղթութիւնը մնաց անվճռելի։ Պրոտեստանտեանքը աւելի մեծ քաջութեամբ պահպանեցին իւրեանց անձը, բայց գործի վերջը օգտակար եղաւ առաւել սակաւ քաջերին։

Կոնդէն երեկոյին խոր տրտմութեան մէջ, դարձաւ դէպ ի Սէն-Գենի. Նորա քաջ գլխաւորքը մեռած էին, և զուր էր սպասում նա ծովապետին : Նա սուրհանդակներ ուղարկեց զօրագնդի մեծաւորներին. յառաջ երևեցաւ Մոնգոմմերին, որովհետև նաւակամուրջքը դարձեալ չինած էին :

«Օրհնեալ լինի Աստուած, — ձայն արձակեց իշխանազնը, ձեռքը պարզելով դէպ ի կոմսը, — մեք փրկված ենք. այդ տեղ ես դու ահա, ի՛մ Մոնգոմմերի :»

Դ՚ Անդըլօ-Շատիլլոն եղբայրը ծովապետի, եկաւ իսկոյն նորա քամակից, և Մոնգոմմերին երևեցաւ այնպէս վառված, այնպէս զայրացած, որ կալվինականքը լուսաբացին միւսանգամ զինաւորված դուրս գնացին դէպ ի պատերազմական դաշտը : Բայց կաթոլիկեանքը չկամեցան կռուել և, երբ որ արդէն թաղած էին իւրեանց մեռածները, յետ դարձան դէպ ի Փարիզ, ուր պատրաստվեցաւ ծեր կոննետաբլին մի փառաւոր հանդէս ուղարկաւորութեան :

Իշխանազնի զօրագունդը կամաց կամաց յետ քարշվեցաւ. զօրապետքը աւելի նմանումէին յաղթողների, քան թէ յաղթվածների : Անբաղդ Կոնդէն սպանվեցաւ Ժառնաքում և հռչակաւոր Մոնգոմմերին բաժանորդ գտանվեցաւ այն յաճախ ձախորդութեններին, որ եկան թէ ծովապետ Կօլինյի և թէ իւր համակրոնների վերայ :

Վերջապէս եկաւ 1569 թուականը, երբ նա դուրս եկաւ այն մեծ գործակատարութեան հանդիսի մէջ, որ պիտոյ է պատրաստէր նորան այնքան տխուր ու տրտում վերջ :

Դ.

ԿԱՐՈԼՈՍ ԻՆՆԵՐՈՐԴԻ ՄԱՆԿԼԱՒԻԿՆԵՐԸ.

—

1569 թուականին, մի առաւօտ, երկու մանուկ չիկահեր, ծիծաղադէմ տղայք զբօսնումէին հին Լուվրի պատուհանի մօտ. Նոքա պատկանումէին Ֆրանսիայի առաւել նշանաւոր ազգատոհմերին, և մեծամտելով իւրեանց քաջատոհմութեան վերայ, խօսումէին և կատակումէին թագաւորների ամրոցի մէջ, որպէս թէ իւրեանց հօրերի օթևանումն էին :

Նոցա քամակումը շատ տաք տաք խօսումէին մի քանի ազնուականք Պրոտեստանտների պատերազմի վերայ, հարաւային Ֆրանսիայի

մէջ։ Մօնգօմմերին գերի էր տարել Քվէրրիումը Թագաւորի լէյտենանտ Ցերրիգէսին, և ամենքեան կամենումէին պատժել կոմսի անամօթութիւնը, որովհետև այսպէս էին անուանում նորա քաջութիւնը։ Առաւել զայրացածների մէջ նկատեցին մի շատ մանուկ ազնուական ջոկովի հանդերձով, որի կերպարանքը ցուցանումէր վճռականութիւն և մի հաղուագիւտ ներգործականութիւն։

Սա էր Վիլհէլմոս Սօլեան, պարոն Տարաննէսը։

Նա խօսք էր բացել փառաւոր պատերազմական հարուածների վերայ, և ահա ընդհատվեցաւ նորա խօսքը այն մանկլաւիկների մեծաձայն ծիծաղից, որ կանգնած էին լուսամուտի մօտ։

«Նայի՛ր միանգամ, Մօնմօրանսի, այն խորթատեսիլ մարդուն, մի լայնածիգ բերանով, որի մէջ կարող էր աներևութանալ մի կարմէլիտեան վանքի վանահայր։»

— Ո՞հ. նորա գլուխը, որ նման է մի հարկահան պաշտօնակալի գլխի — պատասխանեց մանկլաւիկը զուարճութեամբ ծիծաղելով։

«Ո՛չ, այդպէս չէ. դու սխալվումես. դատելով նորա սև բաճկոնից որ կրումէր յառաջ, պիտոյ է մտածել թէ նա լարախաղաց է։»

— Մի՛ լարախաղա՞ց. դու խելագար ես, Լավալետտ։ Արի՛ ուրեմն, դու, սև բաճկոնով մարդ. թագաւորը կամի քո հաւատարիմ ծառայութիւնքը այն կռուի մէջ, որ եղած է. . . ի մօտ. որի՞ մօտ, Լավալետտ։

«Ռենտի կամ Սերիզօլ քաղաքի մօտ։»

— Սերիզօլ քաղաքի մօտ պատահած կռուի մէջ վարձատրե՛լ, — ձայն տուեց չարամիտ մանկլաւիկը. — Թագաւորը հոգս չունի մեր համար. նա կը վարվի մեր հետ, որպէս երկու Հուգենոտների հետ։

Ջքաւոր հագուստով մարդը, որի վերայ ծաղր էին արած մանկլաւիկները, յառաջ գնաց մինչև պատուհանի մօտ, դուրս հանեց ծոցից մի մագաղաթ, և բարձր ձայնով կարդաց մահու դատակնիքը ծովապետ Կօլինիու, Շարթրեան Վիտեդամի և կոմս Մօնգօմմերիու վերայ։

«Որովհետև այս պարոնները — յաւելացրեց հրապարակական ծանուցարարը, — դատապարտված են որպէս քրէական յանցաւորք, ուրեմն, այսօր իսկ պիտոյ է Գռեվեան հրապարակումը կախվին նոցա պատկերքը։ 50,000 թալեր կը ստանայ այն մարդը, որ բերելու է նորին մեծութեանը ծովապետի գլուխը։»

— Ո՛վ անբաղդ ծեր բու, — ձայն տուեց մանուկ Լավալետտը։

«Ի՞նչ նոր բան կայ.» — հարցրեց աւելի մօտ գալով պարոն Տարաննէսը։

— Ձեր հօր թշնամի Մօնգօմմերին պատժվելու է. — ասաց մանկլաւիկը։

«Ի՞նչ ես ասում. մի՞ թէ Մօնգօմմերին ըմբռնված է, — ձայն արձակեց Տարաննէսը. — վերջապէս կը կախվի նա կրօնի փառքի համար։»

—Այո՛, կը կախվի, բայց միայն իւր պատկերի տեսակով. — պատասխանեց չարամիտ տղան։

«Ո՛վ, երանի՜ թէ եղած լինէի Թագաւորի Լէյտենանտը Վվերբիում. մեր Տիրոջ խաչը վկայ, այն ժամանակ այլապէս էր պատահելու. այնուհետև այս զարհուրելի Մօնգօմմերին, պիտոյ է այսօր իսկ այրվէր Գռեվեան հրապարակումը։»

—Մահը Աստուծոյ ձեռքումն է. քո ասածը մի մեծ յանդգնութիւն է, պարոն Տարաննէս — ծանր ձայնով ասաց մի ծեր գլխաւոր. — մեք շատ անգամ մեր կեանքը վտանգի տակ ենք ձգած, այնու ամենայնիւ, առանց հասուն մտածողութեան չէինք համարձակվելու յարձակվիլ Մօնգօմմերի կոմսի վերայ։

«Այդ մի չափից դուրս համեստութիւն է, պարոն Մատինիոն, — պատասխանեց Տարաննէսը, մեծարանքով գլուխ տալով. — ես կը ցանկանայի ձեզ տեսած լինել պարոն Տերրիդէսի տեղումը։»

— Պարոն Տերրիդէսը, մի շատ յաջողակ պատերազմական մարդ է — պատասխանեց Մատինիոնը, — նախ և յառաջ ծանօթացէք նորա հետ, մինչև կը դատէիք նորան։

«Մօնգօմմերին վարվել է որպէս մի դաւաճան ասպետ — պատասխանեց Տարաննէսը, աւելի և աւելի տաքանալով, — նորա ճանապարհը ցանած է անհամար բռնակալական գործերով. նա թոյլ է տալիս սրամահ անել քահանայք, աբեղայք և կուսանք. նա մի այլանդակ գազան է, Ֆրանսիայի ամօթը, մի հերձուածող, որին արժան էր այրել։»

— Ծանր, ծանր, իմ պատանի ասպետ. նորան նկարագրել են ձեր առաջև աւելի սև, քան թէ նա էր. այդ բանին, ինչպէս յոյս ունիմ ես, ինքներդ հնար կ'ունենաք վերահասու լինելու։

«Նորան ցանկանումեմ ես խորոված սրտով — ձայն տուեց երիտասարդը, — բայց անյոյս եմ այդ մասին. իմ հայրս չէ կարող իմ համար հրամանագիր ճարել հարաւային զօրքի մէջ ծառայելու, և այս պատճառով պիտոյ է ինձ դարձեալ յետ գնալ դէպ ի Նորմանդիա, այն տեղի Պրօտեստանտները յաղթահարելու համար։»

—Նորմանդիան է հայրենիքը Մօնգօմմերի կոմսի, — պատասխանեց Մատինիոնը, — ուրեմն դուք կարող էք մի օր հանդիպել այն առիթին կամ թէ նորա քաջ եղբայրակիցներին, որովհետև նոքա կայծակի արագութեամբ վազումեն Ֆրանսիայի միջով։

«Դուք սիրումէք գերբնական բանը, պարոն Մատինիոն,— ասաց հեգնաբար Տարաննէսը,— բայց վնաս չունի. երջանիկ կը լինէի ես, եթէ իմ սուրը այդ տղամարդի սրի հետ խաղար մի օր։»

—Աստուած պահէ ձեր մանուկ գլուխը.— ասաց Մատինիոնը յետ քաշվելով։

«Ո՛հ,— ասաց մանկլաւիկներից մինը խոր հառաչելով,— ահա մի տաղտկալի մարդ, այնպէս զուարթ, որպէս մի Գերմանացի, և ձանձրալի, որպէս Սէն-Ժերմէն լ՚Օքսերրուա եկեղեցու քահանայի քարոզները, որ տևումեն երեք ժամ։ Այնու ամենայնիւ նա կը դառնայ Ֆրանսիայի մարշալ, յառաջ, քան թէ գլխաւոր կը դառնայի ես։»

—Բայց և դու երջանիկ ես, ով Տարաննէս,— խօսքը յառաջ տարաւ Մոնմօրանսին նախանձելով.— դու կ՚երթաս դէպ ի Նորմանդիա. դու կը պատերազմես, դու միւսանգամ կը տեսանես Լիզիեօ քաղաքի գեղեցիկ տիկնայքը, որոնց թողած էիր քո սիրտը. դու կը պսակես քո գլուխը պարծանքով կամ թէ թոյլ կը տաս սպանել քեզ թագաւորի և մեր սուրբ կրօնի համար. որպիսի բաղդ.....

«Ո՞րը ես անում դու, չար դև.»— հարցրեց Տարաննէսը։

—Ամենևին ոչ, սիրուն գլխաւոր։

«Թո՛ղ այդպէս լինի, բարեկամ իմ. բայց մեծ յիմարութիւն է իւր անձը մահու տալ թագաւորի կամ թէ աբեղաների համար։ Մեր սրտի սիրած կնոջ համար մահու տալ իւր գլուխը, մի տանելի բան էր, որովհետև գուցէ նա արտասուելու էր մեզ — երկու օր, մինչ միւսերը ծաղր էին անում մեզ։ Թագաւորը մեր պաշտօնը յանձնելու է մի յիմարագլուխ կամ երկչոտ մարդու, և աբեղայքը առօք փառօք կը թաղեն մեզ և կ՚առնուն մեր զաւակներից նոցա գոյքը։»

—Բայց դու փառք կը ստանաս, մի մեծ անուն. դու կոննետաբլ կը դառնաս։

«Այո՛, ինչպէս քո մեծանուն պապը տանջվել է Կաթարինա թագուհու ձեռքում, կամ թէ իմ հայրը այդպիսի ծառայութեններից յետոյ զրկվել է թագաւորի շնորհից, ինչպէս այնքան շատ միւսեր.— Ո՜հ, թագաւորները վարժապետ են ապերախտութեան արուեստի մէջ. յոյս ունիմ ես գործ կատարել միշտ, միտ դնելով իմ անձնական օգտին. ես ծառայումեմ Կարոլոս իններորդին, իմ անձը բաղդաւորելու համար։ Բայց անպատշաճ էր ինձ այսպէս խօսել քո հետ..... Ասա՛ ինձ, ի՞նչ պատուէր ունիս տալու ինձ քո մօրեղբօր աղջկայ մասին, Մոնմօրանսի։»

—Թէ նա գեղեցիկ էր և թէ, ես մինչև այժմ սիրում եմ նորան։ Բայց եթէ կը տեսանես քո հրապուրիչ, չքնաղ անծանօթը, ասա նորան, թէ նա անիրաւութիւն է առնում թագուցանելով իւր անձը քո հայեացքից և ծածկելով քեզանից իւր անունը. ասա նորան հազարաւոր քաղցր խօսքեր և հոգևորվիր այդ մասին աստուածային Ռոնսարի վերհամբարձ բանաստեղծութեամբքը։

«Ո՜հ, ես սիրում եմ այս Բէատրիքսը, — ձայն տուեց Տարաննէսը անպատում խնդութեամբ. — այնպէս սաստիկ սիրում եմ նորան, որ կը մեռանէի, եթէ չփեսայանայի նորան. . . . . Բէատրիքս, Բէատրիքս. և ոչինչ այլ տեղեկութիւն չունենալ քո մասին. . . . Ճշմարիտ, խելքս պիտոյ է թռչի վերայիցս։»

— Հանդարտ կացիր, — պատասխանեց մանկլաւիկը, — խելոյն խելագարվելու չես դու։ Շրջի՛ր դու որպէս մի թափառական ասպետ ճանապարհների վերայ քո նիզակովը, և հարցրու ամեն մարդուց քո Բէատրիքս խոժոռ ու կապոյտ աչքերով սիրականի մասին։

«Ծիծաղէ՛ր, չար դև դու. մի օր աւելի մեծ արհամարհանքով վրէժխնդիր կը լինիմ ես քեզանից։ Բարեաւ մնաս, Մոնմօրանսի. ես անյապաղ ճանապարհ եմ ընկնում դէպ ի Ալանսօն, Նորմանդայի մէջ։»

Տարաննէսը, որ մի քանի ամիս այս խօսակցութենից յառաջ ճանապարհորդել էր դէպ ի Լիզիեօ, մի հանդիսաւոր օր, Հեննիւեան ապարանքի մէջ նկատել էր մի մանուկ, այնքան ևս գեղեցիկ, ինչքան համեստ աղջիկ, որի խոժոռ ու կապոյտ աչքերի մէջ նկարած էր մի անպատմելի հեզութիւն. Նորա կերպարանքը գրաւիչ ու շնորհալի էր։ Տարաննէսը նայելով այս կուսական երեսի վերայ, զգաց մի այնպիսի ախտ, որ մինչև այժմ անյայտ էր նորան. Նա զգաց իւր մէջ խռովութիւն և մի զօրաւոր ձգտողութիւն դէպ ի նա։ Բայց բազմութիւնը ներս մտանելով նոցա մէջ, երիտասարդը հասաւ նորան այն րոպէին, երբ մի ծեր տիկին ասում էր Բէատրիքսին ցամաք ձայնով.

«Եկէ՛ք, Բէատրիքս. մեզ պիտոյ է գնալ. Ձեր հայրը կը բարկանայ իմ վերայ, որ մեք այսքան երկար մնացած էինք այս տեղ։»

Նոքա աներևութացան իսկոյն, և Տարաննէսը ինչքան ևս հարց ու փորձ արեց, ոչինչ չկարողացաւ իմանալ Բէատրիքսի մասին, որովհետև ոչ մի ասպետ չգիտէր նորան։

Ահա մեր Տարաննէսը այնպէս սիրահարված, ինչպէս Արիոստի քաջաղունքը. Նա մտածելով այս հանդիպման վերայ, քունը կորցրեց, այն և խելքը, և հալիւ թէ իւր պատգամաւորութենից յետ էր եկել, դարձեալ հրաման խնդրեց վերադառնալու դէպ ի զօրագունդը, որ վայրենի կատաղութեամբ հալածում էր Նորմանդիայի Պրոտեստանտներին։

Դ․

ԴՈՒԵՆՆԱ (ՏԱՆՏԻԿԻՆԸ)․

Այժմ պիտոյ է հանդէս բերենք ուրիշ անձինք և մտաւորապէս փոխադրենք մեր անձը այն գաւառների մէջ, որ գլուխ էին բարձրացրել, իրեանց հայրենական կրօնը պահպանելու համար։

Մօտ մի ժամի ճանապարհ հեռաւորութեամբ, Վիմուլթիէ անուն փոքրիկ ամուր տեղից բարձրանում էր մի հին ամրացուցած բերդ, մի զառ ի՛վեր ապառաժի կատարի վերայ։ Շատ հարիւրակներ (հարիւր տարիներ) կոխել էին նորա վերայ իրեանց կնիքը, և դա կառուցած էր կէս մի բիւզանդեան և կէս մի գօթական ոճով։

Այս ամրոցի հողաբլուրից ձգվում էր մի լայնարձակ գեղեցիկ դաշտավայր բնակիչների աչքի առաջև, պտղաբեր տափարակներ և կանաչ մարգագետինք, անտառապատ բլուրներով շրջափակված։ Մի հատ ծառ միայն խանգարում էր այս տափարակների միութիւնը, մի ահագին կիսով չափ ցամաքած Իւլեան ծառ (if)․ սա լինելով հին կալուածատիրական ամրոցին համաժամանակեայ, ասես թէ սահմանած էր, որ աւելի շուտով ոչնչանայ քան թէ մարդկեղէն ձեռքի գործը, բայց սա դառնալով կողոպուտ ճակատագրի, վրէժխնդրութեան և ատելութեան, էյլեան ծառը մինչև այժմ ևս դարձուցանում էր իւր վերայ մարդկերի հայեացքը։

Այն միջոցին, երբ արեգակը խորասոյզ է լինում ովկիանոսի ծիրանագոյն ջրերի մէջ, երկու կին մարդ զրուցում էին միմեանց հետ ամրոցի հողաբլուրի վերայ։ Աւելի մանուկ կնամարդը ունէր մի տրտում, գրեթէ արտասուալից աչքեր, իսկ առաւել հասակաւորը յատկանում էր մի այնպիսի անհոգութեամբ, որ անջնջելի տպաւորված էր այնպիսիների կերպարանքի վերայ, որ ոչինչ բան չէին զգում աւելի։ Այս ցամաքած պատենի մէջ չկար ոչինչ սիրտ և հոգեկանը յարմարվում էր մարմնաւորին։ Սա էր մի պառաւ խստաբարոյ կոյս աղջիկ, որի նմանքը շատ կան, որ և ինքը անընդունակ լինելով սիրու, դատապարտում էր միւսների սէրը։

«Իմ մանկութեան օրերումը, ո՛վ իմ կոյս տիրուհի — ասաց նա, թագաւոր Ֆրանչիսկոս առաջինի ասպետական կառավարութեան օրերումը, շատ զգոյշ էին այդպիսի գաղափարներից․ ոչ մի աղջիկ սիրահարվելու չէր մի անծանօթ ասպետի վերայ, որ մի ստուերի պէս տեսած էր նա խուռն բազմութեան մէջ անցանելով իւր մօտից։»

— Դուք շատ խստաբարոյ էք, տիկին Բերթա — պատասխանեց հեգնաբար մանուկ աղջիկը, — ես չգիտեմ բարք ու վարքը Ֆրանցիսկոս առաջինի պալատի մէջ. շատ ժամանակ է անցել դորանից յետոյ և դա պատկանումէ պատմութեանը. այլև ես հարցափորձ չեմ անում այդ մասին, ես հարցաքննումեմ իմ սիրտը միայն, և եթէ իմ բարի հայրը չքննադատէ իմ սրտի ձգտողութիւնը, ինչպէս նա յաճախ ասած էր, ապա լինելու եմ ես այդ անծանօթի ամուսին, եթէ Աստուած միւսանգամ հանդիպեցնէ նորան ինձ։

«Դոքա խելագար մտածութիւնք են։ Եւ եթէ այդ անծանօթ ասպետը լինէր ձեր հօր թշնամի, մի կաթոլիկ — և այս բանը շատ հաւանական է, որովհետև պարոն Հեննիբիէն, արքեպիսկոպոսը Լիլլեօ քաղաքի, երբէք ընդունում չէ իւր մօտ մի կալվինական։»

— Պարոն Հեննիբիէն մի արժանաւոր քահանայ է, — պատասխանեց մանուկ աղջիկը, — որ մեծահոգութեամբ ընդունումէ իւր մօտ ամենայն ազգատոհմի և հաւատի մարդիկ. սորա ամենալաւ ապացոյցն այն է, որ այն երեկոյին բաց ի մեզանից կային այն տեղ շատ կալվինականք նոյնպէս։

«Այդ ոչինչ պատճառ չէ, իմ սիրելի,» — ասաց պառաւ աղջիկը ցամաք ոճով։

— Ապա և ձեր պատճառքը չեն միշտ ամենալաւքը, տիկին Բերթա, և դուք կարող էք ասել ինչ որ կամիք, այնու ամենայնիւ ես սիրումեմ այն երիտասարդ ասպետը։

«Չէք սխալվում այդ բանի մէջ, իմ սիրելի. ես անհամբերութեամբ սպասումեմ տեսանելու այն իշխանական թագը, որ այդ սէրը դնելու էր ձեր գլխի վերայ։»

— Ծաղր արեցէք, ինչքան կամիք, տիրուհի — մեղմութեամբ պատասխանեց մանուկ կնամարդը, — բայց ես կը սիրեմ այս անծանօթ ասպետը, ինչքան որ կենդանի եմ։

«Կեանքը շատ երկար է, սիրելի Բէատրիքս,» — հեգնաբար պատասխանեց Բերթա տիկինը։

— Այդ բանը պիտոյ է ձեզ ի հարկէ լաւ իմանալ, որովհետև դուք ապրած էք չորս թագաւորների օրերում. բայց ժամանակը շուտով անցանումէ սիրողի համար։

Հաւանական է, որ հեգնախօս աղջիկը իւր տուած գովասանութեան համար կը ստանար հատուցումն, եթէ նոյն րոպէին սպասաւորը կոմս Յովհաննէսի, որ ամրոցատիրոջ եղբայրն էր, խնդրած չլինէր նոցանից ներս գալ սեղանական դահլիճը։

Ընթերցողը արդէն անշուշտ հասկացած կը լինի, որ Բէատրիքսն էր այն չքնաղ կախարդուհին, որի վերայ այնպէս սաստիկ սիրահարուած էր Տարաննէսը։ Գերի ընկած կալվինականների համար բարեխօս լինելու արքեպիսկոպոսի մօտ, եկած էր Բէատրիքսը նորա ապարանքը, և արքեպիսկոպոսը հարկադրել էր նորան մասնակից լինել մի երեկոյեան հանդէսի, ուր հրաւիրել էր նա իւր վիճակի գլխաւոր մարդիկը և մեծամեծքը։

Բէատրիքսը իւր անձը մեծ վտանգի տակ ձգեց, ընծայելով իւր սէրը իւր կրօնի թշնամուն, որի հայրը կատաղութեամբ հալածումէր Պրօտեստանտներին․ պատճառ, Բէատրիքսը, այս ազնիւ կոյս աղջիկը, էր կոմս Գաբրիէլ Մօնգօմմէրիու հոգեդուստրը։

Պարոն Յովհաննէսը կամ Սէն Ժանը էր կոմս Գաբրիէլի կրտսեր եղբօրներից մինը․ երբ որ այս Գաբրիէլը թագաւոր Հէնրիկոս երկրորդին առ իմաց վիրաւորել էր նիզակախաղութեան մէջ, դիմեց դէպ ի Անգլիա․ Հէնրիկոս երկրորդը ներեց նորան մեռանելու բոպէին, բայց Կաթարինան հալածումէր նորան ամենայն կարելի կերպով։ Իւր ինը որդիներից տարաւ նա իւր հետ առաւել կրտսերքը միայն, և միւսերը թողեց իւր եղբօրների հովանաւորութեան տակ․ դոքա էին Լօրժէս, Սէն-Ժան և Կօրբեզան։

Կօրբեզանը էր առաւել քաջ պատերազմօղը Պրօտեստանտեան բաժնի, մի ճշմարիտ առիւծ։ Նորա թշնամիքը եւս խօսումէին նորա մասին մեծարական յարգութեամբ․ նորա քուերորդիքը կրթվեցան նորա ձեռքի տակ․ Մօնգօմմէրիու ազգատոհմը էր իսկապէս մի քաջազնական ազգատոհմ։ Աքսորականը դուրս գալով Ֆրանսիայից, յանձնել էր հրամանակալութիւնը իւր ամրոցի վերայ, իւր Սէն Ժան եղբօրը և իւր որդի Գաբրիէլ երկրորդին։

Բէատրիքսը մինչև 1562 թուականը մնաց Բերթա դը լա Շիֆ-ֆարդիեռ տիկնոջ տանը, Կաէն քաղաքում․ երբ որ կոմս Մօնգօմմէրին յետ դարձաւ իւր կամաւոր աքսորանքից և Պրօտեստանտեանքը կարգեցին նորան քաղաքի կառավարիչ, նա ուղարկեց Բէատրիքսին և Բերթային դէպ ի Մօնգօմմէրին, տալով նոցա ապահովական ուղեկիցներ։

Պարոն Յովհաննէսը իւր երեք քուերորդիներով և պահապան զօրքի մեծաւորներով նստած էր սեղանի մօտ, երբ որ Բէատրիքսը Բերթա տիկնոջ հետ ներս մտաւ։ Բոլորեքեան, հին ֆրանսիական քաղաքավարի սովորութեան պէս, վեր կացան տեղերից, բայց փոխանակ խնդագին ժպտանքի, որ սովորաբար սպասումէր նոցա, Բէատրիքսը նըկատեց իւր քեռու և եղբօրների այրական կերպարանքի վերայ անհանգստութիւն․ զարմացած և ահաբեկված հարցրեց նա թոյլ ձայնով․

«Աստուծոյ համար, խնդրեմ ասել ինձ, ի՞նչ է պատահել. մի՞ թէ մեր հօրը մի անբաղդութիւն է պատահել. ասա, Գաբրիէլ:»

—Ես կարծում եմ, որ իմ տէր ու եղբայրը մինչև այժմ իւր մարդերի գլխին անվնաս կանգնած է. բայց Կոքբեղանը Թագաւորական մարդերի ձեռքով, Լա-Մոտտէ գետի մօտ, Պօատու քաղաքումը գերի է տարվել:

«Աստուած—Աստուած, նոքա կը սպանեն նորան.» — ձայն արձակեց խղճալի մանուկ աղջիկը:

—Ո՛չ. այդքան համարձակվելու չեն, — հաստատ ձայնով դանչեց գլխաւորը, — այլև լսած եմ ես, որ իմ եղբայրը Թագաւորի Տերրիգէս անուն լէյտենանտին գերի է ձգել, և որովհետև պալատումը շատ յարգելի է այդ Տերրիգէսը, ապա յուսալի է, որ մեր գերիքը կը փոխանակվին նոցա գերիների հետ:

«Ո՞վ այդ անողորմ պատերազմին.» — ցաւելով ձայն արձակեց Բէատրիքսը:

—Արդարև, իմ մանուկ, շատ անողորմ է դա, — ասաց զօրապետը, — բայց նոր զօրքեր ևս պարոն Մատինիօնի հրամանի տակ ուղարկված են դէպ ի Նորմանդիա. և կոմս Սօլ-Տարաննէսը, ինչպէս ասում են, ճանապարհումն է. նորա որդին, նոյնպէս մի կատաղի հալածող մեր համակրօնների, շրջում է արդէն այս տեղ ու այն տեղ. այդ երկուքը պատուէր են ստացել մեր աշխարհները անապատ կացուցանելու, և դոքա արդէն կանգնած են մեր դարպասների առաջև:

«Աստուած իմ, — ձայն տուեց Բէատրիքսը — պահպանի՛ր մեզ և հեռացրո՛ւ մեր գլխից այս Տարաննէսների սուրը: Երբէք կարող չեմ մոռանալ ես, որ դոցա հայրը տասն անգամ փորձ է փորձել կորուսանելու մեր պարծանք Կոլինյին:»

—Եթէ մեր հայրը այս տեղ լինէր, — ասաց Գաբրիէլը շատ խիստ ցաւելով, — ապա գնալու էինք նոցա հանդէպ. բայց Բէառնի մէջ եղած պատերազմը, կարող է երկար միջոց յետ պահել նորան, և նորա բացակայութիւնը (չլինելը այս տեղ) մեր կորուստն է: Լաց մի՛ լինիր, Բէատրիքս. թէև մեք չենք բաղմաթիւ մեր բունի մէջ, բայց մեր բունը անդղների բուն է, և վա՜յ նոցա, որ համարձակվումէին մօտենալ նորան:

«Մի՞շտ սպանել, այս ի՞նչ գործ է, — ասաց նա. — մի տուն միւսին ընդդէմ, Փրանսիացի Փրանսիացու հակառակ:»

—Եւ շատ անգամ բարեկամ բարեկամի հակառակ, — յաւելացրեց ժանը:

«Եթէ այսպէս յառաջ գնայ գործը — ասաց յանկարծ յօրանջելով Ֆրանցիսկոս Մօնգօմմերին, որ մինչև այժմ բերան բացած չէր, — ապա կ՚ուտէինք մեզ մի զուարճ երեկոյեան հաց, որ լինելու էր այնպէս զբաղեցուցիչ, ինչպէս մի երէցփոխանի ճառ։ Ուրեմն դադարեցէք գանգատելուց, իմ պարոններ, և դու, իմ վախկոտ Բէատրիքս, հալածի՛ր այդ կնճիռները ճակատիդ վերայից, դոքա շատ տգեղացնում են քեզ. ճշմարիտ, դու այս երեկոյիս նոյնքա՜ն ևս հրապուրիչ ես, ինչպէս քու հալումաշ եղած դաստիարակ կինը։»

— Ֆրանցիսկոս, — պատասխանեց մանուկ աղջիկը ճնշելով մի ժպտանք, — լուռ կաց, քո կատականքը վատ են։

«Ո՛չ այնքան վատ, ով Բէատրիքս, որովհետև ես միայն կարողացայ մի ժպիտ դուրս երևեցնել քո շրթունքի վերայ։»

Երբ որ նա տեսաւ, որ Բերթա տիկինը մի այնպիսի կերպարանք առաւ, որպէս թէ պիտոյ է մօրթվէր, այնուհետև գլուխ տուեց նա հեղնաբար և ձայն արձակեց.

— Աղջիկ Բերթա-Շիֆֆար դը լա Շիֆֆարդիերը ընդունում է կատականքը այնպէս, որպէս մի խիստ անողոքելի ինկվիզիտօր։ Բայց մանուկ աղջիկները պիտոյ է ուրախամիտ լինին. երբ որ աղջիկ Բերթան ամուսնացած կը լինի, ապա կը ստուգէ փորձով, որ իմ խօսքս իրաւ է։

«Դու, համարձակախօս, դադարի՛ր միանգամ», — ասաց քեռին աշխատելով միւսանգամ ծանրութիւն տալ իւր կերպարանքին։

Պառաւ տիկինը դողումէր բարկութենից, բայց սրամիտ խաղարկութիւնը և ծիծաղը չվերջացան, և ահա մի զինուոր ներս մտաւ դահլճի մէջ և ահաբեկված ձայն արձակեց.

«Շտապեցէ՛ք, շտապեցէ՛ք դէպ ի ձեր զէնքը. ահա մօտեցած են Թագաւորի կուսակից մարդիկը։»

— Դոքա Տարաննէսներն են. — ձայն տուեցին ամենեքեան, բարձրանալով իւրեանց տեղից։

«Յառաջ գնացէք — ձայն տուեց ժանը, — վեր ելէք աշտարակները, տանիքները, Մօնգօմմերի ամրոցը։ Լցուցէ՛ք փալկօնեթները (կարճ ու հաստ թնդանօթներ) և արձակեցէ՛ք ուղիղ դէպ ի իւր նպատակը։»

Ե.

ՄՕՆԳՕՄՄԵՐԻՈՒ ԱՄՐՈՑԸ ԱԼՄԱՆԷՇԻ ԴԱՇՏԱՎԱՅՐԵՐՈՒՄԸ.

Փոխադրենք մեզ մտաւորաբար դէպ ի Կամբրայ, ուր թնդանօթը մի ամբողջ օր որոտումէ բարձրութեամբ։ Այս, ամրապահեստ բերդով

պաշտպանված տեղումը, ռեֆօրմատեան կրօնը որ դաւանումէր ամիտցատէր պարոնը, տարածվել էր սրընթաց արագութեամբ։

Կաթարինա Մեդիչեանը այժմ հաստատեց մտքումը, յայտնի բռնութեամբ վերջացնել գործը Պրօտեստանտների հետ. Նա թագաւորի լէյտենանտին շատ խիստ հրամաններ տուեց և խնդրեց Գասպար Սօլ-Տարաննէսին հրաժարվիլ իւր առանձնութիւնից և գնալ դէպ ի Նորմանդիա։ Պատուասէր Տարաննէսը իսկոյն ճանապարհ ընկաւ դէպ ի Կաեն, ուր հանդիպեցաւ նա իւր որդուն։

Որովհետև Կամբրայը Պրօտեստանտների ձեռքումն էր, այս պատճառով ղուր եղաւ Վիլհելմ-Տարաննէսի և նորա հօր պաշարելը այդ քաղաքը. նոքա ստիպվեցան վերացնել պաշարումը և ուղղել իւրեանց ընթացքը դէպ ի Արժենտօ։

Երեկոյին, մօտ հարիւր ձիաւորք փոշիների մէջ կորած ձիաներով մերձեցան այս փոքրիկ քաղաքի ծխապատ աւերակներին. երբ որ իջևանեցան նոքա, նկատեցին երկու գունդ հետևակների և ձիաւորների հեռուից։

«Նոքա մեր գլխաւորքն են — ասաց զօրապետը. — Գիլբերտ, հրամայիր նոցա շտապել մեր մօտ, գիշերը այս տեղ կ՚անցուցանենք մեք։»

Նա շտապով մին եկաւ նա այս տեղ այն տեղ, նայեց ծխապատ աւերակների վերայ մի դառն, վայրենի ուրախութեամբ և դիմեց դէպ ի մի խրճիթ, որ անվնաս էր մնացած կրակից, և շատ շուտափոյթ կարդաց մի քանի թղթեր։

Զօրապետը էր մի մարդ, բարձր և ջլուտ կերպարանքով, մօտ 50 տարօք. նորա աչքերը կապուտից դէպ ի կանաչ խաղացող գունով փայլումէին մի հաղուագիւտ ներգործականութենից. նորա բարձր ճակատը գուշակումէր ամենազնիւ ընդունակութիւնք, նորա հայեացքը չէր միշտ ունեցած այն կենդանի շարժողութիւնը, որ այժմ ոգևորումէր նորան։ Սովորական կեցութեան մէջ սիրումէր նա յարմարութիւնք և խաղ, բայց երբ որ նստած էր թամբի վերայ, էր նա առաւել քաջ և զգոյշ զօրապետը, որ կարելի էր տեսանել։ Սա էր մի բառով Գաբրիէլ դը Լօրժէս կոմս Մօնգօմմերի, ամենաքաջ ազնուականը իւր ժամանակի։

Որովհետև գիտէր նա, թէ Տարաննէսքը և Մօնտրեզյլը կամէին աւերել Նորմանդիան, շտապով եկած էր Պօատուից իւր եղբայր Կարբօզանի հետ. Նա միաւորվել էր իւր վաղեմի գլխաւորների հետ և ամրացրել էր իւր անձը շատ Կալվինական ազնուականներով։

Շինական խուղի մէջ ներս մտած, և ահա եկաւ Կարբօզանը բերելով իւր հետ մի քանի այլ ազնուականք. Մօնգօմմերին երևումէր

սրտում. վհատութիւն էր եկել նորա վերայ բարկութենից և զայրացութենից յետոյ, ինչպէս միշտ սովոր է պատահել ազնիւ և հոյակապ մարդերի մէջ:

«Մի՞ թէ այսպէս էր պատերազմ տալու կարգը, — ձայն արձակեց նա, իւր ծանր թուրը ձգելով գետնի վերայ. — Որովհետև քաջ մարդիկը անյողդողդ պաշտպանումէին իւրեանց ամրոցը և արհամարհումէին նորանց, դոքա մորթումեն անողորմաբար քաղաքացիք ու շինականք և այրումեն նոցա բնակարանքը:»

— Համբերութի՛ւն. — մտածումէր պարոն Փլիւրիօլը, — կարգը կը հասանի և մեզ, այնուհետև մեք կը հատուցանենք նոցա տոկոսիքով (շահով) միասին:

Բարձրաձայն խռովութիւն լսվեցաւ խուղի առաջև. ապա իմաց տուեց մի ատրճանաւոր, թէ շատ շինականներ ցանկանումէին խօսել զօրապետի հետ:

«Ի՞նչ են կամենում նոքա:»

— Չգիտեմ ես, ողորմած պարոն, — ասաց ատրճանաւորը, — նոքա երևումեն շատ զայրացած:

«Գնանք, պարոններ», — ասաց Մօնգօմմերին:

Նոքա էին Կամբրայի բնակիչքը, որ յետ էին եկել իւրեանց քաղաքը և տեսանելով իւրեանց այրած ու քանդած օթևանքը, կատաղած ու կրակված աղաչումէին կոմսին վրէժխնդիր լինել այս վնասին. բայց երիտասարդքը միայն պատրաստ էին պատերազմ տալ վրէժխնդրութեան համար. և սոցա հրամայեց Մօնգօմմերին զէնք տալ և միւսերը, մի փոքր արծաթ տալով նոցա, ուղարկեց դէպ ի Ալանսօն:

Մօնգօմմերին շուտով վերահասու եղաւ, թէ ուր էր գտանւում Տարաննէսների բանակը, և որոշեց յարձակվել նոցա վերայ յառաջ, քան թէ նոքա աւելի կը պնդանային օգնութիւն ստանալով Մատինիօնից. արքայական զօրքը աւելի բազմաթիւ էր քան թէ նորա կիսակիրթ բազմութիւնը, բայց թշնամու թիւը ոչինչ էր նորա աչքումը:

Ըլմանէշ գիւղի մօտ հաստատել էր Տարաննէսը իւր զօրքի բանակը մի տափարակի վերայ. ծածուկ ճանապարհներով հասաւ այս տեղ Մօնգօմմերին և ճակատեցրեց իւր գունդը զարմացած ու հիացած Մօնտրեօյլի և երկու Տարաննէսների առաջև:

Մօնգօմմերիու հետ միաւորվել էին համարձակ ձեռնարկու զըլխաւորներ, որ կաթոլիկեան մատենագիրքը անուանել են աւազակք. բայց դոքա էին ազատաձեռն մարդիկ, հաստատուն իւրեանց հաւատի վերայ և սիրող ազատութեան, զոր օրինակ Լա Մօտտէ, Հերինէ Սպիապատը, Լա Նիւրնէ և այլն: Այն մարդիկը, որ գտանվումէին այդ զըլ-

խաւորների գրօշակի տակ, իցէ թէ ոչ ամենքեան էին շատ բարեգնաց մարդիկ, բայց Նոքա կամայապէս ենթարկվումէին պատերազմական կարգին: Մօնգօմէրին գիտէր այս, երկաթեղէն բնաւորութեամբ մարդերի հոգին, և կռուից յառաջ դարձուց դէպ ի Նոցա կողմը հետևեալ խօսքերս.

«Զինուորնե՛ր.

Դուք այժմ կանգնած էք ձեր յաւիտենական թշնամիների դէմուդէմ: Եթէ սիրելի է ձեզ կեանքը, ապա քաջասիրտ կացէք, պատերազմեցէք կատաղութեամբ, որովհետև թագաւորի կուսակիցքը վարվումեն մեր հետ որպէս անհաւատների հետ: Դուք ունիք վրէժխնդիր լինելու մի եղբօր, մի հօր կամ թէ մի բարեկամի համար. ձեր մայրերը կամ քոյրերը անարգված են, ձեր գոյքը կողոպտած, ձեր տուները կործանած և ձեր գիւղերը այրած ու մոխիր դարձուցած: Ֆրանսիական թագաւորի զօրքերը սպանումեն ձեզ փոխանակ պաշտպանելու. ձեզ տանջումեն ձեր հաւատի համար: Եկէք ուրեմն, բարձրացնենք մեր գլուխը և զարկենք մեր թշնամիքը, կոխելով մեր սուրը Նոցա սրտի մէջ: Անարժան է մարդուս լինել մարդու ստրուկ: Այս մի զարհուրելի անկարգութիւն է, մի յանցանք, որ պիտոյ է բնաջինջ անել. քաջ, մարդասէր, պատուաւոր, մեծահոգի կացէք և ձեր անունը կը գրվի ականաւոր մարդերի ցուցակի մէջ: Ռեֆօրմատեան կրօնը կը բարւոքացնէ մարդկութիւնը. այս պատճառով համբերեցէ՛ք, իմ որդիք: Նայեցէ՛ք այս կողմ, այն կողմ ձեր գլխաւորների վերայ. ի՛նչ մարդ էր քաջ Բրեսսօն. մի պատկերավաճառ, և զգոյշ Բերիզօն, յաջողակ Հերիվէն. հասարակ կտաւագործք. ասեմ այժմ, մի՞ թէ վարվումէի ես ձեր հետ ոչ որպէս ազնուականների հետ, մի՞ թէ համարումեմ ձեզ աւելի ստոր, վարվումեմ ձեր հետ մեծամտութեամբ: Ամենևին ոչ. այդպէս չէ՞: Ուրեմն նմանեցէ՛ք դուք այն վերոյիշեալ տղամարդերին, և եկէ՛ք ամենքեանքս աշխատենք իրագործել Յիսուսի Քրիստոսի վսեմական խօսքը. թէ ամենայն մարդու կը լինի հատուցումն ինչպէս գործած էր:»

Հազարաւոր ձայներ ընդունեցին այս խօսուածքը կոմսի. ամեն մինի երևակայութիւնը բորբոքված էր. ամեն մինը փափագով ցանկանումէր ստանալ մի սաղաւարտազարդ. լսելի էր մի երկար շշնջիւն, ապա թագաւորեց լռութիւն, և Մօնգօմէրին աղաղակեց միահընկեց ձայնով.

«Թշնամիների՛ վերայ. յառա՛ջ գնացէք, դուք զինուորքդ բարելաւութեան. Ապրի՛ Մօնգօմէրին և Նորմանդիան:»

—«Սպրի՛ Մոնգոմմերին և Նորմանդիան, — ձայն տուեցին հաղարաւոր, բորբոքված հոգով ձայներ, — մահ և թշուառութիւն Տարաննեսներին։»

Հրացանների կրակափոխութիւնքը երևումէին կրակոտ կոմսին շատ կամաց գործողութիւնք. Նա երկու կամ երեք հարիւր մարդով առիւծի պէս յարձակվեցաւ Գասպար Սօլի աղեղնաւորների վերայ։ Ամենեքեան խառնվեցան կռուի մէջ. սպանութեան աղմուկը սկսվեցաւ։

Ո՜հ, ի՛նչ գեղեցիկ և ազնիւ կռիւ. երկու կողմից ևս պատերազմումէին կատաղի մոլեկրօնութեամբ վառված. ո՜վ ժամանակների անքրիստոնեայ բարքերին։ Վա՜յ տկարին, վա՜յ յաղթվողին, որին չկար ողորմութիւն։ Մոնգոմմերին, ասես թէ մի գերաշխարհիկ զօրութիւն ստանալով ամենայն տեղ ներկայ էր և որոնումէր Գասպար դը Սօլին, որ նոյնպէս պատերազմումէր մի գերմարդկային քաջութեամբ, բայց բաղդը չհանդիպեցրեց նորանց միմեանց։

Երիտասարդ Տարաննեսը հետևելով միայն իւր քաջահոգութեանը, յարձակվումէ իւր գունդովը Մոնգոմմերիու վերայ. արքայական զօրքը յետ է քարշվում. Տարաննեսը վայր է ընկնում ձիուց. Նա իւր պատերազմական կացնովը սպանումէ Բրեսսօյին, հեծանումէ նորա ձիու վերայ և վազ ձգելով ձին, անցանումէ թշնամիների բազմութեան միջից։

Կաթոլիկները առ փոքր փոքր յետ են քարշվում. որովհետև երկու կողմերը ևս վաստակած էին, յառաջանումէ մի սակաւատև ըննադադարութիւն, ապա նոր ի նորոյ սկսանվումէ կռիւը։

Պատերազմական դաշտը մնաց Կալվինականներին, որ և գիշերը անցուցին այն տեղ։ Երկուքին կոմսերը Տարաննես և Մօնտրեօյլ պաշտպանութիւն գտանելով գիշերային խաւարից, փախած էին ահաւոր Մոնգոմմերիու երեսից։

Սա բաժանեց զօրքին ձեռք ձգած նշանաւոր աւարը (թալանը) և շտապեց դէպ ի Մոնգոմմերեան ամրոցը, իւր բոլոր ձիաւոր մարդերով։

Զ.

ՓԱԽՍՏԱԿԱՆԸ.

Երբ որ կոմսը իւր ամրոցի պատերի մէջ էր, բոլոր պահապան զօրքը գտաւ նա զինաւորված։ Նորան և նորա ձիաւորներին համարել էին պարոն Տարաննեսը և արքայական սօլդատներ։ Այս պատճառով մեծ

եղաւ նորա ուրախութիւնը, երբ որ իմացան թէ ով էր եկաւորը. սոլդատները ուղարկվեցան դէպ ի Վիմութիէ, և մի փառաւոր հացկերութիւն պատրաստվեցաւ։

Սա երկարացաւ մինչև խոր գիշեր, և էր մի տաղտկալի հացկերութիւն, որովհետև բոլոր զրոյցը քաղաքականութեան վերայ էր։ Վա՜յ այն տանը, որի մէջ ներս է մտանում քաղաքականութիւնը (պօլիտիկան)։ Փակեցէ՛ք դուռները այս վիճասէր պառաւի առաջև. դա խեղդում է ամենայն բան իւր ատելութեան տակ. բարեկամութիւնը, այս սուրբ կիրքը. սէրը, այս սակաւագիւտ և զմայլեցուցիչ զգացողութիւնը. ճարտարութիւնքը, այս հրաշալի պայծառացուցիչքը մարդկային հոգու. բանաստեղծութիւնը, այս երկնաքաղաքացի դուստրը իւր աստւածեղէն կերպարանքներով, բորբոքված երևակայութեան ոսկեղէն երազներով — ոչինչ, ոչինչ բան սուրբ չէ նորա համար։

Բայց դա, այս երեկոյիս ընդունեց ամենայն տեսակ պատիւ և յարգութիւն կոմսի ամրոցումը։

Կոմս Մոնգոմերին բերած էր իւր հետ մի ազնուական պարոն Բրիքքէվիլլ։ Սա մի մեծամարմին, քաջ տղամարդ էր, բայց մի այնպիսի կրակոտ քաջութեամբ, որ նոյնպէս շուտով անցանում է, ինչպէս նա դուրս է յարձակվում. Նա ունէր ազնուութիւն իւր բնաւորութեան մէջ, բայց շատ անգամ պակաս էր նորան բանական դատողութիւն և ներգործականութիւն։ Առաւօտուն վաղ, մի խօսակցութենից յետոյ նորա հետ, ներս մտաւ Մոնգոմերին այն փոքրիկ աշտարակի մէջ, ուր գտանվում էր գեղեցիկ Բէատրիքսի սենեակը։

Մանուկ աղջիկը քնած էր դեռ ևս, երբ որ նա ներս մտաւ. այնքան պարզութիւն, անմեղութիւն և գեղեցկութիւն փայլում էին նորա կերպարանքի վերայ, որ նա մի րոպէ դադարեց զմայլվելու նորա երեսին։

«Ի՛նչպէս հրաշալի մանուկ — շշնջեց նա — դա այնպէս գեղեցիկ է, ինչպէս իւր մայրը։ Ո՛վ իմ անբաղդ, նազելի Դիանա, որ մենաստանի մէջ թաղված են քո ցաւերը։ Այս մանուկս է մնացել ինձ քեզանից, մի հրեշտակ քո երեսի կերպարանքով, քո մեղմ և քնքուշ հոգով . . . . Տասն և հինգ տարի անցել են մեր սակաւատև հաղորդակցութենից յետոյ։ Երբ որ ես դուրս էի գնացել տանից, քեզ հեռացրեցին աշխարհից, և ոչ ոք կարող չէր ասել ինձ, թէ ուր ես դու։ Ով վատթարահոգի Տարաննէս, մի՛ թէ միանգամ հասանելու չէ վրէժխնդրութեան օրը։»

Այս միջոցին Բէատրիքսը շարժվեցաւ յանկարծ, նայեց կոմսի վերայ և կրկին քուն եղաւ։

—Անբաղդ մանուկ դու—խօսքը յառաջ տարաւ Մօնգօմմերին արտասուքը աչքերում և ձայնի մէջ.—Դու երջանիկ ես. դու չես տեսանում արիւնոտ երազներ և չես անցուցանում հալիչ ու մաշիչ գիշերներ: Բայց անագան է արդէն, զարթի՛ր, իմ մանուկ, զարթի՛ր, Բէատրիկս:

«Իմ հայր,»—ձայն արձակեց Բէատրիկսը, փաթաթվելով իր ծածկոցի մէջ:

—Հանգստացի՛ր, իմ զաւակ—ասաց Մօնգօմմերին,—ներէ՛ր որ ես զարթեցրեցի քեզ: Ինձ պարտ է այսօր առաւօտուն թողուլ Մօնգօմմերին, և որովհետև չգիտեմ, թէ ե՛րբ վերադառնալու էի, այս պատճառով կամէի խօսել քո հետ իմ դիտաւորութենների վերայ:

«Այսքան հաւատաւորութիւն ցուցանելով ինձ, ամաչեցնումէք ինձ, իմ բարի հայր.»—շշնջեց Բէատրիկսը:

—Ուշադրութեամբ ականջ դիր ինձ, Բէատրիկս, ծերութիւնը շուտով կը հասանէ ինձ. պատերազմի մէջ շուտով ծերանումէ մարդս, և իմ սիրտը դողումէ, երբ որ մտածումեմ քո վերայ, իմ անբաղդ զաւակ: Ամենայն օր կարող եմ ես մեռանել կռուի մէջ, բայց առաւել երկիւղալի է ինձ զարհուրելի տեսլութիւնը Մեդիչեան Կաթարինայի, որ նորերումս ինձ, որպէս մորդասպան, իմ պատկերի նշանով կախ է տուել Գռեվեան հրապարակի մէջ:—Եւ իմ դուստր,—յաւելացրեց կոմսը ամաչելով,—դու իմ տանս դաստիարակված ես որպէս իմ որդիքս, որովհետև իմ հայրական իշխանութիւնս միշտ պատկառելի է եղած. բայց, իմ անբաղդ զաւակ, ձախորդ հանգամանքներ, որ յիշել այժմ կարող չեմ և ոչ իսկ համարձակվումեմ, այնպէս են բերել, որ դու արտաքոյ ամուսնութեան ծնած ես, և ես չեմ կամենում, որ իմ մեղքը ձգէ քեզ վատաբաղդութեան մէջ:

«Հա՛յր, իմ բարի հայր.» — ձայն արձակեց Բէատրիկսը հեծեծելով:

—Ես մտածել եմ տալ քեզ մի ամուսին:

«Դու գիտես, իմ հայր, որ քո կամքը ինձ հաճելի է:»

—Ես գիտեմ այդ — ասաց կոմսը, — ես գտել եմ մի երիտասարդ, հարուստ և գեղեցիկ, մի պատանի Կոտենտէն քաղաքից:

«Ազնուատոհմ Բրի՞քքէվիլլը.»—ձայն տուեց Բէատրիկսը, սիրտը լցուած ահով:

—Այո, իմ զաւակ,—պատասխանեց Մօնգօմմերին,—բայց ի՛նչ խորհուրդ ունի այդ ահ ու երկիւղը: Այդ տղամարդը քեզ անարժան է երևում: Ո՛վ է այս տեղ գերազանց նորանից թէ գեղեցկութեամբ

և թէ նուրբ բարքով։ Նորա ազնուամտութիւնը սահման չունի. ինչ ես պահանջում աւելի։

«Ես կարող չէի այդ տղամարդը սիրել, իմ հայր, խնդրում եմ միւս ևս չխօսել նորա մասին։»

— Այդ մի երեխայի ինքնահաճոյ մտածութիւն է, Բէատրիքս, — պատասխանեց կոմսը խստապէս, — ինչ բանի համար նախատելի ես համարում նորան։ Արած է նա մի չարագործութիւն, որ հասած էր քո ականջին։ Ես անշուշտ խոստացել եմ նորան քո հարսնութիւնը, և մտածում եմ, որ ինձ պարտ էր իմ հօրերի առածին, թէ «հաւատարիմ կացիր քո ասած խօսքին» ուշադիր լինել։

«Դու միշտ ասած ես ինձ, թէ դու կամէիր ուրախութեամբ ու բաղդաւորութեամբ զարդարել իմ կեանքը. բայց եթէ հաւանէի ես այդ զուգաւորութեանը, կը լինէի անբաղդ։ Ես չեմ լինելու քեզ անհնազանդ, բայց դու, իմ հայր, կը մորթես ինձ։»

— Անօգուտ է քո ահ ու դողը, իմ զաւակ. Պաւլոս Բրիքքէվիլը մի կատարեալ ազնուական է։

«Ես չեմ ուրանում նորա բարձր ազնուականութիւնը, — պատասխանեց Բէատրիքսը ծանրութեամբ, բայց այս մեր խորին տառապանքի ժամանակներումս կին մարդը կարօտ է մի ամուր նեցուկի, մեր կողմնակիցքը կարօտ են այնպիսի մարդերի, որ ունէին մի անյողդողդ և անհաստատ ներգործականութիւն. Թէպէտ պարոն Բրիքքէվիլլը շատ քաջ մարդ է, բայց չունի մի մեծ հաստատուն բնաւորութիւն. և ես կամենում եմ մի ամուսին այր որ օգնական էր քեզ, որ բաժանորդ էր քո գլխի անցքերին, որ պաշտպան էր քեզ քո թշնամիների երեսից. մի այր մարդ, որին չէր կարող ոչինչ խոստում յողդողդել (տեղից խախտել), ոչինչ վրէժխնդրութիւն շեղել դէպ ի միւս կողմ, և այժմ փորձի՛ր դու ճշդութեամբ պարոն Բրիքքէվիլլին և դու արդարացնելու ես ինձ։»

Այս զօրաւոր դատողութիւնը բացեց Մօնգոմմերիու աչքերը. բայց նա չէր հանգստացած իւր սիրելի զաւակի ապագայի մասին. Նա մեծապէս քաջալերեց նորան որոշել իւր կամքը, այնպէս, որ աղջիկը ձայն արձակեց, երեսը թագուցանելով իւր ձեռքերի մէջ.

«Հա՛յր, ես սիրում եմ մի մանուկ ասպետ։»

— Աւելի բարւոք, իմ դուստր. արժանի՞ է նա քեզ։

«Ո՛վ. այդ մասին կասկած չունիմ ես, հայր։»

— Պատերազմո՞ղ մարդ է նա։

«Այո՛.»

—Նորա անունը ի՞նչպէս է։

«Ես չգիտեմ . . . . բայց սիրումեմ նորան,» —յաւելացրեց ամօթապարտւած։

—Մտածե՞լ ես դու, թէ ի՛նչ վտանգներ կարող են յառաջանալ այդպիսի սիրուց, —հարցրեց կոմսը տրտմութեամբ։

«Նա բարձր տոհմից է, նա գեղեցիկ է և նորա հայեացքի մէջ կայ ներգործականութիւն. և դու, կոմս Մօնգօմմերի, չես բարկանալու իմ վերայ, որ ես միներգործական ամուսին այր ընտրել եմ ինձ։»

—Բայց այդ անծանօթը գուցէ՛ թէ երբէք չհանդիպի քեզ միւսանգամ, ով Բէատրիքս. այնուհետև ինչպէս կը լինի քո դրութիւնը։

«Ո՜վ, մի՛ խլիր դու ինձանից այդ յոյսը, իմ հայր, —ձայն արձակեց աղջիկը զմայլված հոգով, —նա, անտարակոյս, կրկին գտանելու է ինձ։»

—Եթէ քո սիրած ասպետը լինէր մի թշնամի մարդ . . . . . . հարցրեց կոմսը։

«Ո՜հ —ասաց նա գունաթափվելով, —այդ անկարելի է։»

—Աստուած պաշտպանէ քեզ, իմ թանգագին զաւակ, —պատասխանեց Մօնգօմմերին գրկախառնելով նորան, —մեք միւսանգամ կը խօսենք այդ մասին։ Մնաս բարեաւ, ես շտապումեմ յաղթահարելու մեր թշնամի Մատինիոնը և Տարաննէսը։

«Զգուշացի՛ր այդ դաւաճաններից, հա՛յր. այդ Տարաննէսքը կործանութիւն կը բերեն մեր տան վերայ։»

—Մի՛ կռիւ ևս, ինչպէս որ երեկից յառաջ եղած է, և ահա նոցա զօրքը ոչնչացրած կը լինի, կը հանգստանայ Նորմանդիան, և ես կարող էի թագաւորամայրը, իմ անհաշտելի թշնամին ստիպել դէպ ի մի օգտակար խաղաղութիւն մեր հետ. ես ոչինչ բան աւելի չեմ խընդրում Աստուծուց։

«Այդ մի ազնիւ ցանկութիւն է։ Բայց զգո՛յշ կաց, հա՛յր, և մտածի՛ր, որ Տարաննէսքը գիտեն գործ դնել և սուր և դաշնակ։»

Պարոն Բրիքքէվիլլը, ընդունեց Բէատրիքսի պատասխանը արհամարհութեամբ. ապագան արդարացրեց Բէատրիքսի կարծիքը նորա մասին. նա յիրաւի թողեց իւր կուսակիցը և սկսեց կռուել ընդդէմ իւր հին համակրօններին։

Մօնգօմմերին իւր բոլոր եղբարքը, որդիքը և բարեկամքը վեր կալաւ իւր հետ, և թողեց ամրոցումը քսան մարդ միայն, մի քաջ և փորձառու աստիճանաւորի պաշտպանութեան տակ. նա ժողովեց իւր մարդիկը Վինուարէ քաղաքի մօտ և միւս օրին տեղափոխվեցաւ դէպ ի Կանն, հանդէպ գնալով թշնամուն։

Իւր հօր և եղբօրների յաճախ բացակայութեան միջոցին, Բէատրիքսը սովորութիւն ունէր գրչագիր մատեանքը ծաղկազարդել, և այս արուեստի մէջ շատ հմուտ էր և սիրով պարապումէր դորան. ինչն ու ասեղ անհոգ էր արած նա: Կոմսի հրաժարման երեկոյին, երեք մարդիկ վեր ելան այն ապառաժեայ ճանապարհը, որ տանումէր դէպ ի ամրոցը. միջին տղամարդին համարեա թէ կրումէին ձեռքերի վերայ երկու միւսերը. ոչ մինը չունէր պատերազմական հագուստ, օգնականքը ունէին իւրեանց վերայ շինական հանդերձ, հիւանդը մի հոգևորի կամ վանական սպասաւորի սև զգեստ. մեծ աշխատութեամբ հասան նոքա այն բլուրի ոտքին, որի վերայ կառուցած էր աշտարակը. նոցա մնումէր դեռ ևս մօտ հարիւր քայլափոխք առնելու, երբ հիւանդը յանկարծ ասաց մի թոյլ ձայնով.

«Եթէ չշտապէք դուք, կը մեռանիմ ես:»

— Քաջալերվի՛ր, ողորմած պարոն, ահա մեզ տեսած են ամրոցից և անշուշտ մարդ կը գայ օգնելու մեզ:

«Եթէ չեմ սխալվում ես, այս պիտոյ է լինի Ֆիարդէլ պարոնի ամրոցը . . . Ո՛վ, շատ խիստ ցաւումեն իմ վէրքը . . . Տեսանո՞ւմես դու, Օնփրուա, այն տոհմանշանը ամրոցի դարպասի վերայ:»

— Այո՛, ողորմած պարոն. — ասաց միւսը շինականի հագուստով:

«Ֆիարդէլն է սա:»

— Մի ոսկեղէն, զինաւոր առիւծ երկնակապոյտ յատակի վերայ:

«Ո՛վ իմ Աստուած, ո՛ւր եմ ես.» — ձայն տուեց վիրաւորը ցաւելով և սիրտը գնաց: Բայց ամրոցից տեսած էին նորանց:

Շարժական կամուրջը ցած թողվեցաւ, ծեր աստիճանաւորը դուրս եկաւ և հրամայեց վտանգաւոր վիրաւորվածը տանել այն դահլիճը, ուր Մոնգոմմերեանքը սովորաբար ընդունումէին օտարականքը: Օնփրուա, խորամանկ Նորմանդացին ասաց, թէ այս մարդուն գտել էր ճանապարհի վերայ և ցաւակցութեամբ բերել էր սորան, իւր ընկերներով այս տեղ:

«Բարի գործ ես գործել, շինական — ասաց աստիճանաւորը, — այս տեղ կը դարմանեն (կը հոգան) նորան: Դուք կարող էք գիշերը այս տեղ անցուցանել, կամ թէ գնալ:»

— Մեք գիշերը կը մնանք այս տեղ, որովհետև ձեր մարդասիրութիւնը թոյլ է տալիս մեզ:

«Բրունօ, տա՛ր այս մարդիկը դէպ ի կերակրատունը և հաց տուր նոցա ուտելու, — հրամայեց աստիճանաւորը: — Դու, Պիէրրիէ, գնա՛ գանչիր այս տեղ վիրաբոյժը և աղջիկ Բէրթան:»

Երիտասարդը գտանվում էր խորին ուշաբարձութեան մէջ: Վիրաբոյժը եկաւ իւր կապոցով և պառաւ կնամարդը իւր օծանելիքով: Վէրքը քննեցին. կանացի Էսկուլապը յայտնեց, թէ գեղեցիկ երիտասարդը, մի տարին չվերջացած, գտանելու է բժշկութիւն: Վիրաբոյժը շարժեց թիկունքը և ասաց. — այդ երիտասարդը չունէր ապրելու և երեք օրից աւելի: Աղջիկ Բերթան բորբոքվեցաւ, վիրաբոյժը բարկացաւ, և երկուքի մէջ պիտոյ է իսկոյն մի կոպիտ վէճ ծնանէր, երբ Բէատրիքսը ներս մտաւ:

—Նայեցէ՛ք այս անքաղաքավարի մարդուն, աղջիկ պարոն, — ձայն տուեց բարկութեամբ պառաւ աղջիկը, — նա արհամարհում է իմ ճարտարութիւնը:

«Այդ ի՛նչ բան է, արուեստագէտ Յոհանն, դուք մոռանում էք ձեր յարգութիւնը դէպ ի մի տիկին:»

— Խնդրեմ ներողութիւն ձեր մարդասիրութենից, — պատասխանեց վարսավիրան (դալլաքը), — բայց յայտնի է ահա, որ նա մեռանելու է:

«Իմ օծանելիքս կը փրկեն նորան.» — պատասխանեց Բերթան:

— Մի՛ թէ այդպէս վտանգաւոր էր երիտասարդի դրութիւնը, — ասաց մանուկ աղջիկը մեղմապէս, սրտցաւութեամբ մօտենալով վիրաւորին:

Մեղմահնչիւն ձայնը երևեցաւ աւելի զօրաւոր, քան թէ բըժիշկների աշխատութիւնքը. վիրաւորը թուլութեամբ բարձրացրեց գլուխը, կիսով չափ բացեց աչքը, փորձ փորձեց արտասանել մի անուն և դարձեալ յետ ընկաւ:

«Ո՛վ Աստուած, ահա մեռանում է նա — ձայն տուեց Բէատրիքսը գորովաշարժ սրտով, — հրամայեցէ՛ք Օրբէսից մի վիրաբոյժ բերել. մի՛ թողէք երիտասարդին մեռանել առանց օգնութեան:»

— Անհոգ կացէք Բէատրիքս, ասաց Բերթան սնափառութեամբ:

Հիւանդը շարժվեցաւ մի փոքր, և երբ որ ամրոցի մանուկ տանտիկինը խոնարհեցաւ նորա վերայ, լսեց նա երիտասարդի կիսամեռ ձայնով շշնջիւնը.

«Բէատրիքս, — Բէատրիքս:»

— Աստուած իմ, Աստուած իմ. ի՛նչպէս կարելի է փրկել նորան, — գանչեց նա դողդողուն ձայնով:

Նա ճանաչել էր այն մանուկ հոգևորին. սա էր Վիլհելմ Սօլտարաննէսը, չարաչար վիրաւորված կռուի մէջ Ալմանէշեան դաշտավայրումը, որ պատահմամբ բերված էր իւր ազգատոհմի շատ վտանգաւոր թշնամու ամրոցը:

Է.

ՄԵԴԻՉԵԱՆ ԿԱԹԱՐԻՆԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՈՐԱ ՊՏՈՒՂՔԸ.

Նորմանդիան այն ժամանակին գտնվումէր մի ահաւոր դրութեան մէջ: Կաթարինա թագուհին իւր կոյր ատելութեան մէջ ասած էր իւր պալատականներին. բնաջինջ արեցէք ամեններին որ կ'ընդդիմանային, հալածեցէք տկարները և երկիւղ ձգեցէք նոցա սիրտը, որ յետ դառնան նոքա դէպ ի ուղիղ ճանապարհը. ապա թէ ոչ, սուրը յանձն կ'առնու քահանայի պաշտօնը: Եւ այս հրամանը մի անօրինակ ներգործականութեամբ կատարվեցաւ: Խեղդումէին կանայք ու ծերունիք, և Քրիստոսի սպասաւորքը տալիս էին իւրեանց օրհնութիւնը սպանողներին: Սարսափելի գործ.....

Ռուանը վնասվեցան ըը Կոտենտէն, ըը Բօրաժ սահմանքը և Կաէնի ու Ալանսօնի շրջակայքը:

Ամենայն կողմից հալածվելով և փախստական լինելով, դարձան Պրոտեստանտքը ևս աւելի անգութ, քան թէ իւրեանց հալածողքը. պատճառ, վրիժասիրութիւնը շատ խոր տնկած է մարդուս բնութեան մէջ: Կաթոլիկների կատաղութիւնը գործ ունէր մարդերի հետ, բայց Պրոտեստանտքը ջարդում ու փշրումէին և շինուածներ, վայրենի ամբոխներ շրջումէին գեղեցիկ Նորմանդիայի մէջ կործանելով հոյակապ եկեղեցիներ և կողոպտելով հարուստ մենաստաններ:

Մինչև այն մեծ յանցանքը, Բարթողոմեան գիշերը (որ յայտնի է և անունով Սէն-Բարթելեմիի հուգոնոտներէ փորձէր) (*) Նսեմացրեց այս բոլոր զարհուրելի անցքերը քաղաքական պատերազմի, երկու կողմից փոխադարձաբար եղած է ահարկու վրէժխնդրութիւն. կաթոլիկեան քահանայքը մկրտումէին բռնութեամբ, Պրոտեստանտները կոտորումէին բոլոր քահանայքը որ հանդիպումէին նոցա:

Մօնգօմմերեանքը անպարտ էին այս վրէժխնդրութենից, բայց թէև այդպէս էր իրը, այնու ամենայնիւ նոցա անունով էր կատարվում այդ վրէժխնդրութիւնը: Գաբրիէլ Մօնգօմմերիու անունը, էր այն խօսքը որ իբրև պատուէր հրամանի լցուցանումէին նորա կուսակից-

(*) Տես Ստեփանոս Նազարեանցի «Հանդէս Նոր Հայախօսութեան» գրքի մէջ. Հատոր Բ., երես 328—337. Մոսկվա, 1857.

քը. և այս բոլոր աւազակների ձեռքով կատարված չարագործութիւնքը ընծայվում էին այն ամենայնիւ սրտին, որ կար Թագաւորութեան մէջ։ Կոտորածը, որ հասաւ արքայական զօրքին Ալմանէշեան դաշտավայրերումը, ազատ ընթացք տուեց Կալվինական կողմի անառակ մարդերի անպիտան ախտերին։ Բրեսօն իւր աւազակախումբ բազմութեամբը յարձակվեցաւ Մօնտրեօյլ լ՚ Արժիլիէ փոքրիկ սահմանի վերայ և ստիպեց մագիստրատին, որ իբրև քահանայք ուղեկից լինէին զօրքին։ Վերադարձի միջոցին ընկաւ նորա ձեռքը մի փառաւոր արկղիկ սուրբ նշխարների, որ Կաթարինան սահմանել էր Սանտ-Էվրուլ վանքի համար. հրապուրվելով այս ճոխ կողոպուտից, կամեցան նոքա գիշերին յարձակվել վանքի վերայ, բայց սա զգուշացած էր յառաջուց. աւազակների մեծ մասը կոտորվեցան, բայց արկղիկը մնաց անգիւտ։ Վանահայրը իսկոյն լրատար արձակեց դէպ ի Թագուհին, իմաց տալու նորան պատահած կորուստը։

Ը.

ԲԱՐԻ ԱԲԵՂԱՆ.

Այն օրի առաւօտուն, երբ Սանտ-Եվրուլեան մենաստանի սուրհանդակը եկած էր Փարիզ, մի երկարահասակ չոր ու ցամաք ծերունի կիսով չափ սև և կիսով չափ սպիտակ հագուստով քայլում էր Սանտ-Հօնորէ փողոցի միջով. տարիքը թեքել էին նորա քամակը, նորա մարմինը ցուցանում էր թուլութիւն, բայց նորա թուխ և թափանցուն աչքերը, ցուցանում էին դեռ ևս մի զուարթ հոգի։

Բազմութիւնը պատկառանքով հեռանելով նորան և նա օրհնելով բազմութիւնը, ծանր քայլով շարժվում էր նա դէպ ի Լուվրի դարպասը. այս տեղ իսկոյն ներս բերվեցաւ նա արքայական ընդունելութեան մեծ դահլիճը, որ գտնվում էր Կաթարինայի սենեակների առաջև։

Այս ծերունին գալիս էր Իտալիայից, էր մի կրօնաւորի եղբայր Սուրբ Կուսի վանքից Ֆլօրենտիայի մէջ և վաղեմի խոստովանահայրը Թագուհու։ Սա մտաբերել էր նորա բարի խորհուրդները իւր նեղութեան մէջ և խնդրել էր նորան գալ իւր մօտ։

Արքայական ընդունելութեան դահլիճումը գտնվում էին շատ աստիճանաւորք և մանկլաւիկներ. սոցա մէջ կային նոյնպէս մեղ ծանօթ Լավալետտը և Մօնմօրանսին. խօսք բացվեցաւ այն կոտորածի վերայ, որ եղած էր Ալմանէշի դաշտավայրերումը, և երիտասարդ Տարաննէսի մասին, որ համարում էին մեռած։

«Ես տրտում եմ այդ բանի վերայ Բէատրիքսի մասին, այն գեղեցիկ անծանօթ աղջկայ մասին, որ նա պաշտում էր իւր հոգու մէջ, — ասաց Մօնմօրանսին կէս մի հեգնաբար և կէս մի տրտմութեամբ, — այսուհետև յուսահատվելու է նա և կը մեռանի իւր սրտի ցաւից։»

— Այս անբաղդ Սօլ-Տարաննէսը» — ձայն արձակեց Լավալետտը.

— Թագուհի Կաթարինան, ասումեն թէ շատ զայրացած է, երդումն է արել, որ չթողու մի քար Մօնգօմմերեան ամրոցի վերայ, և նա բաւական մեծապատիւ կին է, որ անկատար չթողու իւր երդումը... բայց ով է այն աբեղան. ո՜հ, ի՛նչպէս բարի է նորա դէմքը։ Ահա նա տալիս է մեզ իւր օրհնութիւնը։

«Հետ քարշվեցէք դուք չար դևերդ», — ձայն տուեց մի ծեր պարոն խոշոր ձայնով։

Մօնմօրանսին կամէր իսկոյն խստութեամբ պատասխանել, և ահա մի աստիճանաւոր յանկարծ բացեց դահլճի դուռը և բարձր ձայնով գանչեց հայր Ջիակօմօյին։

Նա հետևելով աստիճանաւորի քամակից ներս մտաւ այն սենեակը, ուր գտանվումէր Կաթարինան սաստիկ բարկութեան մէջ։

«Աստուած օգնական, վերապատուելի հայր, — ասաց նենգաւոր Ֆլօրտինացի կինը — բարեաւ եկիք իմ որդու պալատը։ Եւ Ֆլօրտինան, այն գեղեցիկ Թագուհին Արնօ գետի, ինչպէս էք թողել նորան.... Եւ Մեդիչեանքը։»

Բայց թէպէտև Թագուհին եկաւորի վերայ թափեց մի հեղեղ ղանազան հարցուածների, այնու ամենայնիւ հայր Ջիակօմօն նկատեց, թէ ի՛նչպէս դժուար էր Թագուհուն ծածկել իւր սրտի եփ եկած կատաղութիւնը, և ասաց.

«Տարիքը առանց զօրութեան անցել են ձեր համար, տիկին։ Հին Ֆլօրենտինեան ատելութիւնը բարկանումէ տակաւին ձեր սրտի մէջ. անօգուտ է եղել իմ գրաւոր և բերանացի աշխատութիւնը սանձահարելու նորան։ Ի՛նչ ունիք դուք դեռ ևս ձեր սրտի մէջ։»

— Ի՛նչ ունիմ ես — ձայն արձակեց Թագուհին կատաղի ձայնով — Մօնգօմմերին, այն դաւաճանողը, յաղթել է Տարաննէսին, Թագաւորը կորուսանումէ իւր առաւել ընտիր քաղաքները, և ես կարող չեմ վրէժխնդիր լինել։

«Միշտ և հանապազ վրիժառէր լինել. — այդ ի՛նչ բան է։»

— Այո, այո, վրէժ.... դուք չգիտէք դորան. ես պիտոյ է վրէժխնդիր լինիմ այդ չարագործից։»

«Մի չարագործ» — հարցրեց հայր Ջիակոմոն տարակուսելով։

— Մի՞ թէ մոռացած էք դուք, որ այդ մարդը սպանել է Հենրիկոս երկրորդին, իմ ամուսինը։

«Ֆրանսիայի թագաւորը մեռած է մի ձախորդ պատահարով։»

— Բոլորը մին է, — ասաց նա ևս աւելի բարկացած, — Մոնգոմմերին վերադարձել է աքսորքից, խորտակել է իմ զօրքը, և ես, եթէ հարկաւոր լինի, ինքս կ'առաջնորդեմ զօրագունդերին։

«Դուք անիրաւ էք դէպ ի կոմս Մոնգոմմերին», — ասաց աբեղան մեղմապէս։

— Անիրաւ, — պատասխանեց թագուհին մեծամտութեամբ, — նա հերձուածող է, ապստամբ է, մեղապարտ ձեռքով մօտեցել է տկար քահանաների։ Նա հալածած կը լինէր ինձ մինչև Ֆլորենիա, եթէ բաղդը ձեռնտու եղած չլինէր ինձ Սան-Դենիսեան դաշտավայրերում։ Անիրաւ եմ ես......

«Մի՞ թէ կարելի չէր հեզութեամբ գործ կատարել։ Մարդասիրութիւնը է թագաւորի առաւել պատուական թագը։ Ֆրանսիան լսպառվել է զօրութենից, նա կարօտ է հանգստութեան։ Առաջարկեցէ՛ք ձեր թշնամուն խաղաղութիւն, տիկին։»

— Ե՞ս պիտոյ է խաղաղութիւն առաջարկեմ իմ թշնամիներին. ո՛չ երբէք։

«Ես ութսուն տարօք մարդ եմ, ի՛մ դուստր, և ունիմ մի հաշտողական հոգի, ուղարկեցէ՛ք ինձ կոմս Մոնգոմմերիու մօտ։»

— Ո՛չ, ոչ. Մոնգոմմերին մի պատուասէր մարդ է, որ պիտոյ էր բռնութեամբ յաղթահարել. ես կամենում եմ նորա անունը բնաջինջ անել Ֆրանսիայից։

«Այժմ խօսում է ձեր սրտի մէջ ատելութիւնը միայն, — պատասխանեց ծերունին խստապէս, — յառաջ դուք հետևում էիք իմ խորհուրդներին, այժմ իմ մնալը ձեր մօտ անօգուտ է։»

— Դուք կը մնաք, Ջիակոմօ. այդպէս է հաճոյ ինձ, — ձայն տուեց Կաթարինեան կատաղի կերպով, — բայց դատեցէ՛ք ինձ արդարութեամբ. մի՛ թէ կարող էի ես թոյլ տալ այս երկպառակութիւնը թագաւորութեան մէջ. ոչ, այդպէ՞ս չէ։ Բայց այդ երկպառակութեան շարժող հոգին է Մոնգոմմերին. նա չէ մի սովորական տղամարդ, ես վերահասու եմ այդ բանին. նա իւր կուսակիցների մէջ ունի երկրորդ տեղը, բայց աւելի երկիւղալի է քան թէ ծովապետը (Կոլինյին)։ Նա մի շատ հաստատամիտ և վճռական մարդ է, ունի ընդարձակ գիտութիւնք, մեծ նպաստամատոյց աղբիւրներ։ Ծովապետը մի յաջողակ մարդ է,

մի իմաստուն կառավարիչ, մի զգոյշ զինուոր. բայց Մօնգոմմէրին է մի խորին քաղաքագէտ, մի պատուասէր մարդ, մի կազմակերպող հոգի, մի մեծ պատերազմող։

«Ուրեմն տիկին, ինչո՞ւ չէք գրաւում դուք նորա սիրտը, որ լինի նա ձեր ծառայ քան թէ ձեր կատաղի թշնամին։»

—Այդ շատ անագան է այժմ, — ասաց նա վճռապէս. — Նա պիտոյ է մեռանի և դուք պիտոյ է թողութիւն տաք իմ ատելութեանը, որովհետև արդա՛ր է դա։

«Դուք շատ հաճոյակատար էք ձեր ախտերին», — ասաց բարի ծերունին։

—Դատապարտեցէ՛ք ինձ, եթէ կամիք, Ջիակոմօ. ես այն ժամանակը միայն երջանիկ կը լինիմ, երբ որ Մօնգոմմէրին և ծովապետը կը կախվին Գռեվեան հրապարակումը. ես կարող չեմ ներել իմ թշնամիներին։

Բարի ծերունու աշխատութիւնը անօգուտ էր այս կամակոր կնոջ ատելութիւնը յաղթահարելու։ Կաթարինան գտանում էր հազար պատճառներ ընդդիմագրելու իւր չափաւորութեանը, և ձայն արձակեց ատամները կրճտելով.

—Այս Մօնգոմմէրին, որին դուք համարում էք ազնուասիրտ, Ալմանէշեան կռուի դաշտումը սպանել է մի մանուկ, ողորմութիւն աղաչող ասպետ Սօլ-Տարաննէս անունով։

Յանկարծ բացուեցաւ դուռը և թագուհուն իմաց տուեցին, թէ եկած են պարոն Մատինիոնը և մի աբեղայ Սանտ-Էվրուլ վանքից։

—Կարող են նոքա յանդիման լինել ինձ, — ձայն տուեց Կաթարինան. — Բարեաւ եկիք, պարոն Մատինիոն։

Թագուհին աչք ձգեց աբեղայի մագաղաթի վերայ, գունաթափվեցաւ, տուեց մագաղաթը կարդալու Ֆլորենտինացի հոգևորին և ձայն արձակեց բարկացած.

—Միշտ և հանապազ այս Մօնգոմմէրին... չափից դուրս բան է այդ։ Պարոն Մատինիոն, դուք թագաւորի տեղակալ էք Նորմանդիայի մէջ, ես կը տամ ձեզ բացարձակ իշխանութիւն։ Դուք այս երեկոյիս ճանապարհ կ՚ընկնիք, և լաւ մտածեցէք, որ Մօնգօմմէրին կենդանի կամ մեռած պիտոյ է հասուցանվի ինձ։

Այնուհետև շտապեց նա դէպ ի Կարոլոս իններորդը, որ հաւանեցնէ նորան երկարացնել քաղաքական կռիւը, որ տալիս էր թագուհի մօրը այնքան մեծ ազդեցութեան հանդէս։

Թ․

ՄՕՆԳՕՄՄԵՐԻ ԿՈՄՍԻ ԴՈՒՍՏՐԸ․

Այն երեկոյին, երբ Բէատրիքսը այն վիրաւոր մարդու մէջ ճանաչեց երիտասարդ ազնուականը որ այնքան խոր տպաւորութիւն էր արել նորա վերայ, նոյն երեկոյին և Տարաննէսը, թէև շատ սաստիկ էին նորա ցաւքը, միւսանգամ ճանաչեց այն կապոյտ աչքերը որ զմայլեցրել էին նորան։

Երկու մանուկ մարդերի դրութիւնը տարակուսելի դարձաւ․ Տարաննէսի հիւանդութիւնը սաստկացաւ նորա սրտի խորին շարժողութեամբը, և Բէատրիքսը ողջոյն ժամեր հսկելով նորա մահճի մօտ գուշակումէր նորա ցանկութիւնքը նորա հայեցուածներից, որովհետև երիտասարդի վէրքը թոյլ չէին տալիս նորան խօսել։

Վտանգը փոքրացաւ այն հոգաբարձութեամբը որ արվեցաւ նորա համար․ մի յաջողակ բժիշկ անտարակուսելի կացուց նորա վերստին առողջանալը, և հիւանդը կարող էր մի քանի ժամանակից յետոյ քանի մի բառ խօսել Բէատրիքսի հետ։

Երկուքը մինչև այն րոպէն չգիտէին միմեանց կրօնական դաւանութիւնը, և իւրեանց մտքի մէջ մեծապէս զբաղված էին այդ բանով՝ Տարաննէսի սիրտը լցուած էր ֆանատիկոսութեամբ (մոլեկրօնութեամբ)․ Նա ընդունակ էր ազնուահոգութեան, բայց նորա գաղափարները կարճ ու նեղ էին․ Ինչ դատողութիւնք յառաջուց արմատացած էին նորա մէջ, դոցա վերայ մնումէր և կամակորված․ չէր կարելի միամիտ լինել նորա մասին, որովհետև նորա սիրտը կատարեալ ստրուկ էր նորա խելքին։

Բէատրիքսը ունէր դորա ներհակ պակասութիւնը, եթէ սէրը, իւր ամենավերին ծայրին հասուցած, այդ աստուածային սէրը կարող էր լինել մի պակասութիւն։

Այնու ամենայնիւ նոքա սիրումէին միմեանց մի վառվառուն, թէև ճնշած ախտով։ Տարաննէսի սիրտը շարժվելով այն քաղցր հոգաբարձութենից, կամենումէր իմանալ թէ ում էր պարտական այդ շնորհը, և Բէատրիքսը միտ դնելով նորա դրութեանը, հրամայեց բոլորեցուն լուռ մնալ այդ մասին։

«Ի՞նչ ահարկու կռիւ է — խօսեց նա մի երեկոյ, երբ Բէատրիքսը և Բերթան հսկումէին նորա մօտ — մի՛ թէ աւելի բարւոք չէր լինելու, եթէ վերջանար քաղաքական պատերազմը, և Ֆրանսիան կարողանար հանդէպ գնալ իւր դուրսի թշնամիներին։»

— Ի հարկէ — պատասխանեց մանուկ աղջիկը, — ես արտասւումեմ այս պատերազմերը որ աղքատացնումեն մեզ։

«Հաւատո՞ւմէք դուք, աղջիկ տիկին, թէ արդարութիւն է, որ Թագաւորի կուսակիցքը այդպիսի խստութեամբ վարվումեն կալվինականների հետ», — հարցրեց Տարաննէսը միամտութեամբ։

— Զգիտեմ, պարոն. կալվինականքը այժմուս այնքան ևս անգութ են, ինչքան կաթոլիկեանքը։

Տարաննէսը կծեց շրթունքը և յառաջ տարաւ խօսքը.

«Թագաւորի կուսակիցքը ձախորդութեան մէջ են այժմ, գուցէ թէ մի բաղդաւորութիւն է այդ. ծովապետը պիտի ցանկանար հաշտութեան։»

— Նորան ցանկանումեն բոլոր բարի մարդիկը. և Թագաւորը, ինչպէս ասումէ իմ հայրը։

«Ու ձեր հօրը, աղջիկ տիկին, պիտոյ է շատ ցաւելի լինէր տեսանել այդքան ատելութիւն և սպանութիւն։»

— Իմ պարոն, խօսենք բացորոշակի, — ասաց Բէատրիքսը արժանավայել կերպով, — ես չեմ հարցրել ոչ ձեր անունը և ոչ ձեր կուսակցութիւնը. բայց ես կամենումեմ արձակ համարձակ ասել ձեզ. դուք գտանվումէք այս տեղ կալվինականների մէջ։

Տարաննէսը արեց մի ակամայ շարժողութիւն. երբ որ Բէատրիքսը նկատեց այդ բանը, սառն քրտինք երևեցաւ նորա ճակատի վերայ. բայց նա յառաջ տարաւ խօսքը.

«Մեր կրօնը, որ այդքան շատ պախարակումեն, — ասաց նա, — ուսուցանումէ սիրել ամենայն մարդիկ։ Մեք ամենքեանքս մի ազգ ենք. ընդէ՞ր ապա պիտոյ էր մի քանի կրօնական խտիրների (տարբերութենների) պատճառով բոլոր Ֆրանսիան ընկղմել արիւնի ու արտասուքի մէջ։ Ի՛նչ հարկաւոր էր ատել, եթէ կարելի է սիրել։ Ո՜վ, ես աւելի մեծ եմ զգում ինձ.....»

Յանկարծ դադարեցրեց նա իւր խօսքը. նորա սիրու գաղտնիքը փախել էր նորա բերանից, յառաջ քան թէ Տարաննէսը քաջալերել էր նորան այդպիսի խօսք յառաջ բերել. նա շփոթված էր և մեծ ալէկոծութեան մէջ։

Տարաննէսը կամեցաւ օգուտ քաղել իւր յաղթութենից և անփոյթ արեց հանգստացնել նորան. նորա սէրը նոյն րոպէին սառնացած էր կրօնական ֆանատիկոսութեամբ. թէպէտ նա սիրումէր Բէատրիքսին, այնու ամենայնիւ դող ընկաւ նորա սիրտը այն հին կարծիքներից որ նորա հետ միասին մեծացած էին։

Այնու ամենայնիւ յոյս ունէր նա, թէ Բէատրիքսը նորա համար ուրանալու է իւր հայրենական կրօնը, և այս պատճառով ասաց մեղմաբար.

«Ես սիրում եմ ձեզ, Բէատրիքս. իմ ատիճանս հաւասար է ձեր ատիճանին, սկսեալ այն ժամանակից երբ ես տեսայ ձեզ եպիսկոպոսի մօտ, ձեր պատկերը հիւսած է իմ բոլոր քաղցր երազների հետ ապագայի մասին: Արժա՞ն էր ինձ իմ բաղդաւորութիւնը զոհ բերել կրօնական մոլորութենների: Այնու ամենայնիւ ջերմեռանդ կաթոլիկ եմ ես:»

—Ունի՞ք դուք հայր, —հարցրեց Բէատրիքսը խռովութեան մէջ:

«Այո, աղջիկ տիկին. նա ռեֆօրմատների կատաղի թշնամիներից մինն է, և ես մինչև այժմ համախոհ եմ գտանվել նորան:»

—Աստուած իմ, որպիսի կուրացութիւն, —ձայն տուեց մանուկ աղջիկը, —այդ կրօնական տարբերութիւնը լինելու է իմ անբաղդութեան աղբիւրը:

«Ի՛նչ հարկաւոր էր ահաբեկ լինել դորանից, —ձայն տուեց Տարաննէսը բորբոքված, —կեանքը երկար է, և լոյսը թափանցում է նոյն իսկ ամենախաւար և շատ կոշտացած սրտերի մէջ: Մի շատ գեղեցիկ բան է սիրելով միմեանց աղօթել միասին, դաւանել միայն մի նըշան, միայն մի հանգանակ հաւատի: Ո՜հ. դուք լինելու էիք իմ պարծանքը:»

—Եւ ինձ լինելու էր պարծանք, ձեզ յանդիման կացուցանել իմայիններին:

«Բայց կաթոլիկութիւնը միայն գեղեցիկ ու սուրբ է. բոլոր մնացածը մոլորութիւն է:»

—Խաբէութիւն և նենգսրտութիւն. ձեր քահանայքը անարժան են:

«Մի՛ հայհոյէք, —ձայն արձակեց Տարաննէսը որոտագին ձայնով: —Ձեր հոգևորքը թշուառ մարդիկ են, մահու արժանի:»

—Ամենից յառաջ, մարդ են նոքա, իմ պարոն, և մի գեղեցիկ բան է չմոռանալ իւր սեփական բնութիւնը:

«Ուրեմն ոչինչ բան կարող չէ ձեր հոգին դուրս քարշել կորուստի անդունդքից:»

—Մի՛ թէ ես առաջարկած եմ ձեզ ուրանալ կաթոլիկութիւնը, —պատասխանեց Բէատրիքսը հպարտաբար:

«Դա Աստուծոյ գործ է, բայց կալվինականութիւնը.....»

—Գերավսեմ մատեանը մարդկութեան:

«Լսացէ՛ք մանաւանդ, մի հերձուածողական հաւատ, ամրոցի տիկին դուք, — ձայն արձակեց Տարաննէսը բարկացած, — մի հուգենոթեան կին երբէք կրելու չէ իմ անունը։»

— Գիտէ՞ք դուք, մեծամիտ օտարական, — պատասխանեց հպարտ Բէատրիքսը, բարձրացնելով իւր անձը, — որ մի դուստր մեր տանից երբէք խոնարհելու չէ մի մարդու առաջև։ Զգիտեմ, արդեօք Անժուեան դուքսը կամ մի այլ թագաւորազն էք դուք, — յաւելացրեց նա արհամարհութեամբ, — որ կարողանայիք այդպէս խօսել իմ հետ.... Բարեաւ մնացէք։

Եւ նորան հպարտաբար նայելով, դուրս գնաց Բէատրիքսը։

Վիրաւոր երիտասարդը անցուց մի ահարկու գիշեր. այն մտածութիւնը թէ նա իւր սիրտը նուիրել էր մի հերձուածող կնոջ, ահ ու դող էր ձգում նորա վերայ, և զուր էր նորա աշխատութիւնը արտաքսել իւր սրտից Բէատրիքսի պատկերը։ Նա զգում էր նոյնպէս, որ Բէատրիքսը աւելի գերազանց էր հանճարով, քան թէ ինքը. և այս մտածութիւնը բոլորովին ճնշեց նորա հոգին։ Ապա սկսեց նա իւր մէջ քրքրել Բէատրիքսի ազգատոհմը, բայց ի զուր, և անհամբերութեամբ սպասում էր օրաբացին։

Բայց Բէատրիքսը չերևեցաւ, ինչպէս սպասած էր նա։ Անց կացաւ ութ օր առանց տեսանելու նորան. մի ծեր սպասաւոր դարմանում էր հիւանդին ամենայն հոգողութեամբ և ուշադրութեամբ։

Տարաննէսը զգում էր բոլոր մեծութիւնը այն վշտի որ հասուցել էր Բէատրիքսին. գրեց նորան մի նամակ ողջմամբ ու քնքուշ սիրով լցված և երկիւղի մէջ սպասում էր թէ ի՛նչ կը ծնանի դորանից։

Եւ Բէատրիքսը մնացած չէր անվիշտ. նա մեղադրում էր իւր խստասրտութիւնը և մտածում էր միւսանգամ գնալ Տարաննէսի մօտ, և ահա ստացաւ նորա նամակը։

Երիտասարդի նամակը հրաշագործ գտնվեցաւ։ Շատ օրեր երկար ու ձիգ խօսեցին նոքա բաղդաւորութեան և գալոց ոսկեղէն օրերի վերայ։ Քաղաքականութեան, կրօնի և ազգատոհմի պատկանեալ խնդիրքը հեռի մնացին։ Տարաննէսը օրէ օր աւելի առողջացաւ.

Բայց Տարաննէսը բաց չթողեց աչքից իւր նպատակը. նա կամենում էր ծանօթանալ նորա ազգատոհմի հետ, որ Բէատրիքսը ճարտարութեամբ թագցրեց, որովհետև Տարաննէսը ևս դեռ չէր ասած իւր անունը։ Երիտասարդը խօսեց այն տոհմական նշանի վերայ, որ զարդարում էր ամրոցների դարպասքը։

«Քաղաքական պատերազմերի միջոցին,— ասաց նա Բէատրիքսին — կարող էր դա անախորժ լինել, և այդ պատճառով իմ հայրը հրամայել է իւր տոհմանշանը ոչնչացնել իւր ամրոցի վերայ։»

— Տոհմանշանը ազդումն է և յարգանք — պատասխանեց Բէատրիքսը,— մի կարող մարդու տոհմանշան մեծարվումն է, նորա կալուածին ոչ ոք ձեռնամերձ չէ լինում։

«Այո, բայց մեր ժամանակումը չքանումեն մարդիկը շուտով և տոհմանշանքը մնումեն, այնպէս, որ այս և այն թոյլ մարդը պաշտպանութիւն է գտանում մի համարձակ մարդու տոհմանշանի տակ։»

— Եւ ունայնասիրութիւնը, իւր նախահարց տոհմանշանը ունենալ դրան վերայ, հաշիւ չէ՞ք բերում։

«Այո, դուք պարծանք էք համարում այդ բանը, Բէատրիքս։»

— Ես մեծամիտ չեմ, թէև մի հռչակաւոր, քաջագործ ցեղից եմ շառաւիղում։

«Ձեր ամրոցի տոհմանշանը փառաւոր է — ասաց Տարաննէսը մեղմալար,— և ձեր ծանօթաքանութիւնը կարող էր պատճառ տալ հաւատալու, թէ ձեր հարքը ունայնասէր էին։»

Բէատրիքսը սկզբումը չհասկացաւ երիտասարդի դաւաճան դիտաւորութիւնը. նա կարծեց միայն, որ երիտասարդը տարակոյս ունի շատ կամ փոքր հին կալուածի մասին, և ասաց բարկութեամբ.

— Ոսկեղէն առիւծը պանծալով կապոյտ դաշտի վերայ, ակնարկումն է դէպ ի նշանաւոր վաստակներ։ Ո՛չ, մեր հարքը ունայնասէր չէին, որովհետև համեստ զինակիր առիւծը փոխարինումն է մի տոհմանշան, որ կարմիր յատակի վերայ ցուցանումն է ֆրանսիական շուշաններ։

«Ֆրանսիական շուշաններ,» — կրկնեց Տարաննէսը խորթահնչիւն ձայնով։

— Թէև լինէր դա միայն Մօնգօմմերեանց առիւծը — պատասխանեց Բէատրիքսը ազնիւ հպարտութեամբ,— այնու ամենայնիւ լինելու էր դա, ինչպէս թվումն է ինձ, մի գեղեցիկ տոհմանշան։

«Մօնգօմմերի, Մօնգօմմերի.— ձայն արձակեց Տարաննէսը վեր թռչելով,— Դուք Մօնգօմմերեան ցեղի՞ցն էք։»

— Թող լինի այդպէս, որովհետև միանգամ ես ինքս յայտնեցի իմ անձը. կոմս Գաբրիէլի դուստրն եմ ես։

«Դուք Մօնգօմմերեան ցեղից էք,— ասաց երիտասարդը, խորին յուսահատութեան մէջ կցելով ձեռքերը — և ես կաթոլիկեան միաբանութեան նեցուկ եմ։ Ո՛հ, բաղդը շատ թշնամի է գտանվել դէպ ի մեզ։ Բէատրիքս, Բէատրիքս, ուրացէք ձեր հերձուածողական հաւատը, մոռածեցէք որ եկեղեցին պիտոյ է անբաժանելի լինի։ Այս միայն

փրկութիւն կաթոլիկեան եկեղեցու մէջ, բոլոր մնացածը մեղք է։ Ես խօսումեմ միայն, սիրելով ձեզ. յոյս ունիմ հեռացնել այն ատելութիւնը որ բաժանումէ մեր ազգատոհմերը, իմ և ձեր հայրը հաշտեցնել, ստանալ Թագուհու շնորհը, եթէ ձեր սիրտը չկամի կամակորութեամբ փակուիլ դէպ ի ճշմարիտ հաւատը։»

Բէատրիքսը ցած թողեց աչքերը. Նա մտածումէր այն ազգատոհմերի մէջ եղած ատելութեան վերայ, որի մասին Նորա հիւրը խօսումէր այնքան մեծ երկիւղով։ Մոնգոմմերեանքը չէին վրիժասէր, Նոքա ահընկեց էին պատերազմական դաշտումը, բայց ազնիւ և մեծահոգի մասնաւոր կեցութեան մէջ։ Ուրեմն Բէատրիքսի սիրած երիտասարդի ազգատոհմի վերայ միայն դրած էր թշնամութեան և վրիժասիրութեան մեղքը։

Փանատիկոս Վիլհելմը յուսահատութեամբ Նայումէր իւր դրութեան վերայ. Նորա հայրը երբէք տալու չէր իւր հաւանութիւնը մի այդպիսի զուգաւորութեան. Նա կարողացած կը լինէր վաւթարութեամբ խնդրել Կաթարինայից դէպ ի մահ դատապարտել Մոնգոմմերին. ահա թէ ի՛նչպէս մեծ էր Նորա ատելութիւնը, և այն փոքրիկ փայփայանքը, որին ընդունակ էր Վիլհելմ Տարաննէսը, հաւաքվումէր բոլորովին այն քաջ, հերձուածող զօրապետի աղջկայ վերայ։

Տարաննէսը հաշվումէր միայն որպէս մի անձնապաշտ մարդ. Նա չէր մտածում թէ ինչքան ատելի էր իւր անունը բոլոր Մոնգոմմերեանց աչքումը։ Բէատրիքսը ասել էր Նորան իւր անունը, ուրեմն կարող էր նոյն բանը պահանջել երիտասարդից։ Բայց որովհետև երիտասարդը չասեց իւր անունը, այնուհետև Բէատրիքսը սառնացած մի այդպիսի անվստահութենից, ասաց բարկութեամբ.

«Ուրեմն Մոնգոմմերեանքը ունին այդքան ահարկու համբաւ ձեր կողմի մարդերի մէջ, որովհետև այդ անունը մի զարհուրանքի ձայն դուրս բերեց ձեր բերանից։ Որպէս պալատական մարդ պիտոյ է դուք ամենայն խոշոր բառ, որ ասումէիք մի տիկնոջ, ոսկեզօծէիք։»

— Ես կարող չեմ կեղծաւորվիլ. — պատասխանեց երիտասարդը, մռայլ դէմքով։

«Դուք չփոթումէք կեղծաւորութիւնը քաղաքավարութեան հետ, իմ հոգևոր պարոն։»

— Ո՛վ, դուք հաճութիւն էք գտանում ծաղր անելով ինձ, տիկին։

«Կարծեմ թէ ես այն զարհուրանքը, որ ես իբրև թէ կարող էի զգալ լսելով ձեր անունը, կարող եմ թագուցանել։»

«Տիկին, — ասաց Տարաննէսը զօրաւոր ձայնով — իմ անունից պէտք չէր վախենալ։»

— Ո՛վ Բէատրիքս, ողբացէք միայն իմ վէրքը և անբաղդ ժամանակը — մի Տարաննէս կարօտ չէ թագուցանելու իւր անունը — ասաց նա ազդու ձայնով։

«Մի Տարաննէս, — աղաղակեց Բէատրիքսը բարձրանալով տեղից և մի ահարկու ձայնով. — Դուք Գասպար դը Սօլ-Տարաննէսի որդին էք։»

Նա կամաց շշնջելով այս ատելի անունը, դողդողալով յետ քաշվեցաւ։ Նա կանգնած էր Բէատրիքսի առաջև որպէս թէ ջարդուփշուր եղած։ Յանկարծ խօսքը յառաջ տարաւ Բէատրիքսը խաղաղ, բայց ահարկու ձայնով.

— Այդ անկարելի բան է, իմ պարոն։ Ասացէք որ դուք կամէիք վախեցնել ինձ. ասացէք որ դուք չէք պատկանում այն զարհուրելի ազգատոհմին։ Գիտէ՞ք դուք, որ ես կարող չեմ պաշտպանել մի Տարաննէսի կեանք իմ հօր, իմ եղբօրների առաջև։ Գիտէ՞ք դուք, որ Տարաննէսքը պիղծ դահիճներ են։

«Վիլհելմը մնաց շուարած, Բէատրիքսի առաջև, որ մի անպատմելի ահի մէջ սպասումէր նորա խօսքին. բայց երիտասարդը չպատասխանեց. այնուհետև Բէատրիքսը իւր բոլոր ույժը և զօրութիւնը ժողովելով, ասաց դառնապէս.

«Ուրեմն ճշմարիտ է, որովհետև լուռ էք դուք. ուրեմն դուք անուանի էք այդպիսի պիղծ փառքով։»

— Տիկին, ես կաթոլիկեան պատերազմող եմ և պաշտպանել եմ իմ հաւատը։ — ասաց երիտասարդը մռայլ դէմքով։

«Մի՛ աշխատէք արդարացնել ձեզ, պարոն Սօլ-Տարաննէս, — պատասխանեց Բէատրիքսը մեղմաբար։ Ապա արտասուք եկան նորա աչքերը, բայց բանականութիւնը և պատիւը հալածեցին դորանց, և նա ասաց, առանց աչք ձգելու Տարաննէսի վերայ։

— Այսուհետև կարող չէք դուք ապահով լինել այս տեղ. ձեր դրութիւնը թոյլ է տալիս ձեզ հասանել Լիզիեօ քաղաքին։ Մի Տարաննէս ապահով չէ, մնալով Մօնգօմմերեանց ամրոցումը։

Տարաննէսը կամենումէր պատասխանել, և ահա աղախինը իմաց տուեց Բէատրիքսին, թէ նորա հայրը այն տեղ է։

«Վա՜յ, իմ հայրը և իմ եղբարքը։»

— Դոքա բոլորը այն տեղ են։ Զգուշացէ՛ք որքան կարելի է, տիկին Բերթա։

«Ով իմ Աստուած, — ձայն արձակեց Բէատրիքսը, — պահպանի՛ր մեզ:»

Ու առանց նայելու Տարաննէսի վերայ, շտապեց Բէատրիքսը դէպ ի դուրս:

Ժ.

ԴԻՊԼՈՄԱՏԻԱ.

Կոմս Մօնգօմմերին իւր որդիներով միասին վերադարձած էր նորանոր յաղթութեամբք պսակված: Կաթարինայի անհանգստութիւնը սահման չգիտէր և կոմսը ատելի էր նորան այժմ առաւել քան թէ երբ և իցէ:

Յառաջ քան թէ Բէատրիքսը եկած էր նորա մօտ, կոմսը գիտէր արդէն, որ մի խորհրդաւոր վիրաւորված մարդ գտանվում էր ամրոցի մէջ, և իսկոյն կամեցաւ իմանալ, թէ ով էր նա:

Բէատրիքսը մեծ դժուարութեան մէջ էր. ստութիւնը երևում էր նորան մի խայտառակիչ բան, այնու ամենայնիւ յանձն առաւ նա զորան, Տարաննէսը փրկելու համար:

Այն զարհուրանքը որ ցոյց տուեց Բէատրիքսը լսելով թէ կոմսը ցանկութիւն ունի տեսանելու իւր հիւրը, ծածուկ չմնաց ոչ կոմսից և ոչ նորա առաւել հասակաւոր որդուց: Կոմսը դուշակեց մի դաշնաւորութիւն որով իւր խորհրդաւոր հիւրը կապակցութիւն ունէր իւր աղջկայ հետ:

Այս պատճառով, ահ ու դողի մէջ շտապեց նա դէպ ի այն սենեակը, ուր Տարաննէսը երկիւղալից սրտով սպասում էր փոթորկին, որ մօտ էր դուրս յարձակվելու:

Տարաննէսի գունաթափ, վստահատեսիլ կերպարանքը զարթեցրեց նորա ուշադրութիւնը. կոմսը կարծում էր թէ տեսած էր նորան ձախորդութեան օրերումը, այս պատճառով առաջին տպաւորութիւնը անախորժ եղաւ նորան: Բայց կոմսը հիւրասիրութեան պարտականութիւնքը լցուց կատարելապէս:

«Բարի է այն օրը որ ձեզ, ով երիտասարդ, բերել է դէպ ի Մօնգօմմերի, միայն թէ հաւան էք դուք մեր հիւրասիրութեանը,» — ասաց կոմսը քաղցրութեամբ:

— Ես պատճառ ունիմ շնորհակալ լինելու — պատասխանեց Տարաննէսը, — ձեր ազնիւ դուստրը և ձեր սպասաւորքը փրկել են իմ կեանքը:

«Կալվինականքը չեն այնպէս անգութ․ այդ բանը կարող էք ասել ձեր համակրօններին, պատճառ, ինձ ասած են թէ դուք կաթոլիկեան կարգաւոր էիք։

«Միտ դնելով ձեր հոգևոր կոչմանը, շատ անգթաբար վարվել են ձեր հետ։ Մի՛ թէ կարող չէիք դուք փախչել, ձեր բոլոր վէրքը երեսի ու կուրծքի վերայ են։»

— Մի քաջ մարդ երբէք փախչում չէ․ — պատասխանեց Տարաննեսը հպարտաբար։

Մօնգոմմերին ապշեցաւ այս խօսքերից և նայեց նորա վերայ․ երիտասարդը նկատեց այս բանը և զգուշացաւ։ Բայց Մօնգոմմերին չը կամեցաւ խաբվել, այլ և՛ս առաւել արմատացաւ նորա մէջ իւր տըրտում գուշակութիւնը։

Նա կամեցաւ օտարականը և իւր դուստրը մօտեցնել միմեանց, աւելի հեշտ վերահասու լինելու ճշմարտութեանը, և այս խորհրդով ասաց Տարաննեսին․

«Պիտոյ է ձեզ երկարացած լինէր ժամանակը, ինչքան որ դուք այս տեղ էիք, և դուք լսած չէք ոչ եկեղեցական և ոչ քաղաքական գործերի ընթացքի մասին։»

— Ճշմարիտ է այդ, բայց ապերախտ պիտոյ է լինէի ես, եթէ կամենայի գանգատել այդ մասին։

«Մեր աշխարհի՞ցն էք դուք։»

Այս անակնունելի հարցումը շփոթեց Տարաննէսին, բայց շուտով ուշը վերան ժողովելով, պատասխանեց երիտասարդը․

— Ես բնակւում եմ Լիզիեօ քաղաքումը։

«Փոքր ինչ բազմօրինակութիւն տալու ձեր կեանքին, պատուեցէք ինձ, խնդրեմ, սեղանակից լինելով ինձ։»

Տարաննէսը դարձեալ դժուարացաւ և ներողութիւն խնդրեց անյարմարաբար, պատճառ բերելով իւր կիսակատար բժշկված վէրքը և իւր թուլութիւնը։

— Վա՜հ, ոչինչ է այդ, — ասաց Մօնգոմմերին, — մի ազնուական ձեր տեղումը իսկոյն ձեռք կ՚առնուր միւսանգամ զէնք։

«Ես չեմ սիրում աշխարհի խռովութիւնը, պարոն կոմս․․․․

— Ես կարծում եմ, վախկոտ էք դուք — ձայն արձակեց Մօնգոմմերին բարկացած, ըստ որում նկատումէր նա մի խորամանկ բան Տարաննէսի պատասխանի մէջ։

Այն կոշտ բառը թուելի եղաւ Տարաննէսին։ Նա բարձրացրեց գլուխը և զգումէր իւր մէջ իւր վերադարձած քաջութիւնը և դորա

հետ միասին իւր հին տոհմական ատելութիւնը, մի ջերմեռանդ կաթոլիկի ատելութիւն, երբ որ կանգնած էր նորա հանդէպ մի տղամարդ, որ վաստակել էր մի այդպիսի արդարացի պարծանք։ Այս պատճառով ասաց նա դառնապէս.

«Կը դամ ես սեղանակից լինելու ձեզ, ողորմած տէր, որ ապացուցանեմ ձեզ, թէ քահանայական զգեստը կարող է ծածկել իւր մէջ այնքան խիստ քաջ սիրտ, որքան մի կալվինական ազնուականի զրահ։»

— Ի՞նչ է, ծա՞ղր էք անում, — պատասխանեց կոմսը, — այդպիսի հեզնութեամբ կարող էք վարվել իմ ինն որդիների հետ, դուք կարող էք կռուել նոցա հետ — լեզուով, եթէ նախապատիւ չէիք համարում սուրը. — և կոմսը բևեռեց իւր միջամուխ հայեացքը Վիլհելմ Տարաննէսի վերայ։

«Ո՛վ գիտէ.» — պատասխանեց երիտասարդը մեծամտաբար։

— Նա բացում է իւր սրտի խորհուրդը, — շշնջեց կոմսը, — բայց ես համարում եմ նորան անթափանցելի։

Նոքա գնացին դահլիճը, ուր հաւաքված էին բոլոր Մոնգոմմերեանքը. պակաս էր միայն Ժէն-Ժանը, որ կռվում էր Ֆրանսիայի միւս բաժնումը։

Տարաննէսը թէպէտև քաջ մարդ էր, այնու ամենայնիւ չկարողացաւ ծածկել մի երկիւղի ալէկոծութիւն, երբ որ նա տեսաւ իւր անձը այս քսան Մոնգոմմերեանց մէջ։ Նոքա ամենեքեան շրջապատել էին կոմսը, որ իւր կերպարանքով, հայեացքով և մտածութեամբ կառավարում էր նորանց։ Տարաննէսը համեմատում էր այս հպարտ ազգատոհմը իւր ազգատոհմի հետ, և նորա ատելութիւնը սաստկանում էր և առաւել։

Բէատրիքսը կանգնած էր այն տեղ խորին տանջանքի մէջ. անօգուտ էր նորա աշխատութիւնը, զարհուրելով Տարաննէսի անունից շիջուցանել իւր սէրը. ոչինչ չյառաջացաւ։

Բէատրիքսը վախենում էր իւր աչքերը դարձուցանել երիտասարդի վերայ. սա լինելով իւր սրտի վերայ աւելի իշխան, նայում էր Բէատրիքսի վերայ ըստ երևութին սառնութեամբ, մինչ Մոնգոմմերին սաստիկ խռովութեան մէջ էր, մտածելով այն աւերանքի վերայ, որ սիրուխտը իւր աղջկայ սրտի մէջ պատրաստել էր։

Յետոյ խօսեցին պատերազմի և յաղթութեան վերայ Ալմանէշեան դաշտավայրերումը, և Տարաննէսի անունը յիշվեցաւ վրէժխնդիր ձայներից։

Մի սառն քրտինք դուրս երևեցաւ Բէատրիքսի ճակատումը և նա ասաց իւր հօրը.

«Յաւակցութեան պատճառով, հայր, գործ դիր քո իշխանութիւնը և թոյլ մի՛ տուր, որ իմ եղբայրները և քեռիքը հետևէին երկու հակառակ կողմերի սպանողների լեզուախօսութեանը.»

—Ես կարող չեմ յանդիմանել քո եղբայրները որ նոքա հայհոյումէին այս անունը։ Գիտե՞ս դու, որ Գասպար Տարաննէսը, որին թող կուլ տայ դժոխքը, գիտե՞ս դու, իմ անբաղդ զաւակ, որ այդ վատթար անձը.....

Այս անպատուող խօսքերից մեռածի պէս գունաթափվեցաւ Տարաննէսի երեսը. բայց այն վտանգը որի մէջ տարուբերվումէր նա, ակամայ շինեց նորան զգոյշ և խոհեմ։

Մօնգօմմերին իսկոյն յառաջ տարաւ խօսքը.

«Գիտե՞ս դու, Բէատրիքս, որ այս Տարաննէսը, երբ որ վատթարութեամբ փախստական էր եղել պատերազմի դաշտից, այժմուս պարտաւորումէ ինձ Մեդիչեան Կաթարինայի առաջև, թէ ես նորա սիրած երիտասարդը, Վիլհելմ Տարաննէսը իմ յատուկ ձեռքով սպանած էի, երբ որ նա լինելով անզէն, խնդրած էր ինձանից ողորմել նորա կեանքին։»

—Այդ մի զարհուրելի բամբասանք է, իմ հայր, — ձայն արձակեց Բէատրիքսը ահացած։

«Այնու ամենայնիւ այս Ֆլորտինացի վիշապը ամենայն տեղ լուր է տարածում, և Տարաննէսը օգնական է նորան այդ գործի մէջ. այդ անամօթները խայտառակումեն ինձ։»

—Ես յոյս ունիմ, որ մի մարդ ասելու է ճշմարտութիւնը և սրբելու է այդ կեղտը քո գեղեցիկ անունի վերայից, հայր։

«Ոչ ոք հաւատալու չէ. Վիլհելմ Տարաննէսը մեռած է Ալմանէչեան դաշտերումը։»

—Ո՛վ գիտէ—ձայն արձակեց Բէատրիքսը. — նա գուցէ թէ իւր մեռանելու միջոցին հաւատացել է մի պատերազմողի իւր գլխի անցքի պատմութիւնը։

«Այս պատերազմողի բերանը կը խցկէ թագաւորամօր արծաթը,» ասաց կոմսը արհամարհաբար։

—Ուրեմն այժմ — ձայն տուեց Բէատրիքսը, սաստկութեամբ դարձուցանելով երեսը դէպ ի Տարաննէսը — սրբեցէք դուք իմ հօր անունի վերայ դրած կեղտը։ Ասացէ՛ք Մեդիչեան Կաթարինային, թէ Գասպար Սօլի որդին չէ սպանվել իմ հօր սրովը, ասացէ՛ք նորան, թէ կալվինականքը օրինապատշաճ պատերազմողք են և թէ մի կաթոլիկեան պատերազմող, որպէս և էր նորա անունը, երբէք ի զուր զարկելու չէ մեր ամրոցների դուռը, եթէ հիւրասիրութիւն կամէր։

Կոմսը հիացած, հարցրեց թէ ի՞նչ էր այս սաստիկ բանախօսութեան խորհուրդը:

«Դորա խորհուրդը այն է, պարոն կոմս — պատասխանեց Տարաննէսը մերկացնելով գլուխը, — որ ես այսուհետև համբերելու չեմ, որ բամբասեն ձեզ: Մի հատ խօսք իմ բերանից բաւական էր. ես Վիլհելմ Սօլ-Տարաննէսն եմ:»

Այս անունը լսելով Մոնգոմմերեանքը, ամենքեան ձեռք ձգեցին իւրեանց դաշնակին. բայց կոմսի մի հատ ակնարկութիւնը հանդարտացրեց նորանց:

«Այդ նշանակումէ, քաջութիւնը տանել հասուցանել մինչև մի խելագար յանդգնութիւն, մանուկ մարդ դու, — պատասխանեց կոմսը նկատելի խռովութեամբ. — ոչ մի Մոնգոմմերի խնդրած լինելու չէր հիւրասիրութիւն մի Տարաննէսից:»

— Ես փախստական էի — պատասխանեց Վիլհելմը — և մեռանումէի իմ վէրքի ցաւի տակ: Ընդունեցէք իմ շնորհակալութիւնը այն դարմանատարութեան համար, որ գտել եմ ես ձեր ամրոցումը:

Ժամանակը անդամ էր. մարդիկը հեռանումէին: Կոմսը գնաց Բէատրիքսի մօտ, երբ որ նոքա միայնակ էին, և ասաց սիրտ պատառող կերպով.

«Իմ դուստր, իմ անբաղդ զաւակ, մեկնի՛ր ինձ քո շփոթութիւնը, իմ սիրտը լցուած է ահ ու դողով:»

— Ո՛հ, ես շատ վատաբաղդ եմ, — աղաղակեց Բէատրիքսը հեծեծելով, — հայր իմ, ցաւակից եղիր ինձ:

«Ուրեմն անբժշկելի է ցաւը», — շշնջեց Մոնգոմմերին խոր ձայնով:

— Այո, այդպէս. այս անծանօթ երիտասարդը, որ ես տեսած եմ եպիսկոպոսի ապարանքումը, է Տարաննէս:

«Անքննելի Աստուած. և մի տրտում պատահար բերել է նորան քո մօտ:»

— Այո:

— Եւ դու չես այնքան ամուր հոգով, որ կարողանայիր նորա պատկերը արտաքսել քո սրտից: Դու գիտես, որ այն Տարաննէսի աչքումը ոչինչ բան սուրբ չէ:

«Ես գիտեմ այդ, — ասաց նա, ծածկելով իւր գլուխը հօր կուրծքի վերայ, — բայց ես սիրումեմ նորան ակամայ:»

— Ուրեմն իմացիր, Բէատրիքս, որ այդ բանի տակ թագցրած է մի յանցանք, մի զարհուրելի գաղտնիք, որ ես կարող չեմ յայտնել քեզ:

Եւ դուրս հանելով իւր անձը Բէատրիքսի գրկախառնութենից, շտապեց նա ի բաց։

Մօտ երկու ժամ յետոյ, կոմսը և նորա եղբայր Կորբեզանը դիմեցին Տարաննէսի մօտ. նոքա գտան նորան արթնութեան մէջ. պատճառ, նա չունէր այնքան վստահութիւն դէպ ի իւր թշնամիների ազնուահոգութիւնը, որ կարողանար քնել։ Կոմսը հարցրեց նորանից, ուր կամէր նա գնալ։

«Դէպ ի Լիզլեօ, պարոն կոմս, որովհետև գերի չեմ ես։»

Կոմսը ուշադիր չէր այս կծանողական խօսքին. նա քննումէր լապտերի լուսով մի թուր և մի թափանչա։

Կորբեզանը ասաց Տարաննէսին.

—Դուք կարող չէք այսուհետև մնալ այս տեղ. բայց յառաջ քան թէ կ՚երթայիք դուք, խնդրեմ ասել ինձ, ի՛նչ եղաւ այն շիկահեր մանուկ կնամարդը, այն գեղեցիկ տիկինը որ դարմանումէր ձեր մանկութեան օրերը։

«Ողորմածութի՞ւն է այդ», — հարցրեց Տարաննէսը մռայլված։

—Ոչ, ես հարցնումեմ ստուգութեամբ։ Ի՛նչ եղաւ այդ կինը։ Մեռած է նա, թէ կենդանի է։

«Ես չգիտեմ։»

Եւ նորա կերպարանքը այլանդակվեցաւ, նորա աչքերը բորբոքվեցան մի խաւար կրակով։

—Ուրեմն չէք կամենում դուք պատասխանել ինձ։

«Մի՛ թէ դուք... էիք. ոչ, դուք չէք այդպէս.» — պատասխանեց նա կրճտելով ատամները։

—Այո, դու արժանի ես քո հօրը, երիտասարդ դու։

«Յոյս ունիմ, որ նորա խրատները օգտակար կը լինին ինձ վրիժառութեան օրումը։»

—Վախեցի՛ր այս ցերեկի արևից, — աղաղակեց Կորբեզանը զայրացած։

«Այժմ, — ասաց Մոնգոմմերին մօտենալով, — դատարկեցէք ձեր մէջքը այս թրովը. ձեզ պիտոյ է հեռանալ այս տեղից, որովհետև ձեր տեսութիւնը անախորժ է ինձ։»

Նոքա գնացին դէպ ի մի նեղ դարպաս, ուր երիտասարդին սպասումէին ուղեկիցք ճանապարհի հարկաւոր պատրաստութեամբը։ Երբ որ Տարաննէսը ոտքը դուրս էր դրել դարպասից, զարթեց նորա բոլոր ոխերը իւր սրտի մէջ և խոցված սրտով յետ նայեց նա։ Բէատրիքսը մի վերարկուի մէջ փաթաթված կանգնած էր սանդուղների նախադաւիթի

վերայ և անշարժ աչքով նայումէր նորա քամակից։ Տեսանելով այս բանը, յետ շտապեց Տարաննէսը, առանձնացաւ կոմսի հետ դէպ ի մի կողմ և ասաց սրտառուչ կերպով.

— Պարոն կոմս, ներեցէ՛ք ինձ, եթէ ես պատճառել եմ ձեզ ցաւ. այն մարդու մէջ որ սկսեալ իւր մանկութեան օրերից սնուցած է մի վառ ատելութեամբ, բերանը չէ կարող գտանել մեղմ ու քնքուշ բառեր։ Ես պատրաստ եմ հրաժարվել իմ ատելութենից, եթէ Բէատրիքսը կը հրաժարվի այն մոլորութենից որով կուրացած է։ Ես խընդրումեմ ձեզանից նորա հարսնութիւնը և յոյս ունիմ թէ նա բաղդաւորվելու էր իմ փեսայութեամբ։

« Երբէք կարող չէ Տարաննէսների տոհմանշանը ընկերանալ Մօնգոմմերեանց տոհմանշանին.» — պատասխանեց կոմսը հպարտաբար։

— Ուրեմն մեք բարետոհմ չե՞նք, — հարցրեց Տարաննէսը խորին զարմացքով։

« Ոչ բարետոհմ և ոչ բարեհամբաւ », — պատասխանեց Մօնգոմմերին ցաւեցուցիչ ձայնով։»

— Մնացէ՛ք բարեաւ, Մօնգոմմերի, — աղաղակեց Տարաննէսը կատաղութեամբ վեր թռչելով իւր ձիու վերայ։

Այնու ամենայնիւ լինելու է Բէատրիքսը իմ սեփականը, երդվում եմ ես Դիանայի, միանձնուհու յիշատակովը։

Եւ նա վաղ ձգեց իւր ձին իւր ուղեկիցների քամակից։

« Ո՛հ, — ասաց Մօնգոմմերին, ցաւալից սրտով իւր եղբօր բաղուկի վերայ հաստատված, — այս հոգսը միայն պակաս էր իմ ծերութեանը, բայց ես դորանց, այդ զարհուրելի Տարաննէսքը միւսանգամ կը գտանեմ պատերազմի դաշտումը։»

ԺԱ.

1574 ԹՈՒԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 24-ի ԳԻՇԵՐԸ.

Աւելի քան թէ երկու տարի անցած էին այն ժամանակից յետոյ, երբ Տարաննէսը հրաժարվել էր Մօնգոմմերեան ամրոցից։ Վիշտը ծերացուցել էր կոմսին, նորա ճակատը խոր կնճռված էր. երևումէր որպէս թէ սպառված է նա զօրութենից և ներգործականութենից։ Շատ ցաւալի էր նորան տեսանել կալվինական կողմի օրէ օր աւելի տկարանալը։ Նորա գործի յաջողութիւնը կարելի էր միայն մի փայլուն յաղթութեամբ կամ թէ տիրապետելով Փարիզին։ Ծովապետ Կօլինիուն

և կոմսին օրէ օր առաւել դժուարանում էր փոխարինել այն անընդհատ կորուստները որ ունէին նոքա։ Եւ հարկաւոր էր մի կարող հաւատ, մի գերօրինակ անշահախնդրութիւն, դեռ ևս յառաջ տանելու կռիւը։

Մօնգօմմերին հասկացաւ իւր կուսակիցների դրութիւնը, նա տեսանում էր որ ինքեանք անփրկելի էին, և թէ մի վճռական գործ չփրկէր նորանց, և իւր ցանկութիւնքն ու կասկածանքը հաւատաց ծովապետին. բայց Կօլինյին այն միջոցումը գտնվում էր պալատի որոգայթների մէջ, ծաղր էր առնում Մօնգօմմերիու վերայ և աներկբայ հաւատացած էր Կարոլոս իններորդի արքայական խօսքին, որ վարվում էր նորա հետ որպէս մի հօր հետ։ Բաց ի սորանից, երևեցան կալվինական զօրքի մէջ անհնազանդութիւն և անպատշաճ ընթացքներ որ օրէ օր աւելի զօրանում էին այն ներողամտութեան պատճառով, որ ստիպուած էին զօրապետքը գործ դնել։ Կօլինյին չունէր ոչ այն հոգին և ոչ այն ներգործական կամքը, որ հարկաւոր էր ճնշելու այդ անկարգութիւնքը. և այս պատճառով անբաղդ էին նոյնպէս այն աշխարհները, որոնց մէջ այս երկրորդ քաղաքական պատերազմի ժամանակին անցանում էին նորա զօրագունդերը։ Նոքա կողոպտում էին անխտիր բարեկամ և թշնամի։ Այս պատճառով Կօլինյին պայմանախօսութիւն բացեց պալատի հետ և հաստատվեցաւ հաշտութեան դաշնը, որի մէջ պալատը խոստացաւ մի բացարձակ անյիշաչարութիւն անցած ու գնացածի մասին և կալվինականներին կատարեալ ազատութիւն կրօնական պաշտօնի ապագայումը։

Այս սուտ և կեղծաւոր հաշտութիւնը պատահեցաւ 1570 թուականին։

Երկար ու ձիգ արիւնոտ պատերազմերից յետոյ երևում էր թէ թագաւորութիւնը մի փոքր շունչ է առնում, առևտուրքը սկսեց դարձեալ ծաղկել, դաշտերը մշակվում էին, դպրութիւն ու ճարտարութիւն վերստին նորոգվեցան։

Այնու ամենայնիւ Կաթարինան յառաջ էր գնում իւր դարանագործ ճանապարհի վերայ, որ նշանակած էր ազնիւ արիւնով։ Մօնգօմմերին, որ գուցէ թէ մի հատ մարդն էր, որ բոլորովին հասկացել էր թագուհու դիտաւորութիւնքը, իւր զաւակներով միասին հեռի պահեց նորանից իւր անձը, թէպէտ զարհուրելով նկատում էր նորա յառաջադիմութիւնքը և տեսանում էր նորա հակառակորդներից շատերը մեռանել որը թունով և որը սրով։

Եւ Մօնգօմմերին եկած էր մասնակից լինելու այն խորհրդաւոր հարսանիքին, որ Նավարրայի թագաւորը պիտոյ է կատարէր Վալուեան Մարգարիտի հետ, բայց մնացած էր Սէն-Ժերմենեան քաղաքագաւի-

թումը։ Երբ որ օրհասական զանգակը հնչեց, կամենումէր նա անկողին մտանել։

Նա և շտապով նորա մօտ հաւաքված մարդիկը իսկոյն վերահասու եղան այն զարհուրելի ճշմարտութեանը, թէ այս կոտորումը հրամայած է թագաւորի և կաթարինայի կողմից. բոլորեքեան ահաբեկված շտապեցին փախչել, բորբոքված վրէժխնդրութեամբ։ Զուր եղաւ Գիզէի աշխատութիւնը ձեռք ձգելու Մոնգոմմերին. սա յաջողութեամբ հասաւ իւր ամրոցին։

Բարթողոմեան գիշերը տևեց երեք օր, և Տարաննեսքը վարվեցան այդ միջոցին որպէս դահիճներ, ոչ որպէս ազնուականք։ Պատմութեան յիշատակարանները և յետոյ եկած մարդիկը—այս ազնիւ վրէժխնդիրքը—պահպանել են այն զարհուրելի խօսքերը Գասպար Սօլ-Տարաննեսի. «Արի՛ւն թողեցէք» — ձայն էր տալիս նա իւր օրինակովը քաջալերելով կոտորողքը — «Արիւն թողուլը օգոստոսի մէջ նոյնպէս առողջ է, ինչպէս մայիսի մէջ։»

Երբ որ Մոնգոմմերին լսած էր այս բանը, ձայն արձակեց ահընկեց ձայնով.

«Նու ի՛նձ պիտոյ էր իմ դուստրը կնութեան տալ մի երիտասարդի Տարաննեսեան տոհմից։ Եւ մի դուստր Մոնգոմմերեան ցեղից չէ՛ կարմրում այդպիսի ընտրութեան վերայ։ Ոչ. ես պատրաստ էի իմ յատուկ ձեռքով սրամահ անել քեզ, Բէատրիքս։»

Մոնգոմմերին գնաց Անգլիա, Եղիսաբէթ թագուհուց օգնութիւն խնդրելու, բայց ի զուր։ Նա վերադարձաւ Նորմանդիա որ մասնակից եղաւ նորա անբաղդութեանը։

ԺԲ.

ԴՕՆՖՐՕՆԻ ՊԱՇԱՐՈՒՄԸ.

Երբ որ իմացան թէ Մոնգոմմերին եկած էր Անգլիայից, Նորմանդիայի բոլոր ազնուականքը շտապեցին մտանել նորա դրօշակի տակ. ամենայն ազնիւ սիրտ Ֆրանսիայի մէջ զարկումէր նորա համար։

Նա սկզբումը շատ յաջող գտանվեցաւ, մինչև որ թագաւորը և կաթարինան կազմեցին երեք զօրք Մատինիոնի հոգաբարձութեամբ։ Մոնգոմմերին ձգել էր իւր անձը Սան-Լօ քաղաքի մէջ և այս տեղ պաշարվեցաւ կաթոլիկներից. բայց շուտով վերահասու եղաւ նա, որ այս տեղը անպահպանելի է, վասն որոյ մի քանի ձիաւորներով հեռացաւ այն տեղից, յետ թողնելով այն տեղ իւր որդի Լօրժեսին։

Երբ որ կաթոլիկները նկատեցին նորա փախուստը, նոքա բաժանեցին իւրեանց զօրքը երկու մաս. մինովը յառաջ տարան քաղաքի պաշարումը, միւսովը հալածեցին Մոնգոմմերին, որ արդէն կազմել էր մի քանի նոր զօրագունդեր, ըստ որում պատերազմը աւարտած էր, եթէ զօրապետը չկար։

Մոնգոմմերին ձգել էր իւր անձը Դոնֆրոնի մէջ, որ այն տեղ սպասէ ձեռնտուութիւնք ստանալու, որովհետև մտածումէր թէ Մատինիոնը զբաղած է Սան-Լօ քաղաքի հանդէպ. բայց Մատինիոնը եկել էր նորա քամակից և շրջափակեց ամրոցը։ Կաթարինան լուր ստանալով այս մասին, հրաւիրեց բոլոր ազնուականքը Ֆրանսիայի դէպ ի գործակցութիւն Մատինիոնին թէ քաջութեամբ և թէ արծաթով. և շատերը եկան, որ յաղթահարեն մի հատ մարդ։

Մոնգոմմերին ունէր այս զօրքին դէմ դնելու քառասուն ձիաւորք և ինսուն հրացանաւոր զինուորք, որոնցից շատերը ևս անց կացան դէպ ի թշնամիների կողմը։ Այնու ամենայնիւ ցոյց տուեց այն մեծ տղամարդը, թէ ինչ փորձեր կարող էր փորձել մի ներգործական տղամարդ։

Մոնգոմմերին իւր ձիաւորներով համարձակվեցաւ մի քանի արշաւանք անել, որ դուրս բերէ իւր անձը այս դժուարութենից, բայց նորա բոլոր արշաւանքները անյաջող գտանվեցան։ Քաղաքի պաշարումը տևեց տասերկու օր. ինն թնդանօթք անդադար ռմբակոծումէին անբաղդ քաղաքը։ Զարհուրելի էր 23 մայիսի 1574 թուականի։ Քաղաքի պատը շատ տեղ խորտակվել էր. այնուհետև Մոնգոմմերին յանձն առաւ յետ քարշվիլ և ամրանալ այն աշտարակի մէջ, որ բարձրանումէր քաղաքի վերայ. նորա մօտ գտանվումէին քառասուն մարդուց պակաս, որովհետև բոլոր հրացանաւոր զինուորքը թողել էին նորան։

Մատինիոնը հրամայեց խրամատել աշտարակը, և պատրաստվումէին վերայ վազել։

Մոնգոմմերին խրամի մօտ սպասումէր նոցա այն մարդերով որ մնացած էին նորան, և հաստատ էր որպէս մի ամուր ապառաժ. նոքա պնդեցին իւրեանց սիրտը աղօթքով, երբ որ տեսան թէ թշնամիների հեղեղը մօտենումէ։ Մոնգոմմերին այս կատաղի կռուի մէջ մի րոպէ ևս չկորցրեց իւր հոգու արիութիւնը, նորա խաղաղութիւնը վսեմական էր. նա, ինչպէս բոլոր ժամանակագիրքը պատմումեն, առաւել մեծ էր քան թէ իւր փառքը։ Կռիւը տևեց մինչև երեկոյի 7 ժամը, ապա ստիպվեցան կաթոլիկքը յետ քարշվիլ երբ որ արդէն կորցրած էին երեք հարիւր մարդ։ Մոնգոմմերին վիրաւորված էր թիկունքի և գլխի վերայ։

Այնու ամենայնիւ պաշարվածքը գիտէին իւրեանց գլխի գալոցը· Նոքա կարող չէին ոչինչ օգնութիւն յուսալ։ Մոնգոմմերին յանձն առաւ պաշտպանել իւր անձը մինչև իւր վերջին կարողութիւնը և ապա սրամահ լինել իւր ձեռքով, քան թէ ընկնել իւր ոխերիմ թշնամի կաթարինայի ձեռքը։

Այժմ բաղկացնումքին Նորա բոլոր պահապան զօրքը տասն և եօթն զօրեղ մարդիկ· բայց սոքա հոգի էին ստանում կոմսի մի բառովը, մի հայեացքովը. Նա երեկոյին կարգեց երկու պահապանք խրամի մօտ, հրամայեց միւսերին գնալ քնել, և ինքը հանգստացաւ մի յարդեայ մահճի վերայ։

Կէս գիշերին, քաղաքից մի եկաւոր մարդ դադարեց ապառաժի մօտ, Ներս մտաւ փլատակներից կիսով չափ լցուած խրամի մէջ և ձայն տուեց·

«Է՜յ, պահապան, Մոնգոմմերեան սոլդատ.»

Ոչ մի ձայն չպատասխանեց այս մարդուն· Երկու պահապանքը վաստակածութենից քուն էին եղել։

—Մի՛ թէ մեռած էին ամենքեան—խօսքը յառաջ տարաւ անծանօթը—կամ թէ կարողացել են Նոքա գիշերի մթութեամբ փախչել։— Աստուած տայ, որ այդպէս լինի· թէ զօրապետին և թէ ինձ բարւոք էր այդ··· Է՜յ,—կրկին անգամ ձայն տուեց Նա։

Եւ որովհետև ոչինչ պատասխան չստացաւ Նա, յաջողակութեամբ յառաջ քայլեց քարերի բաղմութեան վերայից։

Այս միջոցին թաւալագլոր քարերի աղմուկը զարթեցրեց պահապաններից մինին. Նա հրացան արձակեց դէպի վեր մագլցողի վերայ, բայց գնտակը չհանդիպեցաւ Նորան. սա իսկոյն կայ առաւ։

«Խող սատանան խեղդէ ձեզ — ասաց Նա — ես ամենևին միայն եմ և որոնումեմ կոմս Մոնգոմմերին։»

— Դա բարեկամ մարդ է, — ասաց պահապաններից մինը։

«Հասուցէ՛ք ինձ ձեր հրացանի կոթը և վե՛ր քարշեցէք ինձ, բայց շուտով, որովհետև վախումեմ աղմուկից։»

Այս համարձակ մարդուն որ իւր կեանքը վտանգի տակ էր դրել, պարզեցին ձեռք և տարան Նորան իւր խնդրանքով դէպ ի այն սենեակը ուր քնած էր Մոնգոմմերին։

— Ամենքեան պիտոյ է դուրս գնան — ասաց Նա, — երբ որ այն տեղ էր։

Մոնգոմմերին շուարեցաւ· բայց տեսանելով Նորան միայնակ, Նշանացի արեց, և ամենքեան հեռացան սենեկից։

«Ի՛նչպէս էք դուք եկել այս տեղ, և ի՛նչ էք կամենումք այս տեղ, հարցրեց կոմսը հպարտաբար։»

—Ես վտանգի տակ դնելով իմ կեանքը, եկել եմ այս տեղ, ձեզ փրկելու համար—պատասխանեց Վիլհելմ Սօլ-Տարաննէսը, պատճառ նա ինքն էր։

«Ի՞նձ փրկելու համար։ Մի՛ թէ կորած եմ ես.—Այս մարդիկը որ ունիմ ես այս տեղ, կարող են իւրեանց կրօնական և քաղաքական ազատութեան համար կռիւ տալ։»

—Ես գիտեմ այդ բանը, պարօն կոմս. բայց ի՛նչ կարող է յառաջացնել քաջավնական հոգին ընդդէմ մի ահագին բազմութեան։

«Մեռանել։»

—Մի՛ թէ դուք չէք սիրում ձեր կեանքը,—հարցրեց Տարաննէսը, սիրտը շարժված այս ազնիւ հպարտութեան վերայ։

«Այո, ես սիրումեմ կեանքը, միայն թէ կարելի էր կեալ ազատութեամբ։»

—Այժմ պիտոյ է ձեզ յետ դնել ձեր չափազանց անձնասիրութիւնը։ Զունի՞ք դուք պաշտպանելու մի դստեր կեանք—յաւելացրեց նա դժուարանալով։

Այս խօսքը երևումէր թէ փափկացնումէ կոմսի հպարտութիւնը. նա աչք ձգեց երիտասարդի վերայ և ասաց ծանրացած սրտով.

—Այո, իմ աղջկայ համար պարտական եմ ես ցանկալ, որ ապրէի։

«Ապա ուրեմն։»

—Ապա ուրեմն դուք եկած էք այս տեղ նորա համար և ոչ թէ իմ համար, պարօն Տարաննէս։

«Մի՛ թէ բոլորը մին չէ, թէ ի՛նչ կերպով էր յառաջանում բարերարութիւնը, միայն թէ շնորհվէր դա։»

— Իմ բարոյականութիւնը աւելի ընդարձակ է, պատասխանեց Մօնգօմմերին ցամաք կերպով։

«Լսեցէք ինձ, պարօն կոմս. ժամանակը ստիպողական է։ Ես կորած էի, եթէ իմ արարքը յայտնվէր։ Լսելով թէ վտանգի տակ է ձեր կեանքը, եկայ ես այս տեղ։ Ինձ ասած են որ Բէատրիքսը չէ ձեր օրինաւոր դուստրը, և թէ նորա մայրը կաթոլիկ է. յաղթե՛նք մեր կանխակալ կարծիքներին և մեր ատելութեանը, հաշտվի՛նք, և տուեցէք ինձ կնութեան ձեր դուստրը. այս գնով կամիմ ես փրկել ձեզ։»

—Այդ գնո՞վը։

«Այո։

— Դու շատ թանգ ես գնահատում քո բարերարութիւնը, — պատասխանեց կոմսը արհամարհանքով։

«Մի՛ թէ դուք այդպէս թեթև գին էիք դնում ձեր կեանքին» — հարցրեց Տարաննէսը։

— Իմ դուստրը կարող չէ լինել մի Տարաննէսի ամուսին։

«Կրօնական ֆանատիկոսութիւնը շիջանումէ, ձեր հետ միասին կ՚անհետանայ կալվինականութիւնը Ֆրանսիայի մէջ։ Հաւատացէք ինձ, դուք պիտոյ է մեռանիք․ տեղիք մի՛ տուեցէք ձեր ատելութեան խօսքին, մի՛ աշխատեցէք միւսանգամ բորբոքել իմ ատելութիւնը։ Ես սիրումեմ Բէատրիքսը, ես երջանիկ կը շինեմ նորան․ տուեցէք ինձ նորան ամուսին, պնուհետև ունելոց է նա մի պաշտպան, մի անուն։»

— Մի անուն — ձայն տուեց կոմսը թնդալով — այո՛ մի ատելի, մի անպատիւ անուն։ Ես մի քանի րոպէ ականջ դրեցի քեզ, որ ծանօթանամ քո հետ։ Հեռացի՛ր, Տարաննէս։ Ֆանատիկոսութիւնը շինել է քեզ մի այլանդակ գաղան․ Սէրը մի փոքր ազնուացուցել է քո սիրտը, բերելով քեզ այս տեղ, բայց պէտք չէր քեզ այդպիսի խիստ և դաժն պայմաններ առաջարկել ինձ։ Ի՛նչպէս կարող էի հարսնացնել քեզ իմ սիրելի Բէատրիքսը, քեզ, Գասպար Սօլի որդուն։ Ուրեմն դու չգիտես քո հօր համբաւը, ով թշուառ դու․ ուրեմն դու մոռացել ես քո յատուկ արարքը։ Գնա՛, ասումեմ քեզ։

«Նարկութիւնը խառնակումէ ձեզ, Մօնգօմերի․ թոյլ տուեցէք մեղմել ձեզ, մտածեցէք որ այս իմ գործի մէջ կայ ազնուամտութիւն։

— Բայց դու եկած ես, քո յատուկ կիրքը լցուցանելու համար․ եկած կը լինէիր այս տեղ, եթէ չունենայի ես դուստր։

Տարաննէսը չպատասխանեց։ Նորա ատելութիւնը վերստին զարթեցաւ զարհուրելի կերպով․ այն պաշտօնը որ կատարել էր նա, դիմելով այս տեղ, վրդովումէր նորա հոգին։ Բայց նա թագցրեց իւր ատելութիւնը և նոր ի նորոյ խնդրեց սաստկութեամբ և ստիպագին, երբ որ նկատեց թէ ահա բացվումէ օրը։

Բայց Մօնգօմերին նայեց նորա վերայ արհամարհանքով։ «Եւ եթէ այդ մի նոր խորամանկութիւն էր կաթարինայի կողմից,» — ասաց նա։

— Իմ պարոն — ձայն արձակեց Տարաննէսը յետ քարշվելով, և կրկին նոյն մարդը որ եղած էր Բարթօղոմէան գիշերին։

«Ո՞հ, եթէ մի մարդու անուն Տարաննէս է, նա պիտոյ է ունենայ երկաթի սիրտ և երկաթի ականջներ։»

—Անիծեա՜լ լինի քո բոլոր ազգատոհմը — ձայն տուեց կոմսը, ձեռք ձգելով սրին, — և ինձ կը հասանէ մի օր կարգը վրէժխնդիր լինելու։

Տարաննէսը դուրս թռաւ սենեկից, վիժեց իւր անձը խրամի միջով և անհետացաւ իսկոյն։

Մի ժամ յետոյ կրկին նորոգվեցաւ արշաւանքը. շատ պայմախօսութիւններից յետոյ անձնատուր եղաւ Մօնգօմմերին, որ զուրկ էր մնացած ամենայն օգնութիւնից։ Պայման դրվեցաւ, որ շնորհվի նորա կեանքը և թոյլ տրվի նորան յետ քաշվելու, թէպէտ նա մի քանի օր պիտոյ է մնար թշնամու ձեռքում։ Նորա ընկերակիցքը ստացան ազատ անց ու ելք։

Գալոց օրին Մատինիոնը դուրս հանեց ամրոցից անբաղդ Մօնգօմմերին, և կատաղած խառնիճաղանճը յարձակվեցաւ նորա տան և վեց քաջ տղամարդերի վերայ, կողոպտեց նորանց բոլորովին և սպանեց մի քանիքը։ Մատինիոնը ուղարկեց Մօնգօմմերին դէպ ի Փարիզ, որովհետև Կաթարինան կրկին և կրկին անգամ պահանջել էր այդ բանը։

Արդէն մի քանի օրից յետոյ համբաւ տարածվեցաւ, թէ Մօնգօմմերին դատապարտված է դէպ ի մահ, անտես առնելով այն պայմանը, որ նա կապել էր իւր անձնատուր լինելու միջոցին։ Մատինիոնը որ իւր այրական պարծանքով երաշխաւոր էր կացել, իսկոյն շտապեց դէպ ի Փարիզ ուր մի վատթար վրէժասիրութիւն ծածուկ աշխատած էր։

ԺԳ.

ՎԵՐՋԱԲԱՆ.

Կաթարինան կարող էր ազատապէս շունչ առնուլ, երբ նա իւր թշնամին բերդի մէջ անփախչելի կալանաւորված գիտէր, և անփոյթ չեղաւ նորան կորուսանելու մասին, թէպէտ կալանաւորի կեանքը սուրբ և անմերձենալի էր։ Երկու կատաղի Կաթոլիկներ հրաման ստացան դատախազ լինել ընդդէմ նորա, և երկուքը ևս արժանաւոր կերպով լցուցին իւրեանց անարժան պաշտօնը։

Մօնգօմմերին քանի մի անգամ հարցափորձվեցաւ, այո և թագուհու բերանով. Կաթարինան անուանեց նորան մարդասպան, երբ որ Մօնգօմմերին վկայ բերեց նորա արած խոստմունքը, և սպառնացաւ նորան մարդասպանութեան պատուհաս կառափատեղումն։

Կարոլոս իններորդը չկար աւելի, և Կաթարինան յանձն առաւ գործ դնել այն միջոցը մինչև Հենրիկոս երրորդը կը վերադառնար Պո-

լոնիայից. Նա ոչնչացնումէր ամենայն ոք որ բարձրացնումէր գլուխը և չէր սողում նորա ոտքի մօտ։

Դատապարտութիւնը շուտով կատարվեցաւ. դատաւորքը թագուհու թոշակակեր մարդիկն էին։ Մօնգօմմերին պարտաւորվեցաւ դէպ ի մահ։ Առաւօտուն, դատավճիռը կարդալուց յետոյ, եկաւ մի մանուկ գեղեցիկ աղջիկ, գլուխը քօղով ծածկած. երրորդ անգամը մօտենալով Լուվրի դարպասին, խնդրումէր որ թոյլ տային նորան յանդիման լինել թագուհուն, բայց արքունի պաշտօնակալքը միշտ մերժած էին նորան։ Ցաւից սպառված, նստեցաւ նա մի քարի վերայ և ազատ ընթացք տուեց իւր արտասուքին։

8 ժամին ծանուցարարքը հրատարակեցին քրէական յանցաւոր կոմս Մօնգօմմերիու մահու դատակնիքը. այնուհետև այն մանուկ աղջիկը ցած գլորվեցաւ, պատճառ դա Բէատրիքսն էր, որ Նորմանդիայից շտապել էր այս տեղ, որ այն խստասիրտ Փլորենտինացի կնոջ գութը շարժէ։

Այս հրատարակողների ծանուցումը ահ ու դող բերեց նոյնպէս մի կրօնաւոր միանձնուհու վերայ որ Սանտ-Հօնօրէ քաղաքաւիթում էր բնակում. Նա գլորվելով հասաւ իւր սենեկին, ժողովեց իւր կուսանքը (որովհետև մայրապետ էր), տուեց նոցա մի քանի հրամաններ և ինքը շտապեց դէպ ի Փարիզ։

Եկած չեկած Փարիզ, վերահասու եղաւ կրօնաւոր կինը, թէ պարոն Մատինիոնը կոմս Մօնգօմմերիու հետ, որ մարդասպանի պէս ծանրաբեռնած էր շղթաներով, այն րոպէին հասած է Լուվր անուն ապարանքին։

— Ախ, իմ Աստուած, ի՛նչ աղէտք, — շշնջեց կրօնաւորուհին և գնաց բազմութեան յետևից։

Այն երեկոյին որ պիտոյ է լուսանար դէպ ի այս տրտում օրը, հասանումէ մի ձիաւոր Նորմանդիայից։ Նա ունի իւր հետ ուղեկից մի քանի ազնուականք. Նա պարոն Մատինոնն է։ Նա ճանապարհին հանգստանում չէ, նա չխնայելով իւր ձիանքը վաղումէ շտապով. Նա կամէր թևեր առնուլ հողմերից և հարցանումէ հանդիպողներից այսպէս միայն. կենդանի՞ է դեռ ևս Մօնգօմմերին։ Դատապարտվա՞ծ է նա։ Ապա դարձեալ վաղումէ, թռչումէ մրրկի պէս։

Եւ Մատինիոնը քաղաքաւիթի մէջ լսումէ ծանուցարարի ձայնը. Նա շտապումէ դէպ ի պալատը, խնդրումէ նախաթոռ պաշտօնակալից տանել նորան Մօնգօմմերիու մօտ, գրկախառնումէ նորան և տանումէ նորան, թէպէտ նա չկամէր գնալ, դէպ ի Լուվրը։

Արքայական օթեանի շէմքի վերայ, անբաղդ կոմսը գտանուեց իւր զաւակը։ Մատինիոնը, այն ազնիւ պատերազմողը, ցաւակից եղաւ նորան և ասաց.

«Ներեցիր ինձ, աղջիկ տիկին, գուցէ թէ կարող էիք օգնել ինձ։»

— Ո՜վ Մատինիոն, — շշնջեց կալանաւորը վշտագին, — Դուք արժանի էիք մի ազնիւ գործի։ Շնորհակալ եմ ձեզանից, Մատինիոն, շնորհակալ եմ ձեզանից։

«Հանդարտ կացէք, ով անբաղդ դուք։ Կաթարինա տիկինը մի մեծ թագուհի է — ասաց նա բարձր ձայնով որ և շրջակայ լրտեսքը իմանան այն խօսքերը — յոյս ունիմ, թէ նա գթալու է ձեր զղջմանը։»

— Ո՜վ. արդարև նա գթալու է — ձայն արձակեց Բէատրիքսը — նա չէ սպանելու նորան։ Իմ հայրը պիտոյ է ստանայ իւր ազատութիւնը։ Դուք ձեր պարծանքով, թագուհու անուամբ երդուել էք։

«Ես մոռացած չեմ, իմ աղջիկ տիկին, և այդ պատճառով բոլոր ճանապարհը կատարել եմ ահ ու դողի մէջ։»

Նոքա հասան թագուհու օթեանի նախասենեակին։ — Ասացէք թագուհուն, — ծեր զօրապետը արիաբար ձայն տուեց մանկլաւիկներին — թէ պարոն Մատինիոնը խնդրում է շնորհել նորան առեան ունկնդրութեան։

Կաթարինան լսեց այդ ձայնը և անհամբեր սրտով դուրս եկաւ, բայց գունաթափուած յետ քաշուեցաւ, տեսանելով Մօնգօմմերին և Բէատրիքսը։

«Ո՜վ. ողորմութիւն, ողորմութիւն և ցաւակցութիւն, տիկին», ձայն արձակեց Մատինիոնը ծունկերի վերայ չոգած։

— Ողորմութիւն, ողորմութիւն դէպ ի իմ հայրը, — ձայն արձակեց Բէատրիքսը վայր ընկնելով։

«Ո՛չ. չկայ ողորմութիւն» — պատասխանեց Կաթարինան խիստ ձայնով։

Այս խօսքերը, այս հնչիւնը լսելով, դողացին բոլոր ներկայ գտանուողքը։ Մատինիոնը միայն պահպանեց իւր հոգու խաղաղութիւնը, բարձրացրեց իւր անձը և համարձակապէս բերան բացեց Կաթարինայի առաջև, այսպէս.

«Այն համբաւներից որ հասած էին ինձ, ստիպուեցայ ես Նորմանդիայից շտապել այս տեղ և կրկին աղաչում եմ Ձեզ ողորմել այս անբաղդին, եթէ ոչ նորա, գոնեայ իմ համար։ Ձեր մեծութեան անուանով խօսք եմ տուել ես Մօնգօմմերիուն, մի անդժրելի խօսք, թէ նա պիտոյ է ստանայ ազատութիւն և ոչ թէ ստրկութիւն, պատիւ և ոչ թէ անարգանք, կեանք և ոչ թէ մահ։ Արդէն վաթսուն տարի ծառայ-

ումեմ ես աթոռին, իմ մազերս սպիտակել են Ձեր պաշտօնի մէջ. ես պատած եմ վէրքերով և այսպէս խնդրումեմ Ձեր մեծութենից. Ակնարկեցէ՛ք այս անբաղդի վերայ որ այնքան արժանի էր մի աւելի լաւ բաղդի. մտաբերեցէք այս մանուկ աղջիկը, մտաբերեցէք իմ տան պատիւը, մտաբերեցէք, որ ամօթով ծածկվելու եմ ես, եթէ մեռանի Մոնգոմմերին. մտաբերեցէք, որ այնուհետև իմ անունը պիտոյ է անիծվի գալոց ազգերի մէջ. ես միշտ բարեխիղճ կերպով աշխատած եմ թողուլ դորան իմ զաւակներին անբիծ և անարատ։ Ցաւակից եղէք, տիկին, տեսէք իմ արտասուքը, ես մի ծեր ծառայ եմ Ձեր մեծութեան, լսեցէք իմ ձայնը, փրկեցէք այս տղամարդը և մի՛ խայտառակեցէք ինձ. ողորմութի՜ւն Մոնգոմմերիուն։»

Բայց Կաթարինան անողոքելի էր. Նորա գութը չշարժեցին ոչ Բէատրիքսի արտասուքը և ոչ ծեր զօրապետի այնիւ ճարտարախօսութիւնը։ Մոնգոմմերին պիտոյ է մեռանէր։

Երբ որ այն հոյակապ տղամարդը տեսաւ թէ անօգուտ էր ամենայն ջանք, այնուհետև ձգեց նա թագուհու վերայ մի կայծակնափայլ հայեացք, յետ քաշվելով և ձայն արձակելով.

—Անգութ կին դու. ես կը մեռանիմ որպէս զոհ մի գարշելի վատթարութեան. գալոց օրերը վրէժխնդիր կը լինին ինձ։

«Povero pazzo! (Թշուառ յիմար)—ասաց Կաթարինան, թիկունքը շարժելով հեգնաբար,—դա հաւատումէ գալոց օրեր. կայ միայն այս ներկայ կեանքս։»

Մատինիոնը խորին ցաւի մէջ տարաւ կոմսին դէպ ի Շատիլիոն։ Փորձեր փորձեցին հաւատափոխ անելու նորան. այդ բանի մէջ նշանաւոր կացուց իւր անձը մի Փրանցիսկեան կրօնաւոր։

— Եթէ սխալված եմ ես — ձայն արձակեց Մոնգոմմերին — այդ բանը եղած է մի Փրանցիսկեան կրօնաւորի մեղքով. դորանից ստացայ ես առաջին անգամ մի Փրանսիական աստուածաշունչ, որի միջից հանել եմ ես իմ սրտի կրօնը, միայն ճշմարիտ կրօնը. ես այդ կրօնի մէջ ապրած եմ և նոյն կրօնի մէջ կամիմ մեռանել Աստուծոյ շնորհովը։»

Ամուր քայլերով վեր ելաւ նա պատժարանի սանդուղները, երբ որ ասացին նորան, թէ դահիճը սպասումէ նորան. խաղաղ հոգով տարածվեցաւ նորա աչքը բազմութեան վերայ։ Բայց երբ որ նորա աչքը պատժարանի մօտ հանդիպեցաւ Բէատրիքսին, դղրդվեցաւ նորա սիրտը. ո՜վ. երկար ու ծանր էր նորա աղէտքը. պատճառ, նայեցողների մէջ, առաջևումը տեսաւ նա իւր թշնամիքը, Տարաննէսները, որոնցից մինը երևումէր թէ կծանողական ծիծաղով ասումէ.

«Ահա մի ժամի միջոցում քո Բէատրիքսը կը լինի իմն։»

Մոնգոմերիու աչքը որոնեց Մատիլինին, իւր զաւակը նորան յանձնելու համար, բայց այն թշուառականը փախել էր։ Բէատրիքսը տեսաւ Վիլհելմ-Սօլին, և դողդողալով ընկաւ հօր գիրկը։

—Անօգուտ էր լինելու այդ թռչնակի ընդդիմութիւնը արծուի ճանկերի մէջ.—շշնջեց Տարաննէսը խրոխտաբար մօտ գալով։

«Դու չես համարձակվելու, վատթար հոգի դու։»

—Ես կը համարձակվիմ ամենևին։

«Ո՜հ, Աստուած իմ,—գոչեց դատապարտվածը սիրտ պատառող ձայնով,—ո՞վ կը փրկէ իմ զաւակը այս վատթար Տարաննէսների ձեռքից։»

—Ե՛ս կը փրկեմ նորան,—ասաց Սանտ-Հօնորէ քաղաքագաւիթից եկւոր կրօնաւորուհին ճեղքելով բազմութիւնը և յառաջ գալով։

«Ով և լինէիք դուք,—ասաց Բէատրիքսը, ցաւակից եղէք ինձ։»

Մոնգոմերին լսելով այս ձայնը, դող ընկաւ նորա սիրտը. կրօնաւորուհին բռնեց կոմսի ձեռքը և երեսի քօղը յետ քաշեց։

«Դիանա—ձայն արձակեց Մոնգոմերին,—Դիանա, այս դուք էք։»

—Իմ անդրանիկ դուստրը,—ասաց ծերունի Տարաննէսը դողդեցուցիչ ձայնով։

—«Իմ քոյրը,»—ձայն արձակեց Վիլհելմը երկիւղի մէջ։

«Ու այս մանո՞ւկը»,—հարցրեց Դիանան շշնջելով։

—Դա է Բէատրիքսը, քո դուստրը, —պատասխանեց Մոնգոմերին։

«Աստուած իմ, ի՞նչ էի կամենում ես անել»,—ձայն տուեց Վիլհելմը, ներս յարձակվելով ամբոխի մէջ։

Մոնգոմերին տարվեցաւ դէպ ի պատժարանը, նա կրկնեց կալվինական հաւատի դաւանութիւնը և գլխատվեցաւ. Կաթարինան ներկայ էր պատժողութեան միջոցին։ Նորա սերունդքը ջնջվեցան ազնուականութեան ցուցակից, նորա գոյքը գրվեցան թագաւորական.

Բէատրիքսը իւր մօր ձեռքով յետ դարձուցվեցաւ դէպ ի Կաթոլիկեան եկեղեցին։ Նորա եղբարքը վերստին ստացան Հենրիկոս չորրորդից իւրեանց կալուածքը, բայց ազգատոհմը նուաղեցաւ օրէ օր։

Կաթարինան հրամայեց կործանել Մոնգոմերիու ամրոցը և աղ ցանել յատակի վերայ և նորա տոհմանշանը դահճի ձեռքով ջարդուփշուր անել։

Մոնգոմմերեանց անունը ջնջաւ Ֆրանսիայի մէջ 1721 թուականին, բայց մինչև այսօր ևս կիսով չափ չորացած Եղբածառը ցուցանում է այն տեղ, ուր դրած էր այն հպարտ, ազնիւ և անբաղդ կոմս Մոնգոմմերիու իշխանութեան սահմանը, և ուսուցանում գալոց ազգերին այն շատ յաճախ քարոզած ճշմարտութիւնը, թէ «անցաւոր էր ամենայն երկրաւոր մեծութիւն:»

Ս· Նազարեանց:

ԵՐԱԶ·

—

Սարսափելի երազ տեսայ այս գիշեր,
Որպէս թէ մի պարտիզի մէջ կանգնած եմ·
Մշտադալար զարդարւած է կանաչով,
Բիւր ծաղիկներ իւրեանց հոտը բուրում են:

Ուրախ ուրախ թռչունները երգելով,
Ծառէ ի ծառ ողջունեցին իմ գալը·
Ծաղիկները քնքուշ գլուխքը խոնարհած,
Ողջոյն տուին, զմայլեցաւ իմ սիրտը:

Գնում եմ խոր պարտիզի մէջ· մարդ չկայ,
Ոչ մի տեղից ձայն աղաղակ չէ լսվում·
Միայն հեռուից հասանում է ականջիս
Ջրի ձայնը, բայց ջուրը դեռ չեմ տեսնում:

Իմ գնացած ճանապարհի ծայրումը
Ահա բացվեց մի գեղեցիկ հրապարակ,
Մարմարոնեայ գեղեցկաշէն աւազան,
Ուր գործումէր ջուրը այնքան աղաղակ·

Երբ մօտեցայ աւազանին, ի՛նչ տեսնեմ,
Մի հրաշագեղ, մատաղահաս օրիորդ,
Աւազանի ափի վերայ խոնարհած,
Լուանում է խատակ ջրում մի լուացք:

Գերբնական է այդ աղջկայ տեսիլը,
Ոչինչ չկայ դորա վերայ հողեղէն.
Լուսեղէն է, թափանցիկ է մարմինը,
Աչքը յօնքը սև սաթի պէս փայլումեն:

Չքնաղ իրան, մէջքը բարակ, իսկ կուրծքը
Դուրս է նայում բարակ հագուստի տակից,
Որպէս երկու հասունացած մեծ նռներ,
Թաւիշապատ. խելք է թռցնում գլխից:

Կերպարանքը կանոնաւոր ու սիրուն,
Ոսկիամայրն (*) չարժէ նորա մօտ ոչինչ.
Ծածանումէ ուսի վերայ մազերը,
Բերնի վերայ ծաղկումէ քաղցր ժպիտ:

Երգ երգելով, նա կտաւ է լուանում,
Նորա ձայնը կախարդումէ թռչնի պէս.
«Խաղա՛ աղբիւր», նա երգումէ, «խայտալով,
Իմ կտաւը ճերմակցրու քո ջրերով:»

— Ո՛վ իմ չքնաղ, ասա՛, լսեմ, ով ես դու.
Ես մօտեցայ և ասումեմ նայելով,
Ո՛ր տեղից ես եկած այս տեղ և ինչու,
Այդ ի՛նչ բան է, լուանումես երգելով:—

Ինձ պատասխան տուեց այսպէս. «Պատրաստ կաց,
Մահու պատանք լուանումեմ քո համար.»
Եւ այս խօսքը ասած չասած, ծուխի պէս
Անյայտացաւ իմ աչքից ամեն բան:

—

Տեսանումեմ, որ կանգնած եմ անտառում,
Ծառի կատարքը հասանումեն երկնքին.
Իւր մայլոտ գագաթովը անտառը,
Սոսկալի էր ահաբեկված իմ սրտին:

(*) Այսպէս տալումէ Անահիտ, զգաստութեան և մաքրութեան աստուածուհին Հայերի, հեթանոսական ժամանակներումը: Նորան պաշտումէին հեթանոս Հայերը զանազան գաւառներում շինած մեհեանների մէջ, զոր օրինակ, Երէզ աւանումը Եկեղեաց գաւառի մէջ, Տարօնումը, Արտաշատումը և այլն.

Ծան. Հրատարակողի կողմից:

Լսելիքս ամբոխվեցան . . . վաստակեցան աչքերս . . .
Կացինի ձայն հեռուից յանկարծ լսումեմ.
Խիտ ծառերի միջերից դուրս վազելով,
Յանկարծ մի այլ նոր երևոյթ տեսնումեմ։

Մի հաստաբուն, բարձր կաղնի ահագին,
Նորա տակին նոյն օրիորդն է կանգնած
Կացին ձեռքին. ջարդոտվելով մեծ կաղնին,
Հրաժարվումէ իւր դարաւոր արմատից։

Օրիորդը կտրումէ ու երգումէ,
Նորա երգը սիրտ կախարդող է դարձեալ.
«Կտրիր, կտրիր, սրաբերան իմ տապար,
Փայտ կտրատիր, տախտակ տաշիր իմ համար։»

—Իմ նազելի, իմ սիրական, ասա ինձ,
Մօտենումեմ նորան դարձեալ ասելով.
Ասա, ով ես և կամ ուստի՛ ես եկած,
Է՞ր տախտակներ կտրատումես երգելով։—

Իմ հարցմունքին այսպէս տուեց պատասխան.
«Քո օրհասը մօտեցել է, տախտակներ
Պատրաստումեմ ես քո դագաղի համար։»
Ասաց, դարձեալ անյայտացաւ. ես մնացի։

—

Պայքայվելով հոգիս ու սիրտս նայումեմ . . . .
Ահա դաշտը սևանումէ չորս կողմից.
Ես չգիտեմ, թէ ի՞նչ պիտի գայ գլխիս,
Բայց դողումեմ բոլոր մարմնով երկիւղից։

Երթումեմ ես . . . . բայց ամպի պէս մի պատկեր
Հեռուիցը երևեցաւ իմ աչքին.
Մօտ վազեցի, դարձեալ տեսայ . . . . ես նորան,
Մի գունաթափ, տխուր դէմքով ուրուական։

Մի ծանր մուրճ բռնած էր պինդ իւր ձեռքում,
Որով գետինը փորումէր անդադար.
Ո՜հ, թէև այնքան գեղեցիկ էր իմ աչքին,
Բայց երկիւղից սիրտս ղարկումէր կատաղած։

Նա փորելով դարձեալ երգումէր մի երգ—
Մի սրտաշարժ, մի շատ տխուր, տրտում երգ.
«Մո՜ւրճ իմ, մուրճ իմ, փորիր դու ինձ մի փոս խոր,
Փորի՛ր մուրճ իմ, մի դրկաչափ գետնափոր։»

Մօտենում եմ նորան դարձեալ խնդրելով,
—Իմ նազելի, իմ սիրական, ասա ինձ,
Ասա, ո՛վ ես և կամ ուստի՛ դու եկար,
Կամ այդ փոսը դու փորում ես ո՞ւմ համար։—

Իմ հարցմունքին պատասխանում է այսպէս.
«Ես քո համար պատրաստում եմ գերեզման.»
Ճայթեց սիրտս.... և երկիւղից և ցաւից,
Բայց կամեցայ տեսնել իմ այդ օթևան։

Երբ գնացի ես փոսի մօտ նայելու,
Սարսափելի մի ձայն եկաւ ականջիս.
Յետ եմ նայում, տեսանում եմ այլ աղջիկ,
Նոյնպէս չքնաղ, նոյնպէս մատաղ, թափանցիկ։

—Իմ նազելի, գո՛նէ դու ինձ գթա՛, ասա,
Ո՞վ է փորող օրիորդը և դու ո՛վ.
Ինչո՞ւ այդպէս գիշատում էք իմ սիրտը,
Շուտ պատասխան տուր նազելի խղճալով։—

«Մե՛ք երկուքս քոյր ենք միմեանց անբաժան»,
Օրիորդը պատասխանեց հեգնելով.
«Նա երէցն է, իսկ ես կրտսեր հարազատ....»
—Բայց ո՛վ էք դուք,—ես հարց արի դողալով։

«Նա աւեր Հայաստանի հոգին է.......
«Իսկ իմ անունն է—Անմխիթարութիւն,
«Մենք շատ դարեր անցուցել ենք խռովով,
«Եւ շատ մարդիկ փոսն են ընկել մեր ձեռքով։»

Ասաց ժպտաց. կատաղաբար երկու քոյր
Գլորեցին ինձ փոսի մէջ. ես ընկայ....
Շնչարգելված նեղութենից զարթելով
Ստուգեցի, թէ երազ էր որ տեսայ։

Կոմս Էմմանուէլ։

ՄԽԻԹԱՐ ԵՒ ՄԽԻԹԱՐԵԱՆՔ·

(Շարունակութիւն·)

ՅՕԴՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Ք·

Դ·

ՄԽԻԹԱՐԵԱՆՑ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՇԱՐԺԱՌԻԹԸ·

—

Նախընթաց գլխումը (*) խօսելով Մխիթարեանց մատենագրական գործունէութեան վերայ, խոստացել էինք այս գլխի մէջ գնահատել այդ գործունէութիւնը, քննելով յառաջուց նորա շարժառիթքը։

Մեք հանդիպեցանք Մխիթարին Հայաստանումը, մինչ շուարված գնումէր նա այս վանքից միւս վանքը, այս աբեղայից դէպ ի միւս աբեղան խորհուրդ կատարելու ազգի լուսաւորութեան համար։ Երկու անգամ պատահեցանք Մխիթարին կոստանդնուպօլսի ճանապարհի վերայ, լսեցինք նորա խօսակցութիւնը Մարդար վարդապետի և կարնեցի Խաչատուրի հետ։ Տեսանք նորա փախստականի պէս դուրս գնալը Տաճկաստանից դէպ ի Մօրէա իւր մանուկ ընկերութեամբ հանդերձ, կոստանդնուպօլսի Աւետիք պատրիարգի հալածանքի երեսից գլուխը ազատելու համար։

Եւ ահա Մխիթարը կազմեց իւր միաբանութիւնը, ունի վանք և եկեղեցի, ունի մի փոքրիկ դպրոց, բայց այն հնարքը, որ գործ էր դրել նա, այս բաները յառաջ տանելու համար, տարակոյս չկայ, որ այդ հնարները սերմի տեսակով ունէին իւրեանց մէջ այն ամենայն վատ հետևանքները որ մեր օրերումը, աճելով այն փոքրիկ սերմից պապական հողի վերայ, ծառ դարձան, տերևներ արձակեցին և պտուղ բերե-

---

(*) Հիւսիսափայլ, ամսատետրակ 6· երես 481·

ցին այնպէս, ինչպէս որ սերմի յատկութիւնքն էին։ Մխիթարը ամենայն բան զոհեց Հայոց ազգի լուսաւորութեան համար, զոհեց մինչև անգամ իւր ազգային կրօնը, բայց դիտաւորութեամբ ենթարկվեցաւ նա պապական լուծի տակ։ Նորա ամեն մի քաջալերական խօսքերից, որ տալիս է իւր աշակերտներին, պարզ երևումէ, որ ունէր նա իւր սրտի խորքում մի գաղտնի խորհուրդ — երբեմն թափել իւր անձը և միաբանութիւնը պապական իշխանութեան տակից և ուրանալ նորա իրաւասութիւնը։

Աւելորդ է վերստին կրկնել այս տեղ Մխիթարի բուն խորհուրդը—միաբանութիւն կազմել ազգը լուսաւորելու համար, այլ այսքանը թէ այլապէս չյաջողեցաւ նորան տեսանել այդ միաբանութիւնը ոտքի վերայ եթէ ոչ այն պայմանով, որ այդ միաբանութիւնը խորթանալով ազգից չհասանէր իւր բուն նպատակին։ Մխիթարը սաստիկ սխալվեցաւ իւր հաշվում։ Մինչդեռ առաջին անգամ ոտք էր հաստատում նա այն հողի վերայ, որ պատկանումէր Վենետիկեան հասարակապետութեան, մինչդեռ առաջարկումէր իւր ընկերութեան պայմանքը Պապի նկատողութեանը և հաստատութեանը, Մխիթարը արդէն հրատարակել էր իւր անձը պապական։

Դեռ ևս նոր կազմվել էր Մխիթարեան միաբանութիւնը.՝ Մխիթարը, ինչպէս տեսանք առաջին յօդուածի մէջ, բամբասվեցաւ պապական աթոռի առաջև, որպէս կիսակատար պապական և հարկադրվեցաւ Հռովմ գնալ արդարանալու, իւր և միաբանութեան ջերմեռանդն պապականութիւնը ապացուցանելու համար, որովհետև այլ կերպով չէր կարելի արդարանալ։ Այդ օրից ահա Մխիթարի գաղափարը ըստրկանումէ պապականութեան օգտի հայեացքին, այդ օրից սկսանումէ երևելապէս չքանալ Մխիթարի միաբանութեան բուն խորհուրդը։

Մխիթարը և նորա մանուկ միաբանութիւնը Հայոց ազգի մէջ լուսաւորութիւն տարածելու գաղափարը հարկադրված են վարագուրել պապական իշխանութեան աչքից. նոքա երևումեն բոլորովին այլ զգեստով, որպէս քարոզիչ և տարածող ուղղափառութիւն ասացեալ պապականութեան Հայերի մէջ, որ փոքր ի շատէ ոտքի տեղ գտել էր Հայաստանում դեռ ևս 13-երորդ դարումը մինչ կատարվումին խաչակիր զինուորութիւնքը։ Միաբանութիւնը հարկադրված է այժմ ծառայել երկու պարոնների — Հայոց ազգին և պապականութեանը։ Ծառայումէ Հայոց ազգին աշխատելով նորա լեզուի վերայ, ծառայումէ պապականութեանը հալած իւղի տեղ տալով Հայերին սխօլաստիկական գրքեր, որ գրուած էին պապական պղտոր հայեցուածքով։

Մխիթարը մի քանի գրեանք տպելով կամ թարգմանելով աշխատում է շահել Հայոց ազգի սիրտը, աշխատում է ցրուել այդ գրքերը և ձեռք բերած արծաթովը մէջ մտանել այլ գործերի։ Նորա աշակերտքը հետևումեն իւրեանց վարդապետին. բայց մեծ զանազանութիւն կայ վարդապետի և աշակերտների մէջ, այդ է ուղղութեան զանազանութիւն։ Եւ այդ զանազանութիւնը այնքան սաստկանում է և զգալի է դառնում, որքան միաբանութիւնը յառաջանում է և կերպարանագործվում է, որքան աշակերտքը հեռանումեն վարդապետից։

Մխիթարի հաստատուն միտքը — երբեմն թափել իւր անձը և իւր միաբանութիւնը պապականութեան լուծի տակից, թուլանում է նորա աշակերտների մէջ, երևումեն մարդիկ, որ մտածումեն Մխիթարի պէս, բայց կան և այնպիսիք. որ վիճակված չլինելով մի ներգործական հոգու, չունեին կամք. կամին անշարժ մնալ այն դրութեան և այն վիճակի մէջ, ինչ վիճակի մէջ ճանաչել էին միանգամ իւրեանց. Այս միջոցին մանաւանդ ներս է մտանում Մխիթարեան միաբանութեան մէջ, կեղծաւորեալ պապականութեան փոխանակ, ձգտողութիւնը ամէն ընդունակութեան լինել պապականութեան համար. այս տեղ փորձվում է միաբանութիւնը։ Կէսը չկամի շահել իւր բուն հայկական կրօնը, ազգի սովորութիւնքը և աւանդութիւնքը, միւս կէսը կամելով ազատ պահել իւր անձն Կոլլեգիացոց բամբասանքից կամակորվում է աշխատել պապականութեան օգտի համար։

Այս հանգամանքների վերայ յաւելացաւ և մի աւելի չարագուշակ իրողութիւն—Մխիթարեան միաբանութեան ենթարկվիլը Եզուիտների կանոնադրութեան։ Սարսափելի նիւթապաշտութիւն, կեղծաւոր մոլեկրօնութիւն.... այս երկու կորստաբեր ախտերը, որպէս բնական հետևանք եզուիտեան կանոնադրութեան առաջնորդումեն ընկերութեանը։ Այս ախտերի ազդեցութեան տակ աշխատումեն այնուհետև Մխիթարեանց բոլոր անդամքը անխտիր։

Մխիթարը, պապականութիւնը դրեց իւր երեսին որպէս դիմակ, նորա ապագայքը ծնանումեն արդէն դիմակով, բայց հայկական դիմակով։ Մխիթարի արտաքինը—պապականութիւնը, դառնում է նոցա համար ներքին, Մխիթարի ներքինը — հայութիւն, դառնում է արտաքին, մի լոկ դիմակ որով երևումեն մի միայն Հայոց ազգի առաջև։

Մխիթարի կենդանութեան ժամանակ, մեծ չէ Մխիթարեանց մատենագրական գործունէութիւնը. Նորա աշակերտների օրից սկսանում է նա շարժվիլ։

Բայց այդ միջոցին միաբանութեան մէջ յառաջացած էր արդէն այն բարոյական ճեղքը, որի մասին խօսեցինք, այդ պատճառով եւ մատենագրութեան յառաջ շարժող զօրութիւնը բղխում է ոչ մի աղբիւրից ինչպէս Մխիթարի մէջ, այլ երկու աղբիւրից։ Առաջին աղբիւրը համարեա թէ հայկական — պապականութեամբ կեղծաւորված, իսկ երկրորդը բոլորովին պապական, որ իւր կարգով ճնշում է եւ օր ըստ օրէ չքացնում է առաջին աղբիւրը։ Այս պատճառով եւ միաբանութիւնը օր ըստ օրէ օտարանում է ազգից եւ սա (ազգը) նայում է նորա (Մխիթարեան միաբանութեան) վերայ, որպէս մի հերձուածողական կենտրոնի վերայ։ Այս բանը վնասակար է Մխիթարեանց անձնապահութեանը, փոքր է պապական հայերի թիւը, իսկ Մխիթարեանց ժողովուրդ է հարկաւոր. ուրեմն մնում է նոցա որսալ Հայոց ազգի սիրտը եւ բարեացակամութիւնը։ Ինչո՞վ. աշխատելով ազգի մատենագրութեան վերայ եւ այնուհետեւ ոչ այն խորհրդով, որ ծառայեն լուսաւորութեան մեծ գործին, այլ որպէս զի ցոյց տան ազգին, թէ ահա հերձուածող ճանաչված Մխիթարեանքը աշխատում են Հայոց ազգի համար։ Վիեննայի միաբանութիւնը շատ բացայայտ կերպով ցոյց տուեց Մխիթարեանց այս հոգին; մի բոպէ մոռանալով թէ խօսում էր Հայերի հետ, ուրեմն առանց հայութեան դիմակով ծածկելու իւր պապականութիւնը, հրապարակով քարոզեց, թէ ինչ որ Հայոց ազգը ստացել է կամ ստանում է Մխիթարեանց ձեռքով, այդ բոլորը պարգեւ է պապականութեան կողմից։ Այս տեղ քաջ յայտնի երեւցաւ, որ Մխիթարեանք կտրված բաժանված են ազգից եւ աշխատում են Հայոց համար, որպէս պապականութեան ձեռքով վարձված մշակներ։

Ահա թէ մինչեւ ո՛ր աստիճան սխալվել էր Մխիթարը իւր հաշվում. բայց մեր համար զարմանք չէ. դորա փոխանակ մի շատ բնական գործ։ Մատենագրական յառաջ խաղալու շարժառիթքը Մխիթարեանց ձեռքով, Մխիթարի մահից եւ նորա անմիջական աշակերտներից յետոյ էին նախ եւ յառաջ դոյն միաբանութեան երկդիմի կեղծաւորութիւնը Հայոց ազգի եւ պապականութեան առաջեւ, երկրորդ մի լոկ վաճառականութեան գաղափար — спекуляція, *շահաստացութեան խորհրդով։*

Մարդկեղէն աշխարհում ամենայն գործողութիւն վարձատրվում է կամ դատապարտվում է այդ գործողութեան դիտաւորութեան եւ շարժառիթի համեմատ։ Խորհուրդը կամ շարժառիթը է մի հոգի, որ ձգում է գործը որպէս մարմին եւ երեւում է աշխարհի երեսին որպէս մի անձնաւորութիւն։ Մեք քննելով Մխիթարեանց մատենագրական գործունէութիւնը պարտական էինք խօսել եւ այս բաները ցոյց տալու համար, թէ արդեօք բուն ազգի սէ՞րն էր հարկադրել նոցա կատարել այդ

գործը, թէ մի այլ պատճառ, և աՀա սրտցաւութեամբ տեսանումենք ուրիշ պատճառներ ևս, որ թուլացնումեն այդ գործունէութեան արժանաւորութիւնը։

Եւ մեր Համար շատ դառն է տեսանել Հայոց ազգից մի ընկերութիւն, որ գիտութեամբ և անգիտութեամբ վնասումէր ազգին այս կամ այն կողմից. ճշմարիտը պիտոյ է ասել, սիրելի չէ մեզ նայել մի այդպիսի ընկերութեան վերայ։

Գրեանք գրվել են և տպվել են Մխիթարեանց ձեռքով այս կամ այն շարժառթի ազդեցութեան տակ, բայց այդ գործունէութեան Հետևանքը ամենևին բնականաբար եղել է մի միայն լեզուի մշակագործութիւնը և պաՀպանութիւնը։

Հայր Միքայէլ Չամչեանի նամակը (*), որ գրումէր Հայր Մկրտիչ Աւգերեանին և Հայր Իգնատիոս Փափազեանին, որ գտանվումէին Հռովմի մէջ «ՎաՀան Հաւատոյ» անունով Չամչեանի գործի մասին, կարող է մի կերպով ցոյց տալ և վկայել այն բանին, թէ ղանազան էին Մխիթարեանց ուղղութիւնքը։ Դնումեմ այս տեղ այդ նամակի բառացի պատճէնը։

«Ամենապատուելի վարդապետաց Տեառն Տեառն Հայր Մկրտիչ «վարդապետի և Հայր Իգնատիոս վարդապետի, 'ի Տէր խնդալ։

«Զգիր վերապատուելութեանց ձերոց, գրեալ 'ի Հռովմայ 19-էն «դեկտեմբերի 1815, ընկալայ 'ի 16 փետրվարի 1816. ընթերցայ ա-«ռաջի մերայնոց (**) զամենայն զբանսդ, ընդ որ ոչ սակաւ ուրախ «լեալ նոցա, փառս մատուցին տեառն։ Իսկ ես յառաւելն բերիմ լսել «և ակն ունիմ թէ լուայց, եթէ չկայցէ թշնամի ընտանի (***)։ Բայց «արդ բացից առակաւ զբերան իմ, լուարուք զոր ասեմս և զոր գիտեմ։

(*) Այս նամակը մի անուս և տգէտ գրչի ձեռքով արտագրված լինելով բնագրից աղճատված է. բայց մեք չկամեցանք սրբագրել, մինչև անգամ պաՀեցինք այն աղճատ յարմարագրութիւնը։ Մեր չկամելու պատճառը այն էր, որ չունէինք այս նամակի մի այլ օրինակը, իսկ առանց Համեմատութեան մի միայն Հետևելով լոգիկային սրբագրել, Համարեցինք անտեղի, որովՀետև կարող էր փոփոխութիւն յառաջանալ։ Առ Հասարակ, ինչպէս ինքը Չամչեանը վկայումէ, նամակը ցոյց է տալիս, որ դորա գրողը ազատված է զօրութենից և պիտի ասել, որ մեք մինչև այժմ կարդացած չէինք Չամչեանի մի գործը, որ այսպէս թոյլ լինէր. տարակոյս չկայ, որ մեծապէս ներգործել է այս տեղ նորա զառամելութիւնը։

(**) Մ ե ր ա յ ն ո ց ասելով իմանումէ Մխիթարեան ընկերութեան անդամքը, որ և Աբբայեանք, որոնց չմերայինքը են Կոլեգիացիք։

(***) Երկիւղ է կրում, որ մի գուցէ և Մխիթարեանց մէջ լինէին Կոլեգիացոց Հոգու և ուղղութեան տէր մարդիկ։ Երևի թէ պատճառ ունէր կասկածելու. Հետևեալ գլխումը կը տեսանենք այս պատճառը։

«Ի հոգալ իմում զՎահան հաւատոյ գրոց լուսոյ զձայն խորտակման
«աղեղանց. զարմացայ և զարմանամ, զի իմ էր գրուածն միայնոյ,
«գաղտ 'ի բնաւից ես և 'ի մեծաւորէ իմմէ և 'ի միաբանիցս, և որով ի-
«րաւամբք անկաւ բանն զհասարակութեամբ համայն: Եթէ դատա-
«պարտելի ինչ կայր 'ի նմա, իմ էր դատապարտութիւնն. և արդարև
«զի՞ արար: Ես զայն գիր յանձն էի արարեալ դատաստանի ոչ այսր
«և ոչ այնր, այլ սրբոյ եկեղեցւոյ զի դատեսցէ որպէս և ախորժէ, իսկ
«դոքա զիս թողեալ արկին զդատաստանն զհասարակութեամբ մերով:
«Այն իմ գիրք զոր դողացան (*) դոքա, 'ի ձեռս իւրեանց էր և ես
«ինքն աստ էի, աստ և ոսոխք իմ ութմնիւ չափ առաւելեալք և Աստ-
«ուածաբան վերաձայնեալք. զարմանք են զի ոչ ոք 'ի նոցանէ իշխեաց
«ցայժմ ախոյեան նստել ընդդէմ իմ յետ բազում անգամ թա-
«խանձելոյ իմ զնոսա, այլ փախուստ տուեալ տագնապեցան, և իբրև
«մեղուք բորբոքեալք զհասարակութեամբ մերով դիմեցին անպատկառ
«յայն ատեան, յոր եսն եմ ապաւինեալ: Զի՞ կայր քո և սոյնպիսեացդ,
«հա՛յր Միքայէլ. բազում ինչ ամենայն իրօք հայեցեալ իմ Հայոց
«գտի զնոսա առաւել քան զքսան միլիոն (**), ահ կալաւ զիս, զիարդ
«ազգ յայսպիսեաց կորիցէ. կրկին հայեցայ և տեսի զազգն իբրև զոս-
«կի, բայց գտի զնոսա խառնուրդ պղնձի և կապարի, և յառաւելն ու-
«շաբերեալ, զի սուրբ եկեղեցի չէ ընկեցեալ 'ի ծով զայն խառն
«զանգուած: Ցայս ակն եդեալ իմ յօրինեցի զառաջին զչորս հատոր
«գիրս (անուանեալ նոյնպէս Վահան հաւատոյ ուղղափառութեան) 'ի
«վանել և 'ի զատել զպղինձն և զկապարն. հայեցեալ և յոսկին կան-
«գնեցի ընդդէմ նետաձիգ եղելոց զվահանն: Բայց քանզի ուրուա-
«կան իմն էր այն, ոչ երբէք հանի 'ի վեր և սակայն պատրաստեալ էի
«ուղղագրել և կատարելագործել զնոյն, զի թէ երբէք պիտոյ ինչ լի-
«նիցի, առաջի ընծայեսցի սուրբ գահին իբր բողոք եկեղեցւոյն Հայոց,
«ըստ որում է եկեղեցի: Եւ մինչդեռ ես յայս խորհուրդս էի, դողք
«հանին 'ի վեր և սկսան անձրևել նետս ոչ յիմ վերայ, այլ 'ի վերայ
«հասարակութեան մերոյ: Զի՞ կայ ձեր, ո՜վ դուք, և հասարակու-
«թեան մերոյ, յի՞ս ձգեսջիք զնետս ձեր, կամ ես աւասիկ առաջի
«ձեր, մխեսցին նետք ձեր յաչս իմ և ոչ յաչս այլոց. «Նետք տղայոց
«եղեն վէրք նոցա և այլն և այլն:» Եթէ սուրբ ժողովն յիմ կոյս է,

(*) Կոլլեգիացեք Կոստանդնուպօլսի մէջ գողցան այդ գիրքը Չամչեանի բնակարանէն մի մայրպետի ձեռքով, մինչ Չամչեանը պահելով ձեռագիրը բարձի տակ դուրս էր գնացած սենեկէն:

(**) Այս տեղ երևումէ գրչի յայտնի սխալմունքը. չենք կարող թողուլ տալ, որ Չամչեանը քսան միլիոն համարած լինէր Հայոց ազգը, որ շատ շատ չորս միլիոն է:

«ո՜վ իցէ իմ հակառակ, եթէ յիմ կոյս ես չիցէ, ո՞չ երկնչիմ, զի ես
«նորա եմ որդի, նա իմ մայր և իմ պաշտպան. եթէ կամիցի և եթէ
«ոչ, շատ է ինձ, այո զի նա 'ի մայրենի իրաւանց իմ տէր է, յորմէ ոչ
«դադարիմ խնդրել ո՛չ թշնամւոյս վրէժ, այլ զդատաստան արդար
«մինչ հանցէ զիրաւունս 'ի լոյս, 'ի հաւասարել զկշիռ ճշմարտու-
«թեան։

«Ափսոս քեզ, Հայր Միքայէլ, զի 'ի ծերութեանդ հասակի պա-
«շարեցար յորոց պաշարեցարն. պաշարեցայ այո, բայց 'ի պաշարմանս
«վստահ եմ. Պատմեցից ձեզ ինչ մի հարևանցի. յաւուրս Թերեզեայ
«Թագուհւոյն եկն դեսպան 'ի Պէշ քաղաք յՕսմանեանց։ Ի նախ
«տասնապետի միոյ ծերոյ 'ի պանդոկի, եկն անդ և ոմանք յՕսման-
«եանց անտի, յըմպել նոցա և յարբենալ 'ի պանդոկի անդ, մին յՕս-
«մանեանց քար արձակեաց յանուն Թագուհւոյն։ Բողոք կալաւ յայն-
«ժամ տասնապետն առ դեսպանն և առ սպարապետն իւր, և եւ հրա-
«ման մենամարտելոյ նոցա առ 'ի մահ նահատակեալ. Յայնժամ ծե-
«րոյն ել ընդդէմ և կործանեաց զախոյեանն։ Աւասիկ ես պատրաս-
«տեալ եմ նահատակել, ո՛վ է ոսոխ իմ, ելցէ ընդդէմ. բայց քանզի
«իսպառ ակարացեալ եմ, առաւել քան զոր կարծէք, և անկեալ 'ի
«յիշողութենէ և օրէ յօր նուազիմ, ստիպիմ զձեզ կանգնել և կան-
«գնեալ իսկ այսօր իմ փոխանակ զՀայր Մկրտիչ և զՀայր Իգնատի-
«ոսըդ, խօսեսջիք զճշմարտութիւն և մի՛ երկնչիք 'ի թշնամեաց իմոց,
«և ես եթէ մարթացայց, յուսամ թէ ժամանեցից և զձեզ անվաս-
«տակս կացուցից։ Անզգամութեամբ ասեմ, շատ են ոսկերք իմ առ
«շափաղփ Աստուածաբան կարծելոյն։

«Իսկենտեր պէյ յետ բազում աշխատ առնելոյ զՕսմանեանս
«հիւանդացաւ, լուեալ Օսմանեանց զհիւանդութիւն նորա, աւասիկ օր
«ասելով արձակեցին ընդդէմ նորա արս եօթանասուն հազար. զայն
«տեսեալ Իսկենտերայ նստաւ 'ի պատգարակ և ել ընդդէմ նոցա։ Իբրև
«լուան նոքա թէ Իսկենտեր ինքնին գայ պատգարակաւ, 'ի փախուստ
«փութացան և ցիր ու ցան մաշեցան։ Գամ և ես պատգարակաւ ծերու-
«թեանս. մի՛ ինչ զարհուրիք, վստահիմ թէ զարհուրեցուցից և վանե-
«ցից զթշնամիս իմ։ Եթէ արդարութիւնն չիցէ մեռեալ, գործեցից
«գործ մեծ 'ի զառամելութեանս իմում, իսկ եթէ արդարութիւնն կեն-
«դանի գոլով ոչ կամիցի առնել, զոր արժանն է, բազուկն արդարու-
«թեան, ժողովուրդն Աստուծոյ չէն խորտակեալ։ Գիտասջիք, զի ազգն
«համօրէն յատին է, ոչ կարգաւորք միայն, այլ և Հայ բազմութիւնք
«ակնեալ 'ի ծագաց աշխարհի, ոչ դառնութեամբ սրտի, որպէս յոսոխն
«նշմարի, այլ պահանջմամբ արդարութեան բողոքելով առ ամենայն

« տէրութիւնս. և ոչ իսկ դադարէ մինչև ոչ տեսցէ զվրաւունսն, ոչ լռէ
« որպէս կարծի այլ գօտևորեալ զինուորի, ոչ ասելով ըստ Թշնա-
« մեաց — ոչ կերիցուք և ոչ արբցուք մինչև ջնջեսցուք զԱբրայեանսն,
« այլ թէ ո՛չ ննջեսցուք մինչև ոչ տեսցուք զխաղաղութիւն սուրբ եկե-
« ղեցւոյ, և զառաջին վիճակ անդորրութեան Մխիթարեանց միաբա-
« նութեան Սրբոյն Ղազարու։ Մի՛ կարծէք, թէ ջախջախ բանիւք
« ումանց, յԱռաքելոյն որբոյ անմիտ անուանելոց, խափանեալ դադա-
« րեսցէ գործարան տպագրութեան հարիւրամեայ ժամանակաց և այն
« առանց քննութեան։ Եկեղեցին Քրիստոսի բերս ոչ սաղարթի։ Բայց
« արդ յի՛նչ իրաւունս հաստատեալ թշնամեաց 'ի սոյն եղեն ձեռ-
« նամուխ, վասն զի ասեն — տպագրեալ գրեանք նոցա լի են մոլորու-
« թեամբք։ «Ցո՛յ գիրս արդեօք»․ — Աւասիկ — ասեն — գիրքն խոր-
« հուրդ Աստուածպաշտութեան։ Այս գիրք յեօթանասուն ամաց հե-
« տէ տպագրեալ է, զայսքան ամս ընթերցան և քննեցին թշնամիք և
« ինչ ոչ գտին, այժմ գտանեն։ Եւ զի՛նչ արդեօք այն իցէ մո-
« լանք — աւասիկ — ասեն — և գիրքն, որ 'ի մեկնութիւն հաւատամ-
« քին։ Այս այն գիրքն է, զոր 'ի ժողովն երեք ամօք յառաջ առաջի
« արարին նոքին իսկ չարախօսք, թէ բովանդակեալ կայ 'ի նմա ճշմա-
« րիտ հաւատոյ դաւանութիւնք, և այժմ զիա՞րդ մոլորամիտ գտաւ։

« Պատմագիրք Հայոց իբր երեսուն ամօք յառաջ 'ի լոյս ընծա-
« յեցաւ և 'ի Հռովմ ևս հանդիսացաւ, և զի՛ պատահեաց նմա զի
« այժմ ընթերցմամբ տգիտաց մոլորական ցուցաւ։ Իմա՛ ըստ ամին և
« զայլ գրեանց, իմա՛ և մի զարմանար․ այլ զարմացի՛ր և ակներև տես-
« ջիր զի անհնարին նախանձ և ատելութիւն է, որ զայսպիսիս ճարտա-
« րաւորէ և զգայռէ։ Իրաւունս ունին և սոքա իմանալ, քանզի 'ի
« ճոխարանել իւրեանց և յընդվայր հարկանել զմեզ, ժողովուրդ
« ընդդէմ ելեալ և զուլից սոցա կախեալ կսկծեցուցանեն ասելով, —
« այսչափ ամք են, զի Աբրայեանք գիրս նորանորս հանեն և զազգն լու-
« սաւորեն, դուք զի՞ գործէք, դատարկք և փաքուսք վայրավատին
« շրջիք 'ի խաղս և 'ի զբօսանս ցնդիք, ընդ կանայս և ընդ աղջկունս
« կատակիք և այլն և այլն։ Այսմ յանդիմանութեան ո՛չ կարելով տա-
« նել․ — պու՛ նէ՛ — ասեն, — ջնջեսցին ապա սոքա և գիրք սոցա զի
« հանդիցուք։ Զի՛նչ ապա ժողովուրդք, — ընդէ՞ր — ասեն — և դուք
« ոչ աշխատիք յօրինել զգիրս։ «Չկարեմք» ասեն։ — Ընդէ՞ր ապա
« ոչ ներէք կարողաց։ «Զի խոչընդակ են մեզ նոքա։»

« Յաւանն, Վարշարհէկ անուանեալ 'ի Թրանսիլվանիա, մին 'ի
« յունաց շինեաց տուն մի փառաւոր, ընդդէմ սորա կանգնեաց և այլ
« ոմն ապարան մի, ընդ այս չկարացեալ տանիլ առն, բաղում ինչ արար

« և ծախեաց զի բարձցէ զայն գոնէ ըստ կիսոյն. ընդէ՞ր. զի կուրացաւ
« տուն իւր: Զի՞ կուրացար ո՛վ դու, բարձրացա՛ և դու զտուն քո, զի
« թոյլ տուեալ է յարքայէ. յոչ կարել նորա զայս առնել, յանզիմա-
« նակցացն յաւել յարկ մի ես և խեղդեաց զտունն. ահա՛ այսպիսի ինչ
« է և յառաջիկայդ: Աւելի ինչ խօսիլ 'ի վերայ այսր 'ի զուր է, քան-
« զի յայտնի տեսանի զի 'ի նախանձուէ չարէ յուզին այսպիսի իրք:
« Բայց թէ զիարդ ոչ նշմարեն զայսնշմարողք, ինքեանց է գիտելի. նոքա
« լսել ախորժեն զայսպիսիս և զքօսնուն ես. (զեֆքինէ վարմաք խտեր-
« լէր) առնեն զոր հաճին և խօսին 'ի հաճիլ. (գնա՛ մեռի՛ր, եկու սիրեմ),
« հատանեն զգլուխս անպարտ և սանտրեն զմօրուսն: Օ՛ ասեն, դուք
« այսպէս և այնպէս. ասեն բերանով և հեղձուցանեն գործով, և զի
« մխիթարիմք փառս տուր Աստուծոյ. զի որ քրիստափոր անուանիմ
« քրիստոնեայ եմ. այլ առանձինն գոհանամ զԱստուծոյ, զի այսպիսի
« վարանս զարթոյց յոգիս ուղղափառհուրդ քաղաքացեացս համօրէն,
« յառնել ոչ եթէ ընդդէմ թշնամեաց, այլ 'ի պաշտպանութիւն զըր-
« կելոյս, մինչև զանձինս ես դնել 'ի վերայ միաբանութեանս մերոյ,
« որոյ վասն բազում անգամ ժողով արարեալ, և զերկոտասան իշ-
« խանս կարգեալ ոստիկանս, գրեցին 'ի Հռովմ և գգիրն քարալաշիւ
« 600 զուռուշ ծախելով առաքեցին 'ի Պուքրէշ առ Եղքենձի խանն,
« զի անձամբ տարցէ 'ի Հռովմ, և փաստաբանեալ արասցէ զոր կարեն:
« Դարձեալ առաքեցին և զայլ գիր դէպուղիղ 'ի Հռովմ և կրկին ես
« առաքեցին և ունին առաքել: Այս ամենայն եղև և լինի, բայց ընդ
« վայր, զի կամ 'ի դերև ելանէ, կամ բազում ժամանակաց ակնկալէ
« ըստ սովորութեան տեղւոյդ, որպէս և ցուցանեն գործք որ գործեցան
« յառաջ ժամանակաւ: Ապաքէն Աբրահամ կաթողիկոս Լիբանանու
« վասն դատի միոյ ժամու զերիս ամս պարաւանդեցաւ այդր, և հուսկ
« զկնի առանց կոչման ել բանի յատեան դոցա, և 'ի միջոյ կիսոյ ժա-
« մու էառ զոր խնդրէրն զի պատրաստ էր ամենայն: Ապա բացեալ
« զգլուխ իւր յատենի անդ ասաց, «գոհանամ զքէն տէր, զի 'ի կամիլ
« զդատ մեր մեծ, զոր ունէաք ընդ քեզ, եկիր յԱրևելս և վճարեցեր
« զամենայն, ապա եթէ վրիպեալ դայիր աստ, մինչ 'ի կատարած աշ-
« խարհի տևէր այն: Դոքա իրաւունս ունին այսպէս վարելոյ զի իմաս-
« տութեամբ գործեն, իսկ ազգ մեր մանաւանդ Արևելեայք, մօօք զօ-
« րաւոր, ո՛չ իրաւունս գիտեն և ո՛չ զիմաստութիւն ճանաչեն, զի չեն
« ուսեալ, զոր ինչ ինքեանց հաճոյ տեսանեն և ականջաց իւրեանց
« յարմարաւոր, փարին զնովաւ. ապա թէ այլազգ ինչ, մերժեն:

« Յաւուր միում 'ի ժողովն Մանուկեանց եհարց եղբայր նորա
« Մաթոս աղայն—'ի Վահանի—ասէ—որպէս լսեմ, գրեալ է կարգ դա-

«բուց եկեղեցւոյն Հայոց անմոլար իջեալ,՝ և զխո՞րդ լինիցի այս։ Ե-
«տու պատասխանի, «այդ քեզ անհասկանալի է» (գեմիրտէն պիր
«յեպլեպի, հեր տիշ չիյնեմեզ)։ Ցերկարել բանից ասեմ — եթէ կա-
«միս և կարես անսալ, լուր զինչ ասես ապա, զոր վկայէ սրբազան
«Պապն Հռովմայ ընդունիս։ «Այո, ընդունելով ընդունիմ» ասէ։ Եւ
«ես ասեմ — ասես և լսեմ, և ընդունիս ոչ։ Ահաւասիկ երեքտասան-
«երորդ Գրիգոր սրբազան պապն հրովարտակ եհան վասն Հայոց, յո-
«րում վկայէ, ազգ Հայոց, ազգ մեծ, հարազատ որդի սուրբ եկեղեց-
«ւոյ և այլն։ Այս հրովարտակ տպագրեալ է 'ի Հռովմ, եթէ այս
«ազգ մինչև ցաւուրս սրբազան քահանայապետիդ գտաւ հարազատ և
«հաւատարիմ որդի սուրբ եկեղեցւոյ, ուրեմն անմոլար էջ յայնժամ,
«ապա թէ ոչ անհարազատ գտանէր, դու զի՞ ասես։ «Ոչ քննութիւն
«և ոչ հարցումն, այլ զինչ սրբազանն ասէ, այդպէս է ասացեալ։»
«(Նեմանի)։ Ասեմ ցնա — ո՛չ ասացի քեզ, թէ զոր ոչն ախորժես,
«ծանր լսես և ոչ ընդունիս, ո՛չ յայս նիւթ միայն, այլև յայլս։

«Զև իմ աւարտեալ զխօսս, ասէ ցիս Մանուկ աղ՚այն, — վարդա-
«պետութիւն ձեր յօրինեաց գիրք ընդդէմ Հայոց, իսկ այն Վահան
«գիրք է ջատագովութիւն Հայոց և որպէս լինիցի այս։ (պու նէ՞ միեհ-
«րիս և այլն)։ Ետու պատասխանի «իմացի՞ր և զայդ զոր ասես, այս
«գիրք հայի 'ի ջատագովութիւն ճշմարտութեան եկեղեցւոյն Հայոց,
«ըստ որում է եկեղեցի. իսկ այն գիրք հայի 'ի վանումն մոլորեցուց-
«չաց Հայոց և այլն։» Այսչափ ինչ շատ լիցի առ այժմ. զի չիք կար
«ողութեան 'ի ձեռին իմում։ Բայց սակայն ինձ մնայ բողոքել յա-
«տեանն Քրիստոսի, զի յետ վաստակելոյ իմ զամս բազումս 'ի պատիւ
«եկեղեցւոյ, 'ի ձեռն զոզոյ դատապարտեցայ 'ի ծերութեան իմում, և
«'ի ստապատիր ամբաստանչաց կեղտ անուն ընկալեալ հանդերձիմ
«աւասիկ մաշիլ 'ի գերեզման. դատ արասցէ ինձ տէր ըստ արդարու-
«թեան իմում։ Բայց ակն ունիմ, թէ նա ինքն սուրբ եկեղեցին ա-
«ռանց ինչ տեսանելոյ զտրաւպս արդարացուսցէ զիս, քանզի 'ի նա
«ապաւինեցայ։ Իսկ զոր ինչ գրեալ էիք վասն Վահանին, թէ 'ի նմա
«նշմարիցի ընթացք Դիսսերտացիոնին, ծանի՛ր զի այդ մտածութիւն
«չունի յայս գործ. զի գիտումն Դիսսերտացիոնին է ցուցանել, թէ
«մարթ է ուղղափառաց հաղորդութիւն առնել ընդ հերձուածողաց 'ի
«հոգևորս, այդ կարծիք մերժելի է յինէն։ Իսկ գիտումն Վահանին է
«ցուցանել, թէ եկեղեցի Հայոց իբր եկեղեցի ընդունի զամենայն ճըշ-
«մարտութիւն հաւատոյ։ Եթէ ունիս զօրինակ, առաջնոյ թղթոյն գրե-
«լոյ յինէն առ սրբազան ժողովն, ընթերցի՛ր, զի յայն թուղթ բովան-

«դակի Վահանն։ Գտնեմ 'ի գրիս թուղթ մի համառօտ, որոյ օրինակն «այս է։

«Ես սրբազան Հայրդ երկու գիրս գրեցի, առ սրբազան ժողովն «իբրև բողոք, վասն գրեմ առ սրբութիւնդ իբրև աղերս, լուեալ էք և «լսէք զվիճակ ուղղափառաց քաղաքիս, բաժանումն անզօդելի, գայ«թակղութիւն անասելի, բամբասանք սոսկալի, անուն քահանայու«թեան ընդ ոտիւք աշխարհականաց հեծէ պատճառաւ դադարման ա«ռաքելութեան մերոյ և տպագրութեան։ Այս հուր օր յօրէ բորբո«քեալ տոչորէ և ոչ ունի շիջանիլ հնարիւք առանձին մարդոյ։ Հայր «սուրբ, ձեռն սրբութեանդ կարէ բարեկարգել, իբրև այն որ գլուխ «եկեղեցւոյն Քրիստոսի. ապա թէ ոչ, կատարածն հայի 'ի յատակս դը«ժոխոց։ Այո, ձեռն սրբութեանդ, որոյ հայրագութ տեսչութեանն «կամ յամենայնի հնազանդ ծառայ

Հայր Միքայէլ Չամչեան։»

Ինչպէս վերևումը ասացինք այս նամակը կարող է վկայել այն բանին, թէ Մխիթարեանց մատենագրական գործունէութիւնը ունէր երկու շարժառիթ. մինին հետևելով աշխատումէին հաճոյանալ ազգին, միւսին հետևելով հաճոյանալ Հռովմի պապին։

Ահա գերապատիւ Չամչեանը և նորա գործերը. գրումէ Վահան հաւատոյ գիրքը Հայոց եկեղեցու իրաւունքը, ծէսերը և դաւանաբանութիւնը պաշտպանելու համար Կոլլեգիացոց և միւսերի երեսից, իսկ Հայոց պատմութեան մէջ ամենայն քայլափոխում ղօհումէ Հայոց եկեղեցու անկախութիւնը Հռովմի վատիկանին. այն տեղ, Հայոց կաթողիկոսքը հպատակումեն Հռովմի պապին, այս տեղ ճանաչումեն նորա գլխաւորութիւնը, այն տեղ Հայոց ազգի մեծ մասը ընդունումէ Քաղկեդոնի ժողովքը, այս տեղ մինչև անգամ և Յովհաննէս կաթողիկոսը քաղկեդոնական է մինչև իւր կաթողիկոսանալը։ Մեր մինչև այժմ ասածները լաց ի Չամչեանից ապացուցանումեն և միւսքը։ Այս նամակից երևումէ ահա, որ Աւգերեան Մկրտիչ և Փափազեան Իգնատիոս վարդապետքը համախոհ են Չամչեանին և պաշտպանումեն նորան վատիկանի դատաստանի առաջև, ուրեմն համաձայն են Չամչեանին հաստատ մնալ Հայոց եկեղեցու ինքնօրէն եկեղեցութեան վերայ, բայց Աւգերեանի Թասսոնի թարգմանութիւնը, և Փափազեանի եկեղեցական պատմութիւնը ապացուցանումեն մի ուրիշ բան, այդ մի ողբալի բան է, նոցա կամակոր և ֆանատիկոս պապականութիւնը։ Այդ գործերի մէջ մեք հանդիպումենք նոցա որպէս իտալական ճիզվիթների, բայց ոչ աւելի։

Ի՛նչ կարելի բան է, որ մի մարդ երկու տեսակ սրտի վկայութիւն ունենայ, երբեմն այսպէս ասէ և երբեմն այլպէս։ Այո՛, մարդը չէ կարող ունենալ, բայց ճիզվիթը առատ ու հարուստ է սրտի վկայութեամբք. նա այնքան ունի և այնքան կարող է ունենալ, որքան գործ պատահել են կամ պիտի պատահեն նորան, մանաւանդ թէ այդ գործը յարակցութիւն ունենայ մի նիւթական օգտի հետ։ Ճիզվիթը մի անբարոյական էակ է, նորա համար չկայ ոչինչ սուրբ բան. նորա սուրբ բանը է նորա նպատակը, իսկ նորա նպատակը—նիւթ։ Նպատակին հասանելու համար ամենայն բան ներելի է, մարդասպանը ևս Դաւիթ և Յուդիթ է դառնում։ Իսկ թէ ինչ ամենամօտ յարակցութիւն կայ ճիզվիթների և Մխիթարեանց մէջ, այդ մասին խօսել ենք այս յօդուածի երկրորդ գլխում, քննելով Մխիթարեանց բարոյականութիւնը։

Այս տեղ մի բան ևս հարկաւոր է չթողուլ առանց յիշատակի, այսինքն թէ Մխիթարեանք տէր են իւրեանց գրած կամ տպած բանին մինչև այն ժամանակ, որ կային այդ ընկերութեան մէջ, և այդ միջոցին փոյթ չէ, եթէ գրումեն և տպումեն, թէ Հայոց եկեղեցին հերետիկոսական է, Հայերը հերետիկոս են, հերձուածող են, դժոխքի բաժին են (եկեղեցւոյ դուրս) և այլն և այլն. բայց մի այդպիսի անդամ դուրս գալով Մխիթարեան միաբանութեան միջից կամ միանալով բուն Հայկական եկեղեցու հետ և կամ վշտացած լինելով միաբանութենից, իսկոյն հրաժարվումէ իւր Հայոց վերայ գրած պարսաւից և չէ ամաչում ասել, թէ ինքը չէր այդ բանի հեղինակը, այլ յետոյ Աբբան կամ վանական ժողովն է յաւելացուցել։ Կնքենք այս գլուխը եզրափակելով, թէ Մխիթարեանց մատենագրական գործունէութիւնը ունի երկու շարժառիթ, ինչպէս ասել ենք, և այդ շարժառիթքը անմիջական հետևանք են Մխիթարեանց ճիզվիթութեանը։

(Շարունակութիւնը յետագայ տետրակներում։)

Մ. Նալբանդեանց։

ՆԱՄԱԿ ԱՌ ՀՐԱՏԱՐԱԿՈՂԸ։

Պարոն Հրատարակող Հիւսիսափայլ Օրագրի,

Արքայ Ստեփանոս Վարդապետ Եսայեան։

Շատ ծանր բան է մի մարդու համար ընդունել, եթէ նորան ցոյց տալով մի թերթ սպիտակ թուղթ, ասէին, թէ սև է այդ թուղթը, մինչդեռ այն մարդը որին ցոյց էին տալիս, ակնյայտնի տեսանումէր թղթի սպիտակութիւնը։ Այս դրութեան մէջ գտանվումենք ներկայ ժամուս մեք բոլոր Հայերս. մեզ կամին հաւատացնել, որ երկու անգամ երկուն չորս չէ, այլ մի ուրիշ թիւ, և համարեա թէ համարձակվումեն կատարեալ հաւատ պահանջել մեզանից այդ եղջերուաքաղի վերայ։ Ամենայն առողջ մարդկային դատողութեան հիմքի վերայ արժան է, որ չընդունողը այդ սպիտակ թղթի սևութիւնը, գովասանութիւն ստանար, որպէս մի ճշմարտասէր անձը. բայց արի տես, որ դարձեալ դատապարտվելու ենք մեք ստութեան սպասաւորների ձեռքով, որպէս չարագործ։ Մեր ճշմարտութիւնը է մեր դատակնիքը։ Եւ չգիտեմ, այս կերպով ո՛ր տեղ պիտի հասանի մեր ազգի բանը. ոչ ով սիրտ չունի միտ դնել ճշմարտութեանը, փոքր ի շատէ պատուել դորան. աշխարհի թերութիւնքը, որ ցիր և ցան երևումեն ուրիշ ազգերի մէջ, այս րոպէիս ասես թէ հաւաքված են մի տեղ մեր ազգի մէջ. դարձեալ չափվումէ ճշմարտութիւնը բարեկամութեան և թշնամութեան չափով, դարձեալ մի իշխանաւորի, մի հարստականի պաշտպանութիւն, տեսարանական խաղէութեամբ, երևումէ որպէս մի կատարելութիւն։ Արդեօք լուսանալո՞ւ է միանգամ առողջ բանականութեան օրը և մեր ազգի վերայ, թէ դատապարտված ենք մեր սրտի ցաւով հանդերձ գլորվել անմխիթար դէպ ի գերեզմանի խորքը։ Ճշմարիտ, նայելով Հայոց ազգի բաների ընթացքին, ասես թէ վերջինս աւելի հաւանական էր։

Շատ անգամ զանցառու է լինում մարդ խօսել մի ապիրատութեան վերայ, որովհետև ձանձրանումէ վերջապէս լեղի խառնելով իւր կեանքի մէջ ամենայն օր, բայց այդ լռութիւնը չարաչար գործ դնե[illegible] ուրիշները, աշխատումեն դեռ ևս յանցանքը առաքինութիւն քա-

բողել․ ով մարդ է, թող դիմանայ այս բանին։ Գիտեմ դարձեալ պիտի բամբասվիմ այս նամակիս պատճառով, մի քանի պարոնների կողմից, բայց գոնէ և շատերի սրտից լսելու եմ ձայնակցութիւն, որ միակ մխիթարութիւն է մնացել մեր համար։

Որ մի անհիմն կարծիքի ընդդէմ զինուորվիս, որ մի ապիրատութիւն դատապարտես, բայց և որ մինի մասին զանցառու լինիս․ դոցա տեղը շատ է․ բոլորովին լռել մնալ չէ կարելի, այդ բաները գործվումեն մեր ազգի մէջ․ իսկ մեք ազգի անդամ ենք և չենք կարող մեզ օտար համարել ազգից, չենք կարող անուանել մեզ մի մասնաւոր, կտրած ու բաժանած անձն ամբողջի կազմածից։ Ազգի վնասը և օգուտը աւելի մեծ կշիռ ունի մեր աչքում քան թէ մեր անձնականը․ գիտեմ, որ դուք ևս, մեծապատիւ Հրատարակող, սպասաւոր էք այդ ուսմանը․ ձեր անկաշառ ճշմարտապաշտութեան արձանքը կառուցած են ահա ձեր անմահ աշխատութենների մէջ։

Իշխանութիւն կա՞յ ձեռքումդ, հարուստ ես, ուրեմն ամենալաւ, ամենապատուելի մարդը դու ես Հայերի մէջ․ զարկի՛ր, խեղդի՛ր, հալածի՛ր, ինչ կամիս արա, անդատապարտ ես․ որովհետև հարուստ կամ իշխան լինելով, արդէն քո կողմը գրաւել էիր Հռովմի պապի անմեղանչականութիւնը։ Քեզանից զարկվողը, խեղդվողը և հալածվողը է մեղաւոր և դատապարտելի․ դու դեռ ազգասէր անունն ևս կը ժառանգես Հայերից, որ, երկար ժամանակ ստրկութեան մէջ մնալով և ստրկութիւնը դոցա համար երկրորդ բնութիւն դառնալով, ձանձրանումեն, եթէ մի րոպէ պակասումէր նոցա գլխից որ և իցէ բռնաւորի գաւազան։

Մինչև այսօր մեր ազգի մէջ հրապարակախօս բերան չլինելով, պաշտպանութիւն է գտել, անպատիժ է մնացել ամենայն տեսակ վատթարութիւն, անկարգութիւն․ ոչինչ չէ խօսվել, ոչ ոք չէ ընկել գրչի դատապարտութեան տակ։ Բայց պիտոյ է մի օր դուրս գալ այս խաւար դրութեան միջից, պիտոյ է ճանապարհ տալ հրապարակախօսութեանը և մեր ազգի մէջ։ Փառք Աստուծոյ, կայ այժմ մեր մէջ մի հասարակաց բերան—Հիւսիսափայլը, Ձեր և մեր Նուիրականը, թող նա կատարէ այդ պաշտօնը, թող նա լցուցանէ իւր վեհ կոչման պարտքը, լինելու ազգային դաստիարակութեան սպասաւոր․ թող խօսէ նա անդադար, թող բարձր ձայնով քարոզէ նա և լաւը և վատը, թող շնորհակալ լինի լաւի համար, բայց և չմոռանայ դատապարտել վատը և խոտելին։ Թող վերջապէս ազնիւ սրտերը, որ գտանվումեն Հայոց ազգի մէջ, մի փոքր մխիթարվին տեսանելով վատթարութեան դատապարտվիլը բանականութեան ատենի առաջև։ Թող և չարագործ և եղեռնագործ մար-

դիկ զգաստանան տեսանելով, որ մի անմերժելի ձայն հետեւումէ նոցա քամակից, մտանումէ նոցա հետ նոցա ամենածածուկ խորհուրդների մէջ և նոցա միմեանց ականջին խօսածը քարոզումէ տանիքների վերայ։ Դարձեալ փառք Աստուծոյ, որ մեր ազգի մէջ գտանվեցան այնքան ազնիւ մարդիկ, որ ցանկացան մի հասարակաց բերան ունենալ ազգի համար, մի հրապարակական դատաստան, որ միօրինակ յարաբերվումէր և դէպ ի բարեկամը և դէպ ի թշնամին։ Մեք երջանիկ ենք քան թէ մեր հարքը և պապերը, որովհետև չէին կարողացել նոքա իւրեանց օրերում հոգալ մի այսպիսի անաչառ և մաքուր բերան իւրեանց ցաւերի և ուրախութենների համար։

Շատերին յայտնի է, թէ այս բաները, որ այժմ խօսումեմ ձեր հետ, մեք միշտ խօսած ենք առանձնապէս. բայց թէ ի՞նչ է պատճառը, որ ստիպված եմ դէպ ի լոյս հրապարակի հանել այս բաները Հիւսիսափայլի ձեռքով, կ՚իմանաք իսկոյն, մանաւանդ որ խօսելու բանս շատ ծանօթ է ձեզ։

Քաջ յայտնի է Ձեզ, մեծապատիւ Պարոն, որ Նոր Նախիջևանի եկեղեցիք արծաթի հաշիւ ու դատ ունէին Պ. Խալիբեանց աստիճանաւորի հետ, յայտնի՛ է Ձեզ, որ այդ դատը վարումէին եկեղեցիք, այս վիճակի նախկին թեմակալ, այժմեան Աստրախանի վիճակի իշխան, Սրբազան Մատթէոս Արքեպիսկոպոսի ձեռքով, յայտնի է Ձեզ, որ Պ. մինիստրի հրամանով և Նորին Սրբազնութեան արքեպիսկոպոսի կարգադրութեամբ առանձին ժողով էր կազմված, Նախիջևանի հասարակութենից ընտրված պարոնների ձեռքով, որոնց պարտականութիւն էր Պ. Խալիբեանցի, 1848 և 1851 թուականներում թեմակալ առաջնորդին տուած, մատեանների հիման վերայ հաշիւ տեսանել այդ պարոնի հետ և տեղական Մագիստրատի գործակցութեամբ յետ պահանջել այդ եկեղեցական արծաթագլուխը։ Ձեզ յայտնի է, որ ժողովը 1856 և 1857 թուականներում օրինաւոր պարտք հաշուեց Պ. Խալիբեանցի վերայ, մօտ հարիւր յիսուն հազար մանէթ արծաթ (150,000), և օրինաւոր կերպով փականք դրեց Պ. Խալիբեանցի անշարժ գոյքերի վերայ, որ և Պարոն մինիստրը օրինաւոր ճանաչելով, քանի քանի անգամ գրեց Պայծառափայլ Ստրոգօնով կոմսին, որ թելադրէ Տագանրօգու քաղաքապետին հարկադրել Պ. Խալիբեանցին իւր եկեղեցական պարտքը հատուցանելու մասին։ Ձեզ յայտնի է, նոյնպէս, թէ ինչպէս խափանվեցաւ մի ժամանակ այդ գործի ընթացքը Ներսէս կաթողիկոսի ներս մտանելով այդ գործի մէջ և Պ. Խալիբեանցի անհիմն բողոքներով, որոնց այն ժամանակի քաղաքապետը տեղիք էր տալիս մեծ

պաշտպանութեամբ։ Այսքան բանը Ձեզ յայտնի լինելուց յետոյ, նոյնպէս պիտի յայտնվի իւր կարգով, թէ ինչ կերպով, որպէս թէ, վերջանում է այդ դատը և ինչ ընթացք է ստանում գործը, որին մի մասնով տեղեկացած կը լինիք մինչև այժմ։ Բայց այդ գործի վերջաւորութեան վերայ խօսելուց յառաջ, մեր ազգի ընդհանուրի տեղեկութեան համար, հարկաւոր է խօսել այդ գործի սկզբի վերայ, որ է, այդ արծաթագլուխների անցանելը դէպ ի Պ. Խալիբեանցի ձեռքը։

Չկամինք այս տեղ յիշել թէ Ներսէս կաթողիկոսը իբրև վիճակաւոր առաջնորդ 1832 մինչև 1844 թուականը ի՞նչ յարաբերութիւն է ունեցել Պ. Խալիբեանցի հետ. այդ մի երկար, թէև հարցասիրութեան արժանի, պատմութիւն է, որ հասել է մեզ նոյն կաթողիկոսի ձեռագիր նամակներով, որ ուղղած էին դէպ ի Նախիջևանի Հոգևոր կառավարութիւնը, Քաղաքական խորհրդարանը և դէպ ի Պ. Խաչատուր Մկրտչեան Խումաձեանը։ Գուցէ մի այլ ժամանակ, բոլորովին այլ հանգամանքների մէջ..... երևին այդ նամակները և մեր ազգը աւելի մանրամասն ծանօթութիւնք ստանայ շատ բաների մասին, որ մինչև այժմ այլապէս էր ճանաչել։ Այո, մեք խոստանումենք այդ, եթէ յաջողի մեզ տպագրական մամուլի տակ ձգել մի ժամանակ «մեր տեսած ու լսածը», որ բովանդակումէ իւր մէջ մեր ազգի ժամանակակից ճիշդ պատմութիւնը։ Այսքան պիտի ասել, որ 1844 թուականին Ներսէս արքեպիսկոպոսը կաթողիկոսացած, Պետերբուրգից Քիշինեվ վերադառնալով, գրաւոր յանձնարարութիւն արեց Պ. Խալիբեանցին ժողովել եկեղեցական ցիր և ցան արծաթագլուխքը և կարգի բերել այդ բոլորը մինչև իւր գալը։ Այդ նամակով հաշտվել էր կաթողիկոսը Պ. Խալիբեանցի հետ. պատճառ, փոխել էր իւր յարաբերութիւնը Պ. Խումաձեանի և Սէթեան Խաչատուր աւագ քահանայի հետ......

Եւ ահա Պ. Խալիբեանցը հաւաքեց այդ արծաթագլուխքը.... և երբ 1845 թուականի հոկտեմբերին, կաթողիկոսը Էջմիածին գնալով հանդիպեցաւ Նախիջևան, նորա բարեկամութիւնը Պ. Խալիբեանցի հետ ամրացաւ կրկին կապով։ Հաւաքված եկեղեցական արծաթի որքանութիւնը յանձնվեցաւ վերստին Պ. Խալիբեանցին, վերատեսուչ նշանակվեցաւ նա եկեղեցական գործերի, երեսփոխանքը հրաման ստացան նորան հաշուցանել այնուհետև եկեղեցիների տարեկան եկամուտքը, նորա ձեռք յանձնվեցաւ Սուրբ Խաչ վանքի կառավարութիւնը, նորան հրամայվեցաւ ստանալ մոմի մենավաճառութեան տարեկան գինը։ Այս կերպով Պ. Խալիբեանցը դարձաւ մի տեղակալի կամ փոխանորդի նման բան մինչև 1848 թուականը։ Պիտի ասել որ այդ թուականը ևս Պ.

Խալիբեանցի ոսկեղէն տարիներից մինն էր, որովհետև շատ յաջողակ էր նա և որպէս քաղաքագլուխ (*)։

1848 Թուականի ապրիլի 7-ին Նախիջևան եկաւ նորնշանակուած թեմակալ առաջնորդը և տեղեկանալով Հոգևոր կառավարութենից, թէ մօտ իբր եօթանասուն հազար մանէթ եկեղեցական արծաթ գտանւում Պ. Խալիբեանցի կառավարութեան տակ, շատ անգամ լսեց ժողովրդի բերանացի գանգատը և գրաւոր խնդիրը այդ արծաթագլուխը օրինաւոր կերպով տնօրինելու մասին։ Թէպէտ վիճակաւոր արքեպիսկոպոսը ուղղակի պարտական էր, որպէս լիակատար թեմակալ առաջնորդ, իսկոյն հաշիւ պահանջել Պ. Խալիբեանցից եկեղեցական արծաթագլխի մասին և տնօրէնութիւն գործել ինչպէս հրամայում էին օրէնքը (§§ 48, 119 ԳԵՐԱԳՈՅՆ բանիւ հաստատեալ կարգադրութեան 1836 Թ. վասն Ռուսսիայի մէջ Լուսաւորչական Հայոց եկեղեցական գործերի կառավարութեան, 451 ст. IX т. Св. Зак. 1842 изд.), բայց լաւ ուսած լինելով Կաթողիկոսի ինքնիշխան և անպատասխանատու բնաւորութիւնը, թուղթ գրեց և հարց արեց Կաթողիկոսից այդ արծաթագլխի մասին։ Կաթողիկոսը, 1848 Թուակ. յունիսի 20-ից 160 համարով, կոնդակ է գրում և մեղադրում վիճակաւոր արքեպիսկոպոսին, «թէ ի՛նչպէս կարողացար դու մտածել, որ Ներսէս Կաթողիկոսը արծաթ կարող էր տալ մի մասնաւոր մարդու։» Այսպիսի հանգստեան շարականից յետոյ պարտականութիւն է գնում արքեպիսկոպոսի վերայ յայտնել ինքեան, թէ «ուստի՛ գիտէր նա, և ո՛վ էր ասել նորան, թէ Ներսէս Կաթողիկոսը եկեղեցական արծաթ է տուել ում և իցէ։»

Այս իրողութենից յետոյ, արքեպիսկոպոսը պահանջեց Պ. Խալիբեանից հաշիւ և Կաթողիկոսի յանձնարարական գիրը, որի մասին ասել էր Պ. Խալիբեանցը թէ ունի։ Պ. Խալիբեանցը երկու ամիս ժամանակ կորուսանելուց յետոյ, տուեց առաջնորդին իւր հաշիւը 1848 Թուակ. յուլիսի մէջ. բայց ցոյց չտալով իւր կոնդակը և առանց առաջնորդի գիտութեան քանդեց Սուրբ Խաչ վանքի սենեակները և Սուրբ

(*) Պ. Խալիբեանցը 12 տարի վարեց քաղաքագլխի պաշտօն, առանց ենթարկվելու հասարակութեանը, և առանց հաշիւ տալու, որի գործը մինչև այսօր դեռ ևս չէ վերջացել և Պ. Խալիբեանցը մինչև այսօր դեռ ևս իւր տնտեսութեան հաշիւը չէ տուել հասարակութեանը. այս տեղ ևս հասարակութիւնը մեծ պահանջելիք ունի։ Չեմ ասում դեռ ևս այն, որ այդ Պարոնը հասարակութեան հողի վերայ շինուածք շինելով ինքեան էր սեփհականել, պատճառելով թէ տասնամեայ հնութիւնը (десятилѣтняя давность) անցել է և ոչ ոք պահանջել չէ այդ տեղերը. ո՞վ կարող էր պահանջել մինչդեռ ինքն էր քաղաքագլուխ։ Անցեալ 1857 թուականին կառավարութեան կողմից կօմիտեա նշանակվելով պարտաւորվեցաւ Պ. Խալիբեանցը, բայց այդ գործը դեռ ևս չէ աւարտվել։

Թէոդորոս եկեղեցու պարիսպը, պատճառելով թէ նորուց կամի շինել։ Առաջնորդը բողոքում է կաթողիկոսին Պ. Խալիբեանցի այսպիսի ընթացքի վերայ, բայց կաթողիկոսը, փոխանակ մի պարզ բան գրելու, լցնում է կոնդակը սուրբ գրքի վկայութիւններով, շարականներով և առածներով և նախատում է արքեպիսկոպոսին, բայց այս անգամ այն պատճառով, թէ ինչպէս համարձակվել է առաջնորդը հաշիւ պահանջել Պ. Խալիբեանից այն արծաթագլխի համար, որ ինքը, միլլիոնաւոր Հայերից ընտրած ընդհանրական Պատրիարգը, յանձնել էր իւր հարազատին......

Ահա սկիզբը և արմատը այն վէճի, որի վերայ հարկադրված ենք խօսել։ Սորանից ահա յառաջացաւ մահով միայն վերջացած ատելութիւնը կաթողիկոսի դէպ ի վիճակաւոր Մատթէոս արքեպիսկոպոսը։ Առաջնորդը ոչինչ կերպով չկարողանալով օգնել այս ցաւին, գոնէ կարգադրեց և սաստկապէս պատուիրեց երեսփոխաններին, որ եկեղեցական տարեկան եկամուտքը միւս ևս չհասուցանեն Պ. Խալիբեանցի ձեռք, և այնուհետեւ օրէնքի հիման վերայ այդ բոլոր եկեղեցական արծաթքը մտան արքունի գանձարան։ Բայց ինչ արժեց առաջնորդին այս կարգը սահմանել, թէ ինչ որոգայթներ լարեց Պ. Խալիբեանցը իւր համախոհերի ձեռքով, որոնք քարողումէին ժողովրդին, թէ Արքունի գանձարան մտած արծաթը միւսանգամ յետ չէ ստացվում...... Միանգամ չորս պարոններ գրով խնդրեցին առաջնորդից, որ սա Արքունի գանձարան չուղարկէ եկեղեցական արծաթը, այլ այդ պարոնների հետ միասին կնքեն մի արկղի մէջ, իսկ այդ պարոնները ամէնայն տարի կնքված արծաթի համար վճարեն օրէնքով սահմանված տոկոսիքը։ Այս խնդրագրի մասին յառաջացած գործը Նախիջևանի Մագիստրատի մէջ մինչև այսօր մնացած է անկատար։ Այս պարոնների խորհուրդը էր, արծաթը փակելով ու կնքելով, ժամանակ շահել, որ Պ. Խալիբեանցը կարողանայ մի սաստիկ հրաման բերել տալ առաջնորդի վերայ, որպէս զի արծաթը չընկնի Արքունի գանձարան։

Միջոց անցաւ քանի մի տարի, կաթողիկոսի և Առաջնորդի միմեանց մէջ յարաբերութիւնքը օր ըստ օրէ թշնամական դարձան Պ. Խալիբեանցի և Ջալալեանց Սարգիս վարդապետի շնորհքով, որոնց գրաւոր ապացոյցքը տեսած ենք իւր ժամանակին.......Առաջնորդը ստիպվեցաւ թողուլ Պ. Խալիբեանցի մօտ գտնված եկեղեցական արծաթի գործը առանց ուշադրութեան, թէև երբեմն խօսք ու զրոյց յառաջանումէր այդ մասին Պ. մինիստրի հետ։ (կոմս, Լեվ Ալէքսէեվէչ Պերովսկու հետ)։

Վերջապէս Նախիջևանի հասարակութիւնը 1855 թուականին խնդիր տուեց իւր առաջնորդին, պահանջել Պ. Խալիբեանից որպէս եկեղեցական արծաթի հաշիւները, նոյնպէս և նոյն իսկ արծաթը. բայց Առաջնորդը, ձանձրացած լինելով կաթողիկոսի հետ ասպարէզ մտանելուց, թողեց այդ ժողովրդական խնդիրը առանց ուշադրութեան: Բայց ժամանակը հասել էր, որ ընթացք ստանայ այդ գործը և այդ ընթացքը ստացաւ շուտով հետևեալ կերպով: Ներսէս կաթողիկոսը վաղուց ահա 1852-ից և աւելի ևս յառաջ խլել էր առաջնորդի ձեռքից բոլոր նորա իշխանութիւնը, ոչինչ բանով չէր երևում արքեպիսկոպոսի առաջնորդութիւնը բաց ի նորանից, որ եկեղեցում յիշումէին նորա անունը: Այս բաների վերայ յաւելացուց կաթողիկոսը պահանջել առաջնորդից և այն եկեղեցապատկան արծաթքը, որ 1848 թուականից յետոյ գոյանալով դրված էին արքունի գանձարան: Կաթողիկոսը առանց առաջնորդի գիտութեան, հրաման գրեց թեմական հոգևոր ատենին (կոնսիստորիային), որ սա առանց իւր առաջնորդի վճռին սպասելու հաւաքէ բոլոր եկեղեցական արծաթքը և հասուցանէ Պ. Խալիբեանցին, որպէս զի կարողանայ ընդհանուր հաշիւ տեսանել սորա հետ: Ծիծաղելի պատճառ. ի՛նչ հարկաւոր է Խալիբեանցի հետ հաշիւ տեսանելու կամ եկեղեցական արծաթի որքանութիւնը իմանալու համար, գանձարանում գտնված արծաթը ևս տալ Պ. Խալիբեանցին. այդ մի նոր հաշուատեսութեան եղանակ էր, մի միայն Ներսէս կաթողիկոսին սեպհական:

Թեմական ատեանը, որ այն միջոցին գտնվումէր Բէկնազարեան Յովհաննէս վարդապետի ազդեցութեան և կառավարութեան տակ, այն վարդապետի, որ խաչի էր սպասում Ներսէս կաթողիկոսից Սարգիս վարդապետի և նորա տիրացուի բարեխօսութեամբ, ինչպէս ինքը կաթողիկոսը գրեց այդ խաչը տալով, իսկոյն տնօրինեց ուղարկել իւր մօտ գտնված թղթերը գանձարանի և արծաթքը, այլև առաջարկեց Առաջնորդին, որ սա ևս հասուցանէ Պ. Խալիբեանցին այն արծաթքը և գանձարանի տոմսակները, որ գտնվումէին նորա մօտ:

Միճակաւոր արքեպիսկոպոսը, տեսանելով, որ չափից դուրս գնումէ բանի համը, յայտնեց այս բոլոր իրողութիւնը Պ. մինիստրին կցորդելով և Նախիջևանի հասարակութեան բողոքը և խնդիրը, որ էր պահանջել Պ. Խալիբեանից թէ նորա մօտ եղած արծաթների հաշիւը և թէ նոյն իսկ արծաթքը: Այլև խրատ ու պատուէր խնդրեց Տէրութեան մինիստրից թէ ինչպէս արժան էր ինքեան վարվիլ, որովհետև իւր անմիջական իշխանի հրամանը համաձայն չէր Տէրութենական օրէնքներին:

Պ. մինիստրը վերահասութիւն գործելով այս բաներին առաջարկեց առաջնորդին (1856. ապրիլին) ոչ միայն չտալ Պ. Խալիբեանցին 1848 թուականից յետոյ գոյացած եկեղեցական արծաթքը, այլև հին արծաթագլուխը ևս պահանջել նորանից օրինաւոր ճանապարհով. այս մասին ինքը մինիստրը հրաման արձակեց դէպի Նոր Ռուսսիայի և Բեսսարաբիայի կուսակալը օգնել վիճակաւոր արքեպիսկոպոսին, եթէ Պ. Խալիբեանցը կամենար ընդդիմութիւնք գործել։ Ահա այս մինիստրական կարգադրութեան հիման վերայ, Առաջնորդը առաջարկեց Նախիջևանի հասարակութեանը վեց պատուաւոր մարդ ընտրել իւրեանց միջից, որ տեղական Մագիստրատի մասնակցութեամբ, քննելով Պ. Խալիբեանցի հաշիւները, պահանջեն և ստանան նորանից եկեղեցապատկան արծաթքը։

Հասարակութիւնը միաբան հաւանութեամբ ընտրեց իւր միջից որպէս վկայեալ արժանաւոր մարդիկ Պ. Կարապետ Մարգարեան Հայրապետեանցը, Պ. Դանիէլ Թորոսեան Քարաքաշը, Պ. Գրիգոր Կարապետեան Սալտիկեանցը, Պ. Պետրոս Դանիէլեան Սախաւեանցը, Պ. Յակոբ Ստեփանոսեան Հալլաճեանցը և Պ. Յովհանն Գողբետլեանցը։ Ահա այս պարոնները Նախիջևանի Մագիստրատի գործակցութեամբ (*) քննելով հաշիւները պարտաւորեցին օրինաւոր կերպով Պ. Խալիբեանցին, վճարել եկեղեցուն մօտ 150,000 *մանէթ արծաթ, և այս պահանջողութիւնը ապահովելու համար, օրէնքի հիման վերայ փականք* (sequester) *դրեցին Պ. Խալիբեանցի անշարժ գոյքերի վերայ։*

Չկամինք այս տեղ երկարաբանել այն անցքերի մասին, որ անցան այդ վճռից մինչև առաջնորդի փոփոխութիւնը, այդ բաները կը տեսանէ ազգը այն մեր աշխատութեան մէջ, որ յիշեցինք միանգամ այս նամակումս. այլ այսքան պիտոյ է ասել, որ Պ. Խալիբեանցը ստիպվելով Մագիստրատի պահանջողութենից հասուցել էր նորան մօտ իբր 62,000 *մանէթի մուրհակներ* (?) *որ և մնացել էին Մագիստրատում մինչև առաջնորդի փոփոխութիւնը։*

Առաջնորդը փոխվեցաւ.....վիճակային գործերի կառավարիչ գերապատիւ Այվազովսկի Գաբրիէլ վարդապետը գնաց Նախիջե-

---

(*) *Այդ միջոցին Մագիստրատի նախագահ էր Պ. Քարաքաշ, Մանուէլ Դանիէլեան ազգասէր և իրաւագէտ ազնուականը։ Այս ազնուասիրտ և ազնուահոգի Պարոնի փոփոխութիւնը, այնպիսի միջոցում, երբ վարումէր Մագիստրատի մէջ եկեղեցական գործը, շատ վնասակար եղաւ եկեղեցուն. թող թէ ընդհանրապէս վնասակար քաղաքին, որովհետև նորա նման մարդ երբէք նախագահ տեսանելու չէ իւր մէջ Նախիջևանի Մագիստրատը։*

ւան․․․․․ստացաւ Մագիստրատից 62,000 մանէթի մուրհակները և հրատարակեց Գ․ Խալիբեանցը պարտապանութենից ազատ։

Գ․ Խալիբեանցը 62,000 մանէթի մուրհակներով ազատվելով մօտ 200,000 մանէթ պարտքից, տուեց գերապատիւ վարդապետին այլ ևս 50,000 մանէթ, բայց ոչ որպէս պարտական վճար, այլ որպէս պարգև ու ընծայ Թէոդոսիայի մէջ դպրոց շինելու համար․ բաց ի սորանից 20,000 մանէթ նշանակեց Նախիջևանի մէջ հիմնարկելի հոգևոր դպրոցի անունով։ Այս գործողութենից յետոյ Գ․ Խալիբեանցը հրատարակվեցաւ ազգասէր, գովվեցաւ, օրհնվեցաւ, բարեբանական տաղեր լսեց և վերջապէս արժանացաւ Մեղուի ջատագովութեանը։

Ես կը ցանկանայի իմանալ թէ ո՞ր բանական Հայը մեր մէջ յանձն կ՚առնուր պահ տալ մեզ 200,000 մանէթ արծաթ, այնպէս, որ մեք դորա երեք քառորդը յետ տայինք նորան դպրոց շինելու համար, բայց այն պայմանով, որ մեր տուածը պարգև համարէր նա, այլև փառաւորէր մեր անունը որպէս մի ազգասէր հոյակապ մարդու անուն․ բայց կարծեմ որ այդ մի կարելի բան է, մանաւանդ որ դա մեր օրերումը հաստատվեցաւ մի ստոյգ և իրական օրինակով․ պարտապանը երեք քառորդաչափով պարտավճար գտանվելով միայն, բայց նորա ընկերքը պարգևատու, առաքինի, հոյակապ ազգասիրի անունով փառաւորեցին նորան։ O tempora, o mores!

Մեղուն հրատարակեց միանգամ Գ․ Խալիբեանցի այս կարծիքական նուիրագործութիւնը, իսկ այժմ դարձեալ, 39-երորդ համարի մէջ, խօսումէ այդ մասին Թէոդոսիայի դպրոցի բացվելու պատճառով։ Մեղուն մատնացոյց է առնում Գ․ Խալիբեանցը որպէս մի ազգասէր մեծատուն, կամենալով որպէս թէ ասել, դուք որ բամբասումէք մեր մեծատունքը, տեսէք ահա ինչ գործեր են կատարում նոքա․ յայտնի բան է, որ Մեղուն իւր սովորական կերպով նայումէ գործի արտաքին ձևին, բայց ոչ ներքին իսկութեանը, կամաւ և գիտութեամբ թէ ակամայ և անգիտութեամբ, մեզ յայտնի չէ, միայն այս է ճշմարիտը, որ եկեղեցական գումարի պարտականը համարվումէ ազգասէր և ընծայաբեր․ նա, որ 62,000 մանէթ մուրհակներից և 70,000 մանէթ գումարից, որ ոչ որպէս պարգև, այլ որպէս վճար իւր պարտքին տալու լինէր, դարձեալ մնալու էր այս րոպէիս մօտ իբր 70,000 մանէթ պարտական։

Այդ սուտ սուտ գովասանութեններով կամենումեն, ինչպէս կարծումենք, ջնջել այդ գործի յիշատակը Նախիջևանի հասարակութեան սրտից․ բայց սխալ տեսութիւն է, այդ բանը առաւել ևս ղայրացնումէ նորանց և անտարակոյս պատճառ է դառնալու մի մեծ և ընդհանրական

բողոքանքի դէպ ի Նոր Կաթողիկոսը, որին կարծում էինք թէ մասնակից կը լինի և Նախկին առաջնորդը այժմեան Աստրախանի, Թեմակալ Մատթէոս արքեպիսկոպոսը. պատճառ, արատաւորվեցաւ այս ընթացքով, և Նորա և Նախիջևանի Հասարակութենից ընտրված պարոնների պյրական պատիւը։

Ազգը կոպէկ կոպէկ հաւաքել է այդ արծաթը, շատ անգամ մի տառապեալ այրի վերջին կոպէկը կտրելով իւր որբերի բերանից ձգել է եկեղեցու գանձանակը, իրաւունք է որ այդ արծաթը անհետանայ դարնան ձիւնի պէս և դորա պատճառը ազգասէր քարոզվի բերանով և գրչով։ Թող տեսանէ մեր պատուելի ազգը, թէ միշտ լուռ ու մունջ մնալը, թէ Նորա դատապարտելի լռութիւնը ինչ բաների ծնող մայր է դառնում. թող տեսանէ ազգը, թէ ինչ բաներ էին անցանում իւր մէջ, թող և Նախիջևանի Հասարակութիւնը ճաշակէ այս աղօխի տոխպ բաժակը, որպէս առատ բերք իւր անմիաբանութեան այգուն։

Եթէ այս մեր գրած բաների մէջ կայ մի տառ ևս սուտ, թող ապա հանդէս գան մեր հակառակորդքը և ապացուցանեն մեր ասածի ընդդէմը. բայց մէք ունինք մեր վկայքը. ցանկացողքը կարող են այս մասին լիակատար ծանօթութիւն ստանալ Նախասացեալ ժողովի անդամներից Աստրախանի Թեմակալ արքեպիսկոպոսից և Էջմիածնի սրբազնագոյն Սինոդոսից։ Գուցէ մեր ասածները մի ժամանակով հաստատվին և Եկատերինոսլավի Քաղաքական Պալատի և Կառավարող Ծերակուտի ութերորդ բաժնի ձեռքով։ (Екатеринославская Гражданская Палата и 8-й Департаментъ Правительствующаго Сената).

Եթէ ազգը Մեղու լրագրի մէջ կարդաց այս գործի արտաքին ձևաւորութիւնը, թող և Հիւսիսափայլի մէջ տեսանէ Նորա Ներքին կազմակերպութիւնը. եթէ առաջինը կարողացաւ երկու անգամ նիւթ լինել լրագրի, թող և վերջինս միանգամ օրագրի նիւթ դառնայ, որպէս զի ազգը մոլորութեան մէջ չմնայ այս մասին, այլ կարդալով և այն և այս, մաքուր խղճմտանքով և լուսաւոր բանականութեամբ դատաստան կատարէ։

Շատ բաներ ունէինք դեռ ևս գրելու, բայց հաւատացէք, մեծապատիւ Հրատարակող, որ սիրտ չկայ մեր վերայ, ո՛ր մինը գրես, ո՛ր մինը ողբաս, կամ, ո՛ր մինը արտասուես։ Ամենակալ Տէրը թող բանայ մեր ազգի աչքը, որ դա կարողանայ վերջապէս ճանաչել իւր օգուտը և վնասը և խաղալիկ չդառնայ ամեն մի մարդու ձեռքում։

Երանի թէ Նախախնամութիւնը մի այսպիսի անմխիթար դրութիւն էր պատրաստել մեր համար, որ ամենայն օր մորմոքվէինք և կսկծէինք

մեր ազգի պակասութեանների վերայ, բայց մինչև ե՛րբ, ի՛նչքան երկար, մինչև ե՛րբ այսպէս. անվերջ մտածութիւն . . . . . .

Աւելորդ ենք համարում մէջ բերել այս տեղ Մեղուի հրատարակողի խօսքերը և կարծիքները, որ տպած էին Մեղուի 39 համարի մէջ. պատճառ շատ անկշիռ և ստորին բաներ են նոքա, ուրեմն և անարժան ամենևին խօսակցութեան նիւթ դառնալու։

Խնդրեմ ընդունել իմ անկեղծ յարգութիւնը, որով ցանկամ մնալ,

ԱՐԳՈՅ ՊԱՐՈՆ,

անխարդախ բարեացակամ Ձեր

Մ. Նալբանդեանց։

11 Հոկտ. 1858.

Մոսկվա։

1. Հիւսիսափայլ օրագիրը ամիս ամիս դուրս գալով, պարունակելու է իւր մէջ ճառեր ընդհանուր Երկրագիտութեան, ընդհանուր Պատմութեան և Աշխարհագրութեան, այլև մանաւորապէս Հայրենական պատմութեան և աշխարհագիտութեան վերայ:

2. Բնագիտական ճառեր, այսինքն բնութեան օրէնքների և գոյա գործադրութեան վերայ մարդուս օգտի համար, ճառեր զանազան փիզիքական յայտնագործութիւնների, հասարակախօս Աստեղաբաշխութեան, քիմիայի, Հանքաբանութեան և ֆիզիօլօգիայի վերայ. այլև բանախօսութիւն տունկերի, գիտութեան արժանի բոյսերի, նոցա տնկարկութեան և օգտի վերայ, վերջապէս կենցաղօգուտ գիւտերի և յայտնագործութիւնների մասին:

3. Բարոյական, գեղեցիկ բանասիրական ճառեր, առաւել ընտիր մտածութիւնք և զգայողութիւնք թէ ստանաւոր և թէ արձակ ոճով. Թարգմանութիւնք հին հայկական, և հին ու նոր եւրոպական մատենագրութենից. այլև Կրիտիկայք (ուսումնական քննութիւնք) նորատիպ հայերէն գրուածների վերայ:

Ցանկացողքը ստանալ այս օրագիրը կարող են հասուցանել իւրեանց խնդիրը կամ ուղղակի հրատարակողին Մոսկվայի մէջ այսպէս. въ Редакцію Армянскаго Журнала «*Сѣверное Сіяніе*», въ Москвѣ, на Черногрязкѣ, въ домѣ Статскаго Совѣтника С. Назарьянца. կամ թէ Մոսկվայի նամակատանը այսպիսի հասցէով. въ Газетную Экспедицію Московскаго Почтамта.

Տարեկան 12 տետրակների գինը է 8 մանէթ Մոսկվայի մէջ, բայց ուրիշ քաղաքների համար 9½ մանէթ:

Печатать позволяется. С. Петербургъ, Октября 20-го, 1858 года.

Цензоръ Палаузовъ.